

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

Ուղեցույց
Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ

Արդար դատաքննության իրավունք
(քրեաիրավական հայեցակետ)

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Սույն փաստաթուղթը (կամ դրա թարգմանությունը) տպագիր կամ առցանց վերարտադրել ցանկացող հրատարակողներին կամ կազմակերպություններին խնդրում ենք կապ հաստատել publishing@echr.coe.int հասցեով՝ հետագա ցուցումներ ստանալու համար:

Սույն ուղեցույցը պատրաստվել է Իրավախորհրդատուի գրասենյակի Հետազոտությունների և գրադարանի բաժնի կողմից և պարտադիր ուժ չունի Դատարանի համար: Վերջնական տեքստը պատրաստվել է 2013 թվականի դեկտեմբերի 31-ին. այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Փաստաթուղթը ներբեռնման համար հասանելի է հետևյալ հասցեով՝ www.echr.coe.int (Case-Law — Case-Law Analysis — Case-Law Guides):

Հրապարակումների հետ կապված թարմացումների համար հետևե՛ք Twitter-ում Դատարանի հաշվին հետևյալ հասցեով՝ https://twitter.com/echrpublication:

Սույն թարգմանությունը, որի համար պատասխանատու է բացառապես թարգմանիչը, հրատարակվում է Եվրոպայի խորհրդի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ համաձայնեցմամբ:

© Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2014 թ.:

Բովանդակություն

Նշում ընթերցողին 7

I. Գործողության ոլորտը. «քրեական մեղադրանք» հասկացությունը 9

Ա. Ընդհանուր սկզբունքները 9
Բ. Ընդհանուր սկզբունքների կիրառումը 10
1. Կարգապահական վարույթը 10
2. Վարույթներ վարչական, հարկային, մաքսային, ֆինանսական և մրցակցային իրավունքի ոլորտներում 12
3. Քաղաքական բնույթի հարցերը 13
4. Վտարումը և հանձնումը 13
5. Քրեական վարույթի տարբեր փուլերը, օժանդակ վարույթները և դրանց հետևող իրավական պաշտպանության միջոցները 14

II. Դատարանի մատչելիության իրավունքը 15

Սահմանափակումները 16
1. Խորհրդարանական անձեռնմխելիությունը 16
2. Ընթացակարգային նորմերը 17
3. Նախկինում կայացված որոշումները կատարելու պահանջը 17
4. Այլ սահմանափակումներ, որոնք հանգեցնում են դատարանի մատչելիության իրավունքի խախտման 18

III. Ընդհանուր երաշխիքներ. ինստիտուցիոնալ պահանջները 19

Ա. «Տրիբունալ» հասկացությունը 19
Բ. Օրենքի հիման վրա ստեղծված տրիբունալը 20
Գ. Անկախությունը և անաչառությունը 21
1. Անկախ տրիբունալը 22
ա. Ընդհանուր սկզբունքները 22
բ. Անկախությունը գնահատելու չափանիշները 22
i. Մարմնի անդամների նշանակման կարգը 22
ii. Մարմնի անդամների կողմից իրենց լիազորությունների իրականացման ժամկետը 23
iii. Արտաքին ճնշումներից պաշտպանության երաշխիքները 23
iv. Անկախության արտաքին հատկանիշները 23
2. Անաչառ տրիբունալը 24
ա. Անաչառության գնահատման չափորոշիչները 24
i. Սուբյեկտիվ մոտեցումը 24
ii. Օբյեկտիվ մոտեցումը 25
բ. Իրավիճակներ, երբ կարող են կասկածներ առաջանալ դատարանի անաչառության վերաբերյալ 26
i. Գործառութային բնույթի իրավիճակները 26
α. Տարբեր դատական գործառույթների իրականացումը 26
β. Աստիճանակարգային կամ այլ կապեր վարույթի մյուս մասնակիցների հետ 27

- *Աստիճանակարգային կապերը* 27
- *Այլ կապեր* 28

ii. Անձնական բնույթի իրավիճակները 28

IV. Ընդհանուր երաշխիքներ. ընթացակարգային պահանջները 29

Ա. Արդարացիությունը 29
1. Կողմերի իրավահավասարությունը և մրցակցային դատավարությունը 29
ա. Կողմերի իրավահավասարությունը 30
բ. Մրցակցային դատավարությունը 31
2. Դատական որոշումների պատճառաբանումը 32
Ատենակալների կողմից կայացված որոշումների պատճառաբանական մասը 33
3. Լռություն պահպանելու և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը 34
ա. Հաստատումը և կիրառության ոլորտը 34
բ. Շրջանակը 34
գ. Հարաբերական իրավունքը 36
4. Անօրինական ճանապարհով կամ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը 37
5. Սադրանքը 38
ա. Ընդհանուր նկատառումներ 38
բ. Հրահրման նյութական չափորոշիչը 39
գ. Սադրանքից պաշտպանության նկատմամբ դատական վերահսկողությունը 41
6. Արդար դատաքննության իրավունքի երաշխիքներից հրաժարվելը 42

Բ. Հրապարակային դատաքննությունը 43
1. Հրապարակայնության սկզբունքը 43
2. Բանավոր դատաքննության և դատական նիստին ներկա գտնվելու իրավունքը 43
3. Բողոքարկման վարույթը 45
4. Հրապարակայնության կանոնից բացառությունները 45
5. Դատավճիռները հրապարակային հայտնելը 47

Գ. Ողջամիտ ժամկետը 47
1. Վարույթի տևողությունը որոշելը 47
ա. Այն ժամկետի սկիզբը, որը պետք է հաշվի առնվի 48
բ. Ժամկետի ավարտը 48
2. Ողջամիտ ժամկետի գնահատումը 49
ա. Սկզբունքները 49
բ. Չափորոշիչները 49
3. Մի քանի օրինակ 51
ա. Ողջամիտ ժամկետը գերազանցվել է 51
բ. Ողջամիտ ժամկետը չի գերազանցվել 51

V. Հատուկ երաշխիքներ 52

Ա. Անմեղության կանխավարկածը (6-րդ հոդվածի 2-րդ կետ) 52
1. Ապացուցման բեռը 52
2. Փաստի և իրավունքի կանխավարկածը 53
3. 6-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառման ոլորտը 53

ա. Քրեական վարույթը 53
բ. Հետագա վարույթները 54
4. Մինչդատական հայտարարությունները 55
5. Դատական մարմինների հայտարարությունները 56
6. Պետական պաշտոնատար անձանց հայտարարությունները 56
7. Մամուլի անբարենպաստ արշավը 57
8. Պատժամիջոցները տեղեկատվություն չտրամադրելու դեպքում 57
Բ. Պաշտպանության կողմի իրավունքները (6-րդ հոդվածի 3-րդ կետ) 58
1. Մեղադրանքի բնույթի ու հիմքի վերաբերյալ տեղեկատվությունը
(Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետ) 58
ա. Ընդհանուր 59
բ. Մեղադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը 59
գ. Մեղադրանքի վերաորակումը 60
դ. «Մանրամասնորեն» 61
ե. Անհապաղ» 61
զ. «Լեզուն» 61
2. Պաշտպանության նախապատրաստումը (6-րդ հոդվածի 3-րդ կետի
«բ» ենթակետ) 62
ա. Ընդհանուր նկատառումներ 62
բ. Բավարար ժամանակը 62
գ. Բավարար հնարավորությունները 64
i. Ապացույցների մատչելիությունը 64
ii. Դատապաշտպանի հետ խորհրդակցությունը 65
3. Իրեն անձամբ կամ իրավական աջակցության միջոցով պաշտպանելու
իրավունքը (6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետ) 66
ա. Կիրառության ոլորտը 66
բ. Իրեն անձամբ պաշտպանելը 67
գ. Իրավական աջակցությունը 68
դ. Անվճար իրավաբանական օգնությունը 69
ե. Գործնական և արդյունավետ իրավաբանական օգնությունը 70
4. Վկաների հարցաքննությունը (6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետ) 71
ա. «Վկա» եզրույթի ինքնուրույն նշանակությունը 72
բ. Վկաներին հարցաքննելու իրավունքը կամ այն իրավունքը,
որ վկաները ենթարկվեն հարցաքննության 72
i. Ընդհանուր սկզբունքները 72
ii. Վկայի ներկայությունն ապահովելու համար ողջամիտ
ջանքեր գործադրելու պարտավորությունը 73
iii. Վկային լսելը մերժելու հիմնավորման պարտավորությունը 73
iv. Վկաների՝ դատարանում բանավոր ձևով չներկայացված
ցուցմունքների վրա հիմնվելը 74
v. Անանուն վկաները 75
vi. Սեռական ոտնձգությունների վերաբերյալ գործերով վկաները 76
vii. Վկաներին իրենց ցուցմունքների դիմաց առաջարկվող
առավելությունները 76
viii. Ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքները 77
ix. Պաշտպանության համար անձանց որպես
վկա կանչելու իրավունքը 77
5. Թարգմանությունը (6-րդ հոդվածի 3-րդ կետի «ե» ենթակետ) 78

ա. Եթե մեղադրյալը «չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով» 78
բ. Քրեական դատավարության պաշտպանված տարրերը 78
գ. «Անվճար» օգնությունը 79
դ. Թարգմանության պայմանները 79
ե. Դրական պարտավորությունները 80

VI. 6-րդ հոդվածի արտատարածքային ազդեցությունը 80

Ա. Արդարադատության ակնհայտ մերժումը 80
Բ. «Իրական վտանգ»-ը. չափանիշը և ապացուցման պարտավորությունը 82

Մեջբերված գործերի ցանկը 83

Նշում ընթերցողին

Սույն ուղեցույցը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան, Եվրոպական դատարան կամ Ստրասբուրգի դատարան) կողմից հրատարակվող «Նախադեպային իրավունքի ուղեցույցներ» շարքից է՝ նախատեսված իրավաբանական պրակտիկայով զբաղվողներին Ստրասբուրգի դատարանի կողմից կայացված առավել էական վճիռների մասին տեղեկացնելու համար: Սույն ուղեցույցում վերլուծվում և ամփոփվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա կամ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի շուրջ մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը ձևավորված նախադեպային իրավունքը (քրեաիրավական հայեցակետը): Ընթերցողները հնարավորություն կունենան ծանոթանալու տվյալ ոլորտի հիմնական սկզբունքներին և համապատասխան նախադեպերին:

Հիշատակված նախադեպային իրավունքի օրինակներն ընտրվել են ուղենշային, առավել կարևոր և (կամ) վերջերս կայացված վճիռներից ու որոշումներից:*

Դատարանի վճիռները ծառայում են ոչ միայն Դատարան ներկայացված տվյալ գործը լուծելու, այլև որպես ավելի ընդհանուր նպատակ՝ Կոնվենցիայով սահմանված նորմերը պարզաբանելու, երաշխավորելու և կատարելագործելու համար՝ այդպիսով նպաստելով պետությունների կողմից որպես պայմանավորվող կողմեր ստանձնած պարտավորությունների կատարմանը (*Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության*, 18 հունվարի 1978 թվական, § 154, շարք A թիվ 25:): Այսպիսով, Կոնվենցիայով ստեղծված համակարգի նպատակն է լուծել հանրային քաղաքականության խնդիրները՝ ելնելով ընդհանուր շահերից՝ այդպիսով բարձրացնելով մարդու իրավունքների պաշտպանության չափանիշները և տարածելով մարդու իրավունքների ոլորտում իրավական պրակտիկան Կոնվենցիային մասնակից պետությունների շրջանում (*Konstantin Markin-ն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ], թիվ 30078/06, § 89, ՄԻԵԴ 2012):

* Հիշատակված նախադեպային իրավունքը կարող է լինել Դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի պաշտոնական լեզուներից (անգլերեն և ֆրանսերեն) որևէ մեկով կամ երկուսով: Եթե այլ բան նշված չէ, ապա հղում է կատարվում Դատարանի պալատի կողմից ըստ էության կայացված վճռին: «(Որոշում)» բառը նշանակում է, որ հղում է կատարվում Դատարանի որոշմանը, իսկ «[ՄՊ]» հապավումը նշանակում է, որ գործը քննվել է Մեծ պալատի կողմից:

Կոնվենցիայի 6-րդ հոդված. Արդար դատաքննության իրավունք

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ տրիբունալի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ դրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կվնասեր արդարադատության շահերը:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական իրավախախտում կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ) բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե) օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:»

I. Գործողության ոլորտը. «քրեական մեղադրանք» հասկացությունը

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ

> «1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում [է]... իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը, ունի... տրիբունալի կողմից... արդարացի... դատաքննության իրավունք:»

Ա. Ընդհանուր սկզբունքները

1. «Քրեական մեղադրանք» հասկացությունն ունի «ինքնուրույն» նշանակություն՝ անկախ անդամ պետությունների ազգային իրավական համակարգերում օգտագործվող դասակարգումներից (*Adolf-ն ընդդեմ Ավստրիայի*, § 30):

2. «Մեղադրանք» հասկացությունը հարկավոր է հասկանալ Կոնվենցիայի իմաստով: Այդպիսով այն կարող է սահմանվել որպես «իրավասու մարմնի կողմից անձին տրված պաշտոնական ծանուցում՝ վերջինիս կողմից քրեական իրավախախտում կատարելու ենթադրության վերաբերյալ». այս սահմանումը համապատասխանում է նաև՝ «[կասկածյալի] վիճակի վրա էական ազդեցության» որոշման չափորոշչին (*Deweer-ն ընդդեմ Բելգիայի*, §§ 42 և 46, *Eckle-ն ընդդեմ Գերմանիայի*, § 73): Դատարանը եզրակացրել է նաև, որ ոստիկանության կողմից արգելանքի տակ պահվող անձը, որից պահանջվել էր երդում տալ՝ նախքան որպես վկա հարցաքննվելը, արդեն իսկ «քրեական մեղադրանքի» սուբյեկտ էր և իրավունք ուներ լռելու (*Brusco-ն ընդդեմ Ֆրանսիայի*, §§ 46-50):

3. Ինչ վերաբերում է «քրեական» ինքնուրույն հասկացությանը, ապա Կոնվենցիան պայմանավորվող կողմերին չի արգելում քայլեր ձեռնարկել «ապաքրեականացման» ուղղությամբ: Այնուամենայնիվ, «ապաքրեականացման» արդյունքում «նորմատիվ» դասակարգված իրավախախտումները կարող են դասվել «քրեական» իրավախախտում ինքնուրույն հասկացության ներքո: Պետությունների կողմից այդպիսի իրավախախտումները 6-րդ հոդվածի գործողության ոլորտից սեփական հայեցողությամբ բացառելը կարող է հանգեցնել Կոնվենցիայի առարկային և նպատակներին չհամապատասխանող արդյունքների (*Öztürk-ն ընդդեմ Գերմանիայի*, § 49):

4. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետի կիրառելիության գնահատման համար ելակետ են ծառայում *Engel-ը և այլք ընդդեմ Նիդեռլանդների* գործով վճռի 82-83-րդ պարբերություններում ներկայացված չափորոշիչները.

1. դասակարգումը ներպետական օրենքում.
2. իրավախախտման բնույթը.
3. այն պատժի խստությունը, որին կարող է ենթարկվել տվյալ անձը:

5. Առաջին չափորոշիչն ունի հարաբերական նշանակություն և ծառայում է միայն որպես ելակետ: Եթե ներպետական օրենսդրությամբ իրավախախտումը դասվում է քրեական իրավախախտումների շարքին, ապա այս չափորոշիչը կլինի որոշիչ: Հակառակ դեպքում Դատարանը հաշվի չի առնում ներպետական օրենսդրությամբ տրվող դասակարգումը և ուսումնասիրում է տվյալ ընթացակարգի էությունը:

6. Ավելի կարևոր համարվող երկրորդ չափորոշչի (*Jussila-ն ընդդեմ Ֆինլանդիայի* [ՄՊ], § 38) գնահատման ժամանակ կարող են հաշվի առնվել հետևյալ գործոնները՝

- արդյոք տվյալ իրավական նորմը վերաբերում է միայն կոնկրետ խմբի, թե կրում է համընդհանուր պարտադիր բնույթ (*Bendenoun-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 47).
- արդյոք վարույթը հարուցվել է օրենքով հարկադրանք կիրառելու լիազորություններ ունեցող պետական մարմնի կողմից (*Benham-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 56).
- իրավական նորմը հետապնդում է պատժիչ, թե կանխարգելիչ նպատակ (*Öztürk-ն ընդդեմ Գերմանիայի*, § 53. *Bendenoun-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 47).
- արդյոք պատիժ նշանակելը պայմանավորված է մեղավորությունն ապացուցելով (*Benham-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 56).
- ինչպես են համեմատելի ընթացակարգերը դասակարգվում Եվրոպայի խորհրդի այլ անդամ պետություններում (*Öztürk-ն ընդդեմ Գերմանիայի*, § 53):

7. Երրորդ չափորոշիչը որոշվում է համապատասխան օրենքով նախատեսված հնարավոր առավելագույն պատժի հիման վրա (*Campbell-ը և Fell-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 72. *Demicoli-ն ընդդեմ Մալթայի*, § 34):

8. *Engel-ը և այլք ընդդեմ Նիդեռլանդների* գործով կայացված վճռում սահմանված երկրորդ և երրորդ չափորոշիչներն այլընտրանքային են, և պարտադիր չէ, որ կիրառվեն գումարային կերպով. 6-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ որոշում կայացնելու համար բավական է, որ տվյալ իրավախախտումը Կոնվենցիայի տեսանկյունից իր բնույթով համարվի «քրեական», կամ որ կատարված իրավախախտման համար անձը ենթակա լինի պատժի, որն իր բնույթով և խստության աստիճանով ընդհանուր առմամբ համապատասխանում է «քրեական» ոլորտին (*Lutz-ն ընդդեմ Գերմանիայի*, § 55. *Öztürk-ն ընդդեմ Գերմանիայի*, § 54): Այն փաստը, որ իրավախախտումը չի պատժվում ազատազրկմամբ, ինքնին որոշիչ չէ, քանի որ տվյալ պատժի հարաբերականորեն ոչ ծանր լինելը չի բացառում այն, որ իրավախախտումն իր բնույթով կարող է քրեական լինել (նույն տեղում, § 53. *Nicoleta Gheorghe-ն ընդդեմ Ռումինիայի*, § 26):

Սակայն եթե չափորոշիչներից յուրաքանչյուրի առանձին վերլուծությունը թույլ չի տալիս միանշանակ եզրահանգում կատարել քրեական մեղադրանքի առկայության կամ բացակայության մասին, ապա կարող է կիրառվել գումարային մոտեցում (*Bendenoun-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 47):

9. «Քրեական մեղադրանք» և «քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող» եզրույթների կիրառմամբ 6-րդ հոդվածի երեք կետերը հղում են կատարում համանման իրավիճակների: Հետևաբար, 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետի կիրառելիության որոշման չափորոշիչները երեք կետերի դեպքում էլ նույնն են:

Բ. Ընդհանուր սկզբունքների կիրառումը

1. Կարգապահական վարույթը

10. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետը տարածվում է զինվորական կարգապահության այն խախտումների վրա, որոնք պատժվում են մի քանի ամիս ժամկետով կարգապահական գումարտակ ուղարկելով (*Engel-ը և այլք ընդդեմ Նիդեռլանդների*, § 85): Հակառակ դրան՝ երկու օր տևողությամբ կալանքը խիստ ռեժիմով

Դատարանի կողմից համարվում է շատ կարճ ժամկետ՝ այն «քրեական իրավունքի» ոլորտին դասելու համար (նույն տեղում):

11. Ինչ վերաբերում է մասնագիտական կարգապահական վարույթներին, ապա այդ հարցը բաց է մնում, քանի որ Դատարանն անհրաժեշտ չի համարել դրա վերաբերյալ որևէ վերջնական որոշում կայացնել՝ հանգելով այն եզրակացության, որ այդպիսի վարույթները պատկանում են քաղաքացիական ոլորտին (*Albert-ը և Le Compte-ն ընդդեմ Բելգիայի*, § 30): Քաղաքացիական ծառայողի՝ պաշտոնից հարկադիր ազատման ելքով կարգապահական վարույթի դեպքում Դատարանը եզրակացրել է, որ նման վարույթը չէր կարող համարվել «քրեական»՝ 6-րդ հոդվածի իմաստով, քանի որ ներպետական մարմիններին հաջողվել էր իրենց որոշումը կայացնել՝ մնալով բացառապես վարչական ոլորտի սահմաններում (*Moullet-ն ընդդեմ Ֆրանսիայի (որոշում)*): Դատարանը 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետից դուրս է համարել նաև կարգապահական խախտումների համար զինվորական պաշտոնատար անձին ծառայությունից ազատելու հետ կապված վեճը (*Suküt-ն ընդդեմ Թուրքիայի (որոշում)*):

12. Չնայած բանտերի համատեքստում և բանտերում գործող հատուկ կարգապահական ռեժիմի առնչությամբ «պատշաճ վերապահում» կատարելուն՝ 6-րդ հոդվածը կարող է կիրառվել բանտերում կարգապահության դեմ ուղղված իրավախախտումների նկատմամբ՝ հաշվի առնելով մեղադրանքի բնույթը և պատիժների բնույթն ու խստությունը (քառասունյոթ օրով լրացուցիչ կալանք՝ համապատասխանաբար *Ezeh-ը և Connors-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] գործով, § 82. ի հակադրություն դրա՝ տե՛ս *Štitić-ն ընդդեմ Խորվաթիայի*, §§ 51-63): Այնուամենայնիվ, որպես այդպիսին՝ 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետն սկզբունքորեն չի տարածվում բանտային համակարգի հետ կապված վարույթների վրա (*Boulois-ն ընդդեմ Լյուքսեմբուրգի* [ՄՊ], § 85): Այսպես, օրինակ, բանտարկյալին հսկողության խստացված ռեժիմի տակ տեղափոխելը չի ներառում քրեական մեղադրանքի հարց. այդպիսի միջոցը և դրանից բխող սահմանափակումները բողոքարկելու նպատակով դատարան դիմելու հնարավորությունը հարկավոր է դիտարկել 6-րդ հոդվածի 1-ին կետի քաղաքացիաիրավական հայեցակետի շրջանակներում (*Enea-ն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ], § 98):

13. 6-րդ հոդվածի գործողությունը չի տարածվում դատական վարույթի ժամանակ կարգապահական խախտումները (դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը) կարգավորող նորմերի համաձայն Դատարանի կողմից նշանակված միջոցների վրա, քանի որ դրանք համարժեք են կարգապահական լիազորությունների իրականացմանը (*Ravnsborg-ն ընդդեմ Շվեդիայի*, § 34, *Putz-ն ընդդեմ Ավստրիայի*, §§ 33-37): Այնուամենայնիվ, պատժի բնույթով և խստությամբ պայմանավորված՝ 6-րդ հոդվածը կարող է կիրառվել նաև ներպետական օրենսդրությամբ որպես քրեական իրավախախտում դասակարգված՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար դատապարտվելու դեպքում (*Kyprianou-ն ընդդեմ Կիպրոսի* [ՄՊ], §§ 61-64՝ հնգօրյա ազատազրկման ձևով պատժի վերաբերյալ):

14. Ինչ վերաբերում է խորհրդարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքին, ապա Դատարանը մի կողմից տարբերակում է օրենսդիր մարմնի՝ խորհրդարանի կանոնների խախտման համար իր անդամների նկատմամբ կիրառվող սեփական ընթացակարգերի կարգավորման լիազորությունները և մյուս կողմից՝ խորհրդարանից դուրս կատարված արարքների համար իր անդամ չհանդիսացող անձանց պատժելու ընդլայնված իրավազորությունը: Վերոնշյալ լիազորություններն իրենց բնույթով կարող են դիտարկվել որպես կարգապահական, մինչդեռ վերոնշյալ իրավազորությունը Դատարանը համարում է քրեաիրավական՝ հաշվի առնելով հնարավոր պատժի համընդհանուր

կիրառելիությունը և խստությունը (մինչև վաթսուն օր ժամկետով ազատազրկում և տուգանք՝ *Demicoli-ն ընդդեմ Մալթայի*, § 32):

2. Վարույթները վարչական, հարկային, մաքսային, ֆինանսական և մրցակցային իրավունքի ոլորտներում

15. 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետը կարող է տարածվել հետևյալ վարչական իրավախախտումների վրա՝

- ճանապարհային երթևեկությանն առնչվող իրավախախտումներ, որոնք պատժվում են տուգանքով կամ վարորդական իրավունքի սահմանափակումներով, ինչպես օրինակ՝ տուգանային միավորներով կամ որակազրկումներով (*Lutz-ն ընդդեմ Գերմանիայի*, § 182, *Schmautzer-ն ընդդեմ Ավստրիայի, Malige-ն ընդդեմ Ֆրանսիայի*).
- անհարմարություններ պատճառող կամ հասարակական կարգի խախտում հանդիսացող ոչ մեծ ծանրության իրավախախտումներ (*Lauko-ն ընդդեմ Սլովակիայի, Nicoleta Gheorghe-ն ընդդեմ Ռումինիայի*, §§ 25-26).
- սոցիալական ապահովության վերաբերյալ օրենսդրության դեմ ուղղված իրավախախտումներ (*Hüseyin Turan-ն ընդդեմ Թուրքիայի*, §§ 18-21. աշխատանքի անցնելու մասին չտեղեկացնելը՝ անկախ նշանակված տուգանքի մեղմ բնույթից).
- էթնիկ ատելություն խրախուսող նյութեր խրախուսելու կամ տարածելու վարչական իրավախախտում, որը պատժվում է վարչական նախազգուշացմամբ և տվյալ նյութերի բռնագրավմամբ (*Balsytė-Lideikienė-ն ընդդեմ Լիտվայի*, § 61):

16. Դատարանը եզրակացրել է, որ 6-րդ հոդվածը ենթակա է կիրառման լրացուցիչ հարկերի վերաբերյալ վարույթների նկատմամբ՝ հետևյալ տարրերի առկայության պայմանով՝

- տույժեր սահմանող օրենքը տարածվել է հարկ վճարողի կարգավիճակում հանդես եկող բոլոր քաղաքացիների վրա.
- լրացուցիչ հարկի նպատակը ոչ թե պատճառված վնասների դրամական հատուցումն է եղել, այլ հիմնականում ծառայել է որպես պատիժ՝ հետագա իրավախախտումները կանխելու համար.
- լրացուցիչ հարկը համընդհանուր նորմի համաձայն նշանակվել է և՛ կանխարգելիչ, և՛ պատժիչ նպատակներով.
- լրացուցիչ հարկի գումարը եղել է զգալի (*Bendenoun-ն ընդդեմ Ֆրանսիայի*. ի հակադրություն դրա՝ տե՛ս վճարումն ուշացնելու համար գանձվող տոկոսավճարների մասին *Mieg de Boofzheim-ն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում) գործում):

Իրավախախտման քրեական բնույթը կարող է բավարար լինել 6-րդ հոդվածը կիրառելու համար՝ անկախ լրացուցիչ հարկի գումարի փոքր չափից (վերահաշվարկված հարկային պարտավորության 10%-ը. *Jussila-ն ընդդեմ Ֆինլանդիայի* [ՄՊ], § 38):

17. 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետը ճանաչվել է կիրառելի՝ մաքսային օրենսդրության (*Salabiaku-ն ընդդեմ Ֆրանսիայի*), բյուջետային և ֆինանսական հարցերով

իրավազոր դատարանի կողմից նշանակվող տույժերի (*Guisset-ն ընդդեմ Ֆրանսիայի*), ինչպես նաև տնտեսական, ֆինանսական և մրցակցային իրավունքի ոլորտներում լիազորություններ ունեցող որոշակի վարչական մարմինների նկատմամբ (*Lilly France S.A.-ն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում), *Dubus S.A.-ն ընդդեմ Ֆրանսիայի, A. Menarini Diagnostics S.r.l.-ն ընդդեմ Իտալիայի*):

3. Քաղաքական բնույթի հարցերը

18. 6-րդ հոդվածն իր քրեաիրավական հայեցակետի մասով ճանաչվել է ոչ կիրառելի այն վարույթների նկատմամբ, որոնք վերաբերում են ընտրությունների հետ կապված պատժամիջոցներին (*Pierre-Bloch-ն ընդդեմ Ֆրանսիայի*, §§ 53-60), քաղաքական կուսակցությունների լուծարմանը (*Refah Partisi-ն («Բարօրություն» կուսակցությունը) և այլք ընդդեմ Թուրքիայի* (որոշում)), հետաքննության հարցերով խորհրդարանական հանձնաժողովներին (*Montera-ն ընդդեմ Իտալիայի* (որոշում)), ինչպես նաև սահմանադրության կոպիտ խախտման հետ կապված երկրի նախագահի պաշտոնանկության վարույթների նկատմամբ (*Paksas-ն ընդդեմ Լիտվայի* [ՄՊ], §§ 66-67):

19. Ինչ վերաբերում է լյուստրացիայի վարույթներին, ապա Դատարանը գտել է, որ քրեաիրավական բնույթ ունեցող տարրերի (իրավախախտման բնույթը, իրականությանը չհամապատասխանող լյուստրացիայի մասին հայտարարությունները, պատժի բնույթը և խստությունը, երկար ժամկետով որոշակի գործունեությամբ զբաղվելու արգելքը) գերակայությունը կարող է հանգեցնել նրան, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետը տարածվի այդ վարույթների վրա (*Matyjek-ն ընդդեմ Լեհաստանի* (որոշում). ի հակադրություն դրան՝ տե՛ս *Sidabras-ը և Džiautas-ն ընդդեմ Լատվիայի* (որոշում)):

4. Վտարումը և հանձնումը

20. 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետը չի տարածվում օտարերկրացիների վտարման հետ կապված ընթացակարգերի վրա՝ չնայած այն բանին, որ դրանք կարող են տեղի ունենալ քրեական վարույթների համատեքստում (*Maaouia-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 39): Բացառման նույն մոտեցումը կիրառվում է նաև հանձնման հետ կապված վարույթների (*Peñafiel Salgado-ն ընդդեմ Իսպանիայի* (որոշում)) կամ ձերբակալման մասին եվրոպական որոշման հետ կապված վարույթների (*Monedero Angora-ն ընդդեմ Իսպանիայի* (որոշում)) դեպքում:

21. Սակայն մյուս կողմից ազատազրկման ձևով պատիժը արտաքսմամբ և տասը տարով երկրի տարածք մուտք գործելու արգելքով փոխարինելը կարող է դիտվել որպես պատիժ, որը նշանակվում է նույն հիմքերով, ինչ սկզբնական դատավճռով նշանակված պատիժը (*Gurguchiani-ն ընդդեմ Իսպանիայի*, §§ 40 և 47-48):

5. Քրեական վարույթի տարբեր փուլերը, օժանդակ վարույթները և դրանց հետևող իրավական պաշտպանության միջոցները

22. 6-րդ հոդվածի երաշխիքները չեն տարածվում անկարգությունների կամ հանցագործությունների կանխման համար ձեռնարկված միջոցների վրա (*Raimondo-ն ընդդեմ Իտալիայի*, § 43՝ ոստիկանության կողմից հատուկ հսկողության վերաբերյալ. կամ *R.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում)՝ դպրոցում աշակերտուհիների նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարած անչափահասին ոստիկանության կողմից տրված նախազգուշացման վերաբերյալ):

23. Ինչ վերաբերում է մինչդատական քննությանը (հետաքննություն, նախաքննություն), ապա Դատարանը քրեական վարույթը դիտարկում է որպես մեկ ամբողջություն: Հետևաբար, 6-րդ հոդվածով սահմանված որոշ պահանջներ, ինչպիսին ողջամիտ ժամկետի վերաբերյալ պահանջը կամ պաշտպանության իրավունքն է, կարող են վերաբերելի լինել վարույթի այս փուլում ևս, քանի որ սկզբնական փուլում այդ պահանջներին չհետևելը կարող է լրջորեն ազդել դատական քննության արդարացիության վրա (*Imbrioscia-ն ընդդեմ Շվեյցարիայի*, § 36): Չնայած այն բանին, որ նախնական քննության հարցերով պատասխանատու դատավորները [investigating judges] չեն որոշում «քրեական մեղադրանքի» հիմնավորվածությունը, նրանց կողմից ձեռնարկված քայլերն անմիջականորեն ազդում են հետագա վարույթի, այդ թվում՝ վերջնական դատական քննության ընթացքի և արդարացիության վրա: Համապատասխանաբար, 6-րդ հոդվածի 1-ին կետը կարող է կիրառվել նախնական քննության հարցերով պատասխանատու դատավորի կողմից իրականացվող քննության ընթացակարգի նկատմամբ՝ չնայած այն բանին, որ 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված որոշ ընթացակարգային երաշխիքներ կարող են չկիրառվել (*Vera Fernández-Huidobro-ն ընդդեմ Իսպանիայի*, §§ 108-114):

24. 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է «քրեական մեղադրանքի» հիմնավորվածությունը որոշելու նպատակով իրականացվող վարույթի ամբողջ ընթացքի նկատմամբ՝ ներառյալ դատավճիռ կայացնելու գործընթացը (օրինակ՝ բռնագրավման վարույթ, որն ազգային դատարաններին թույլ է տալիս որոշել այն գումարը, որը բռնագրավման մասին որոշմամբ կարող է ենթակա լինել բռնագրավման. *Phillips-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 39): 6-րդ հոդվածն իր քրեաիրավական հայեցակետի մասով կարող է կիրառելի լինել նաև այն վարույթների նկատմամբ, որոնք հանգեցնում են առանց շինարարության թույլտվության կառուցված շենքի քանդմանը, քանի որ շենքը քանդելը կարող է դիտվել որպես «պատիժ» (*Hamer-ն ընդդեմ Բելգիայի*, § 60): Սակայն այն կիրառելի չէ սկզբնական դատավճիռները նոր քրեական օրենսգրքի ավելի բարենպաստ դրույթներին համապատասխանեցնելու հետ կապված վարույթների նկատմամբ (*Nurmagomedov-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 50):

25. 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետը չի տարածվում դատավճիռների կատարման հետ կապված վարույթների վրա, ինչպիսիք են, օրինակ, համաներում կիրառելու վարույթները (*Montcornet de Caumont-ն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում)), պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ վարույթները (*A.-ն ընդդեմ Ավստրիայի*, Հանձնաժողովի որոշում), Դատապարտված անձանց փոխանցման մասին կոնվենցիայի համաձայն փոխանցման վարույթները (*Szabó-ն ընդդեմ Շվեդիայի* (որոշում), սակայն հակառակ եզրակացության համար տե՛ս *Buijen-ն ընդդեմ Գերմանիայի*, §§ 40-45) և օտարերկրյա դատարանի՝ հարկադիր օտարման մասին որոշման կատարման հետ կապված *էկզեկվատուրայի* վարույթները (*Saccoccia-ն ընդդեմ Ավստրիայի* (որոշում)):

26. Սկզբունքորեն, օտարման միջոցները, որոնք բացասաբար են անդրադառնում երրորդ անձանց սեփականության իրավունքների վրա, սակայն չեն պարունակում նրանց դեմ քրեական վարույթ հարուցելու վտանգ, չեն հավասարեցվում «քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը որոշելուն» (օդանավի առգրավում՝ *Air Canada-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 54. ոսկյա մետաղադրամների օտարում՝ *AGOSI-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործում, §§ 65-66): Փոխարենը, այդպիսի միջոցներն ընկնում են 6-րդ հոդվածի քաղաքացիաիրավական հայեցակետի տակ (*Silickienė-ն ընդդեմ Լիտվայի*, §§ 45–46):

27. 6-րդ հոդվածի երաշխիքները սկզբունքորեն կիրառելի են իրավունքի խախտման հիմքով բողոքների (*Meftah-ն և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 40) և սահմանադրական վարույթների նկատմամբ (*Gast-ը և Popp-ն ընդդեմ Գերմանիայի*, §§ 65-66, *Caldas Ramírez de Arrellano-ն ընդդեմ Իսպանիայի* (որոշում)), եթե այդ վարույթներն համապատասխան քրեական վարույթների հետագա փուլ են, և դրանց արդյունքները կարող են որոշիչ լինել դատապարտված անձանց համար:

28. Վերջապես, 6-րդ հոդվածը կիրառելի չէ գործի քննությունը վերսկսելու վերաբերյալ վարույթների նկատմամբ, քանի որ այն անձը, որի դատավճիռը դարձել է վերջնական և որը դիմում է իր գործով վարույթը վերսկսելու համար, տվյալ հոդվածի իմաստով չի «մեղադրվում… քրեական իրավախախտում կատարելու մեջ» (*Fischer-ն ընդդեմ Ավստրիայի* (որոշում)): Միայն գործով վարույթը վերսկսելու մասին դիմումը բավարարելուց հետո հարուցված նոր վարույթները կարող են դիտարկվել որպես քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը որոշելուն առնչվող (*Löffler-ն ընդդեմ Ավստրիայի*, §§ 18-19): Նույն կերպ՝ 6-րդ հոդվածը կիրառելի չէ քրեական վարույթը Դատարանի կողմից խախտում արձանագրելու հիմքով վերսկսելու միջնորդության նկատմամբ (*Öcalan-ն ընդդեմ Թուրքիայի* (որոշում)): 6-րդ հոդվածի քրեաիրավական հայեցակետը, սակայն, տարածվում է վերադասության կարգով վերանայման վարույթների վրա, որոնց արդյունքում վերջնական դատավճիռը ենթարկվում է փոփոխությունների (*Vanyan-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 58):

II. Դատարանի մատչելիության իրավունքը

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ

> «1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում [է]… իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը, ունի… տրիբունալի կողմից… դատաքննության իրավունք։»

29. «Դատարանի մատչելիության իրավունքը» բացարձակ չէ ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերի դեպքում: Դրա նկատմամբ կիրառելի են ենթադրելի սահմանափակումներ (*Deweer-ն ընդդեմ Բելգիայի*, § 49, *Kart-ն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], § 67):

30. Այնուամենայնիվ, այդպիսի սահմանափակումները չպետք է սահմանափակեն տվյալ իրավունքի իրականացումն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դրանք պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ, և գործադրվող միջոցներն ու հետապնդվող նպատակը պետք է ողջամտորեն համաչափ լինեն (*Guérin-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 37. *Omar-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 34՝ քաղաքացիական գործերին հղումներով):

Սահմանափակումները

31. Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումները կարող են պայմանավորված լինել հետևյալով՝

1. Խորհրդարանական անձեռնմխելիությունը

32. Խորհրդարանական անձեռնմխելիության երկու տեսակներով (պատասխանատվությունից ազատում և անձեռնմխելիություն) առաջարկվող երաշխիքները ծառայում են նույն նպատակին՝ ապահովել խորհրդարանի անկախությունը դրա առջև դրված խնդիրների իրականացման հարցում: Անկասկած, անձեռնմխելիությունն օգնում է ապահովելու խորհրդարանի լիարժեք անկախությունը՝ քաղաքական շարժառիթներով քրեական վարույթ հարուցելու ցանկացած հնարավորություն կանխելու միջոցով, և այդպիսով պաշտպանելով ընդդիմությանը մեծամասնության կողմից ճնշումներից կամ հարձակումներից (*Kart-ն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], § 90՝ քաղաքացիական գործերին հղումներով): Բացի այդ, խորհրդարանի անդամների դեմ վարույթ հարուցելը կարող է անմիջականորեն ազդել այն ժողովի գործունեության վրա, որի անդամ են նրանք, և խաթարել խորհրդարանի աշխատանքը: Հետևաբար, անձեռնմխելիության այս համակարգը, որը բացառություն է ընդհանուր օրենքից, կարող է դիտարկվել որպես իրավաչափ նպատակ հետապնդող (նույն տեղում, § 91):

33. Այնուամենայնիվ, առանց գործի հանգամանքներն ուսումնասիրելու հնարավոր չէ կատարել եզրակացություններ այն մասին, թե խորհրդարանական անձեռնմխելիության իրավաչափության վերաբերյալ տվյալ եզրահանգումը համապատասխանում է Կոնվենցիային, թե ոչ: Անհրաժեշտ է պարզել, թե արդյոք դատարանի մատչելիության իրավունքը խորհրդարանական անձեռնմխելիության պատճառով սահմանափակվում է այնպես, որ խախտվում է այդ իրավունքի բուն էությունը: Վերանայել այդպիսի միջոցի համաչափությունը նշանակում է հաշվի առնել արդարացի հավասարակշռությունը խորհրդարանի ամբողջականությունը պահպանելու համընդհանուր շահի և դիմումատուի անձնական շահի, այն է՝ իրեն ներկայացված քրեական մեղադրանքին դատարանում պատասխանելու նպատակով խորհրդարանական անձեռնմխելիությունը հանելու հնարավորության միջև: Համաչափության հարցն ուսումնասիրելիս Դատարանն իր կողմից քննվող գործում պետք է հատուկ ուշադրություն դարձնի անձեռնմխելիության շրջանակին (նույն տեղում, 92-93): Որքան քիչ է պաշտպանության միջոցը ծառայում խորհրդարանի ամբողջականության պահպանմանը, այնքան ավելի համոզիչ պետք է լինի դրա հիմնավորումը (նույն տեղում, § 95): Այսպես, օրինակ, Դատարանը սահմանել է, որ այն, որ խորհրդարանի անդամը չի կարող հրաժարվել իր անձեռնմխելիությունից, չէր խախտում դատարանի մատչելիության նրա իրավունքը, քանի որ անձեռնմխելիությունը, սահմանափակված լինելով նրա կողմից խորհրդարանական պաշտոնում գտնվելու ժամկետով, պարզապես ժամանակավոր ընթացակարգային խոչընդոտ էր քրեական վարույթի համար (նույն տեղում, §§ 111-113):

2. Ընթացակարգային նորմերը

34. Դրանք են, օրինակ, բողոքների ընդունելիության պահանջները:

35. Այնուամենայնիվ, չնայած այն բանին, որ բողոքարկելու իրավունքն անշուշտ կարող է ենթակա լինել օրենքով նախատեսված որոշակի պահանջների, ընթացակարգային նորմեր կիրառելիս դատարանը պետք է խուսափի անհարկի ձևականություններից, որոնք կարող են ազդել վարույթի արդարացիություն վրա (*Walchli-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 29): Ընթացակարգային նորմերն առանձնահատուկ խստությամբ կիրառելը կարող է որոշ դեպքերում խախտել դատարանի մատչելիության իրավունքի բուն էությունը (*Labergère-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 23)՝ մասնավորապես հաշվի առնելով բողոքի կարևորությունը և այն, թե վարույթի շրջանակներում ինչ է խաղաքարտին դրված երկար ժամկետով ազատազրկման դատապարտված դիմումատուի համար (նույն տեղում, § 20):

36. Դատարանի մատչելիության իրավունքը հիմնովին խախտվում է նաև ընթացակարգային նորմերը չպահպանելու հետևանքով, օրինակ՝ եթե դատախազության՝ տուգանքների դեմ բողոքների կամ պարտավորություններից ազատման դիմումների ընդունելիությունը հաստատելու համար պատասխանատու աշխատակիցը գործել է *ultra vires (չարաշահելով լիազորությունները)*՝ բողոքի վերաբերյալ ինքնուրույն ըստ էության որոշում կայացնելով և այդպիսով, զրկելով դիմումատուներին տվյալ «մեղադրանքի» հիմնավորվածությունը համայնքային դատավորի կողմից որոշվելու հնարավորությունից (*Josseaume-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 32):

37. Նույն մոտեցումը կիրառելի է այն դեպքում, երբ բողոքը սխալ հիմքերով բերված լինելու պատճառով անընդունելի ճանաչելու մասին որոշումը հանգեցրել էր ստանդարտ տուգանքի գումարի չափով որպես ապահովման միջոց պահված գումարը չվերադարձնելուն, ինչի արդյունքում տուգանքը համարվել էր վճարված և հետապնդումը կարճվել էր՝ այդպիսով տուգանքը վճարված լինելուց հետո դիմումատուին զրկելով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար իրեն ներկայացված մեղադրանքը «տրիբունալի» առջև բողոքարկելու հնարավորությունից (*Célice-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 34):

38. Մեկ այլ օրինակ՝ դիմումատուն տուժել էր դատարանի մատչելիության իր իրավունքի չափից ավելի սահմանափակումից, երբ իրավունքի խախտման հիմքով իր բողոքը ճանաչվել էր անընդունելի՝ օրենքով սահմանված ժամկետները չպահպանելու համար՝ այն պարագայում, երբ այդ ժամկետները չէին պահպանվել այն պատճառով, որ իշխանությունները ստորադաս դատարանի որոշումը դիմումատուին տրամադրելու իրենց պարտականությունը կատարել էին ոչ պատշաճ ձևով՝ այն դեպքում, երբ դիմումատուն եղել է կալանքի տակ և, հետևաբար, նրա գտնվելու վայրը հնարավոր էր պարզել (*Davran-ն ընդդեմ Թուրքիայի*, §§ 40-47):

3. Նախկինում կայացված որոշումները կատարելու պահանջը

39. Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ մեխանիկորեն անընդունելի են ճանաչվում իրավունքի խախտման հիմքով այնպիսի բողոքները, որոնք բերվում են արգելանքի վերցվելու համար չհանձնված անձանց կողմից՝ չնայած այն բանին, որ նրանց ձերբակալման մասին որոշում է կայացված եղել, նշվում է հետևյալը՝

- իրավունքի խախտման հիմքով բողոքն անընդունելի ճանաչելն այն պատճառով, որ դիմումատուն թաքնվել է արդարադատությունից, համարվում է անհամաչափ

պատժամիջոց՝ հաշվի առնելով պաշտպանության իրավունքի և ժողովրդավարական հասարակությունում օրենքի գերակայության սկզբունքի մեծ կարևորությունը (*Poitrimol-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 38, *Guérin-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 45, *Omar-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 42).

- նյութական իրավունքի խախտման հիմքով բողոքն անընդունելի ճանաչելը միայն այն պատճառով, որ դիմումատուն՝ ի կատարումն բողոքարկվող դատական որոշման, չի հանձնվել արգելանքի վերցվելու համար, նշանակում է ստիպել դիմումատուին նախապես ենթարկվել իրեն ազատությունից զրկելու մասին վիճարկվող որոշմանը՝ չնայած այն բանին, որ այդ որոշումը չի կարող համարվել վերջնական՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում կայացնելը կամ բողոքարկման ժամկետը լրանալը: Այսպիսով, բողոք բերող անձի վրա անհամաչափ բեռ է դրվում՝ խախտելով այն արդարացի հավասարակշռությունը, որը պետք է պահպանվի՝ մի կողմից դատական որոշումների կատարումն ապահովելու իրավաչափ նպատակի և մյուս կողմից՝ վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի և պաշտպանության իրավունքից օգտվելու միջև (նույն տեղում, §§ 40-41, *Guérin-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 43):

40. Նույն մոտեցումը կիրառելի է այն դեպքում, երբ դիմումատուն զրկվում է իրավունքի խախտման հիմքով բողոք ներկայացնելու իրավունքից՝ արգելանքի վերցվելու համար հանձնվելու պարտականությունը չկատարելու պատճառով (*Khalfaoui-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 46, *Papon-ն ընդդեմ Ֆրանսիայի (թիվ 2)*, § 100):

41. Այնուամենայնիվ, նախքան արագությունը գերազանցելու համար նշանակված տուգանքի բողոքարկումը որպես ապահովման միջոց վճարում կատարելու պահանջը (երբ տվյալ պահանջի նպատակը ճանապարհային երթեւեկությանն առնչվող իրավախախտումների ոլորտում վարույթը ձգձգելու կամ անհարմարություններ պատճառելու նպատակ հետապնդող բողոքները կանխելն է) կարող է համարվել դատարանի մատչելիության իրավունքի իրավաչափ և համաչափ սահմանափակում (*Schneider-ն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում)):

4. Այլ սահմանափակումներ, որոնք հանգեցնում են դատարանի մատչելիության իրավունքի խախտման

42. Դրանք կարող են տեղի ունենալ, օրինակ, երբ իշխանությունները մեղադրյալին համոզում են բողոքը հետ վերցնել՝ տալով առաջին ատյանի դատարանի դատավճիռը մեղմացնելու կեղծ խոստում (*Marpa Zeeland B.V.-ն և Metal Welding B.V.-ն ընդդեմ Նիդեռլանդների*, §§ 46-51), կամ երբ վճռաբեկ դատարանը մեղադրյալին չի տեղեկացնում իրավունքի խախտման հիմքով բողոք ներկայացնելու նոր ժամկետի մասին այն բանից հետո, երբ պաշտոնապես նշանակված պաշտպանը հրաժարվում է ստանձնել մեղադրյալի պաշտպանությունը (*Kulikowski-ն ընդդեմ Լեհաստանի*, § 70):

III. Ընդհանուր երաշխիքներ. ինստիտուցիոնալ պահանջները

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում [է]... իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը, ունի... օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ տրիբունալի կողմից... դատաքննության իրավունք։»

Ա. «Տրիբունալ» հասկացությունը

43. Կարգապահական կամ վարչական մարմինը կարող է բնորոշվել որպես «տրիբունալ»՝ 6-րդ հոդվածի ինքնուրույն իմաստով, նույնիսկ եթե ազգային համակարգում այն սահմանված չէ որպես «տրիբունալ» կամ «դատարան»: Դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում «տրիբունալ» հասկացությունն ընկալվում է տվյալ եզրույթի նյութական իմաստով՝ բնորոշվելով իր դատական գործառույթով, այն է՝ իր իրավասության շրջանակներում իրավական նորմերի հիման վրա և սահմանված կարգով իրականացված ընթացակարգերի արդյունքում համապատասխան հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելով: Այն պետք է նաև համապատասխանի մի շարք այլ պահանջների ևս (անկախություն, մասնավորապես, գործադիր իշխանությունից, անաչառություն, անդամների համար սահմանված պաշտոնավարման ժամկետներ, դրա կողմից կիրառվող ընթացակարգով ապահովվող երաշխիքներ), որոնց մի մասը ներկայացված է 6-րդ հոդվածի 1-ին կետում (*Belilos-ն ընդդեմ Շվեյցարիայի*, § 64, *Coëme-ը և այլք ընդդեմ Բելգիայի*, § 99, *Richert-ն ընդդեմ Լեհաստանի*, § 43):

44. Ոչ մեծ ծանրության «քրեական» իրավախախտումների մասով հետապնդման ու դրանց համար պատժի նշանակման գործառույթը վարչական մարմիններին վերապահելը չի հակասում Կոնվենցիայի դրույթներին՝ պայմանով, որ տվյալ անձը հնարավորություն ունենա իր դեմ այդ մեթոդով կայացված ցանկացած որոշում վիճարկելու 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքներն ապահովող որևէ տրիբունալի առջև (*Öztürk-ն ընդդեմ Գերմանիայի*, § 56, *A. Menarini Diagnostics S.R.L.-ն ընդդեմ Իտալիայի*): Հետևաբար, անհրաժեշտ է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները չբավարարող վարչական մարմինների կողմից կայացված որոշումները «լիակատար իրավազորությամբ օժտված դատական մարմնի» կողմից ենթակա լինեն հետագա վերանայման: Այդպիսի մարմնի բնութագրիչ հատկանիշների մեջ է մտնում ստորադաս մարմնի որոշումը փաստացի և իրավական հանգամանքների ուսումնասիրման արդյունքում բոլոր առումներով բեկանելու լիազորությունը (նույն տեղում, § 59, *Schmautzer-ն ընդդեմ Ավստրիայի,* § 36, *Gradinger-ն ընդդեմ Ավստրիայի*, § 44). օրինակ՝ վարչական դատարանները, որոնք իրականացնում էին դատական վերանայում, որը դուրս էր գալիս օրինականության պահանջի «ձևական» վերանայման շրջանակներից և ներառում էր վարչական մարմնի կողմից նշանակված պատժի համապատասխանության և համաչափության մանրամասն վերլուծություն (*A. Menarini Diagnostics S.R.L.-ն ընդդեմ Իտալիայի*, §§ 63-67՝ մրցակցության հարցերով անկախ կարգավորող մարմնի կողմից նշանակված տուգանքի վերաբերյալ): Նույն կերպ, դատական վերանայումը կարող է համապատասխանել 6-րդ հոդվածի պահանջներին, նույնիսկ եթե պատժամիջոցը, իրավախախտման ծանրության աստիճանին համապատասխան, որոշվում է անմիջապես

օրենքով (*Malige-ն ընդդեմ Ֆրանսիայի*, §§ 46-51,վարորդական վկայականից միավորներ հանելու մասով):

45. Կատարման համար պարտադիր այնպիսի որոշումներ կայացնելու լիազորությունը, որոնք չեն կարող փոփոխվել ոչ դատական մարմնի կողմից, ներհատուկ է «տրիբունալ» հասկացությանը (*Findlay-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 77):

Բ. Օրենքի հիման վրա ստեղծված տրիբունալը

46. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տրիբունալը ցանկացած դեպքում պետք է լինի «օրենքի հիման վրա ստեղծված»: Տվյալ արտահայտությունն արտացոլում է օրենքի գերակայության սկզբունքը, որը ներհատուկ է Կոնվենցիայով և դրա Արձանագրություններով սահմանված պաշտպանության համակարգին (*Jorgic-ն ընդդեմ Գերմանիայի*, § 64, *Richert-ն ընդդեմ Լեհաստանի*, § 41): Անկասկած, օրենքի հիման վրա չստեղծված մարմինը զուրկ կլիներ ժողովրդավարական հասարակությունում անհատական բողոքներ քննելու համար պահանջվող լեգիտիմությունից (*Lavents-ն ընդդեմ Լատվիայի*, § 114, *Gorgiladze-ն ընդդեմ Վրաստանի*, § 67, *Kontalexis-ն ընդդեմ Հունաստանի*, § 38):

47. 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «օրենք» հասկացությունը ներառում է, մասնավորապես, դատական մարմինների ստեղծումը և դրանց իրավասությունը կարգավորող օրենսդրությունը (*Lavents-ն ընդդեմ Լատվիայի*, § 114, *Richert-ն ընդդեմ Լեհաստանի*, § 41, *Jorgic-ն ընդդեմ Գերմանիայի*, § 64), ինչպես նաև ներպետական օրենսդրության ցանկացած այլ դրույթ, որի խախտման դեպքում մեկ կամ մի քանի դատավորների մասնակցությունը գործի քննությանը կհակասեր օրենքին(*Pandjikidze-ն և այլք ընդդեմ Վրաստանի*, § 104, *Gorgiladze-ն ընդդեմ Վրաստանի*, § 68): «Օրենքի հիման վրա ստեղծված» արտահայտությունը ներառում է ոչ միայն տրիբունալի գոյության իրավական հիմքը, այլև տրիբունալի կողմից դրա գործունեությունը կարգավորող նորմերը պահպանելը (նույն տեղում) և տրիբունալի կազմը յուրաքանչյուր գործով(*Posokhov-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 39, *Fatullayev-ն ընդդեմ Ադրբեջանի*, § 144, *Kontalexis-ն ընդդեմ Հունաստանի*, § 42):

48. Համապատասխանաբար, եթե ներպետական օրենսդրական դրույթներին համապատասխան՝ ամբաստանյալի գործն ընդդատյա չէ տվյալ տրիբունալին, ապա 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով այդպիսի տրիբունալը չի համարվում «օրենքի հիման վրա ստեղծված» (*Richert-ն ընդդեմ Լեհաստանի*, § 41, *Jorgic-ն ընդդեմ Գերմանիայի*, § 64):

49. 6-րդ հոդվածի իմաստով «օրենքի հիման վրա ստեղծված» եզրույթի նպատակն է «ապահովել, որ ժողովրդավարական հասարակությունում դատարանների կազմակերպումը կախված չլինի գործադիր իշխանության հայեցողությունից, և որ այն կարգավորվի խորհրդարանից դուրս եկած օրենքով (*Richert-ն ընդդեմ Լեհաստանի*, § 42, *Coëme-ը և այլք ընդդեմ Բելգիայի*, § 98): Եվ ոչ էլ այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն սա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ (նույն տեղում, *Gorgiladze-ն ընդդեմ Վրաստանի*, § 69):

50. Սկզբունքորեն, տրիբունալի կողմից դատական մարմինների ստեղծման և դրանց իրավասության վերաբերյալ ազգային օրենսդրության դրույթների խախտումը հանգեցնում է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման: Հետևաբար, Դատարանն իրավասու է

քննելու այն հարցը, թե արդյոք ազգային օրենսդրությունը պահպանվել է այս առումով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն ընդհանուր սկզբունքը, որի համաձայն, ներպետական օրենսդրության դրույթները նախևառաջ մեկնաբանվում են ազգային դատարանների կողմից, Դատարանը չի կարող կասկածի ենթարկել դրանց կողմից կատարված մեկնաբանությունները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է ներպետական օրենսդրության կոպիտ խախտում (*Coëme-ը և այլք ընդդեմ Բելգիայի*, § 98 *in fine (վերջում)*, *Lavents-ն ընդդեմ Լատվիայի*, § 114): Հետևաբար, Դատարանի խնդիրը սահմանափակվում է՝ պարզելով՝ արդյոք ներպետական իշխանություններն ունեցել են բավարար հիմքեր՝ տվյալ գործն իրենց ընդդատության տակ վերցնելու համար (*Jorgic-ն ընդդեմ Գերմանիայի*, § 65):

51. Օրինակներ, երբ Դատարանը եզրակացրել է, որ տվյալ մարմինը «օրենքի հիման վրա ստեղծված... տրիբունալ» չէ՝

- վճռաբեկ դատարան, որը նախարարների կողմից կատարված իրավախախտումների գործով միաժամանակ քննել էր նախարար չհանդիսացող ամբաստանյալների՝ նախարարների կողմից կատարված իրավախախտումների հետ կապված իրավախախտումների առնչությամբ, քանի որ օրենքով սահմանված չէր այնպիսի նորմ, որը թույլ կտար գործերը միացնել իրար (*Coëme-ը և այլք ընդդեմ Բելգիայի*, §§ 107-108).
- դատարան՝ կազմված երկու ոչ մասնագետ դատավորներից [ժողովրդական ատենակալներից], որոնք ընտրվել էին կոնկրետ գործով՝ վիճակահանություն անցկացնելու վերաբերյալ օրենքով սահմանված պահանջի և տարեկան առավելագույնը երկու շաբաթ տևողությամբ պաշտոնավարման ժամկետի խախտմամբ (*Posokhov-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 43).
- դատարան՝ կազմված երկու ոչ մասնագետ դատավորներից, որոնք, ձևավորված ավանդույթի համաձայն, շարունակել էին գործեր քննել՝ չնայած այն բանին, որ ոչ մասնագետ դատավորների մասին օրենքը ճանաչվել էր ուժը կորցրած, իսկ նոր օրենք չէր ընդունվել (*Pandjikidze-ն և այլք ընդդեմ Վրաստանի*, §§ 108-111).
- դատարան, որի կազմը չէր համապատասխանում օրենքին, քանի որ դատավորներից երկուսը, օրենքի համաձայն, իրավունք չունեին մասնակցելու տվյալ գործի քննությանը (*Lavents-ն ընդդեմ Լատվիայի*, § 115):

52. Դատարանը եզրակացրել է, որ տվյալ տրիբունալը եղել է «օրենքի հիման վրա ստեղծված» հետևյալ գործերում՝

- Գերմանիայի դատարան, որը քննել էր Բոսնիայում ցեղասպանության հետ կապված արարքներ կատարելու մեջ մեղադրվող անձի գործ (*Jorgic-ն ընդդեմ Գերմանիայի*, §§ 66-71).
- հատուկ դատարան, որն ստեղծվել էր կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության հետ կապված գործերը քննելու համար (*Fruni-ն ընդդեմ Սլովակիայի*, § 140):

Գ. Անկախությունը և անաչառությունը

53. 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված արդար դատաքննության իրավունքի համար պահանջվում է, որ գործը քննվի օրենքի հիման վրա ստեղծված «անկախ և անաչառ տրիբունալի» կողմից: Գոյություն ունի սերտ կապ «անկախություն» և «օբյեկտիվ անաչառություն» հասկացությունների միջև: Այդ պատճառով Դատարանն այդ երկու պահանջները սովորաբար միասին է դիտարկում (*Findlay-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 73):

Այն սկզբունքները, որոնք կիրառվում են՝ պարզելու համար արդյոք տվյալ տրիբունալը կարող է համարվել «անկախ և անաչառ», հավասար կերպով կիրառվում են մասնագետ դատավորների, ոչ մասնագետ դատավորների և ատենակալների նկատմամբ (*Holm-ն ընդդեմ Շվեդիայի*, § 30):

1. Անկախ տրիբունալը

ա. Ընդհանուր սկզբունքները

54. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում է անկախություն իշխանության մյուս ճյուղերից, այսինքն՝ գործադիր և օրենսդիր իշխանություններից, ինչպես նաև քաղաքական կուսակցություններից (*Ninn-Hansen-ն ընդդեմ Դանիայի* (որոշում)):

55. Չնայած այն բանին, որ պետական իշխանության քաղաքական մարմինների և դատական մարմինների միջև լիազորությունների տարանջատման հասկացության կարևորությունն աճել է Դատարանի նախադեպային իրավունքում, ոչ 6-րդ հոդվածով, և ոչ էլ Կոնվենցիայի այլ դրույթով Պետություններից չի պահանջվում համապատասխանել իշխանության ճյուղերի փոխկապակցվածության թույլատրելի սահմանների վերաբերյալ սահմանադրաիրավական որևէ տեսական գաղափարի: Հարցը մշտապես այն է, թե արդյոք տվյալ գործով պահպանվում են Կոնվենցիայի պահանջները (*Henryk Urban-ը և Ryszard Urban-ն ընդդեմ Լեհաստանի*, § 46):

բ. Անկախությունը գնահատելու չափանիշները

56. Երբ որոշվում է, թե արդյոք տվյալ մարմինը կարող է համարվել «անկախ», Դատարանը հաշվի է առնում հետևյալ չափանիշները՝ (*Findlay-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 73)՝

i. դրա անդամների նշանակման կարգը և

ii. նրանց պաշտոնավարման ժամկետը.

iii. արտաքին ճնշումներից պաշտպանության երաշխիքների առկայությունը.

iv. արդյոք այդ մարմինն օժտված է անկախության արտաքին հատկանիշներով:

i. Մարմնի անդամների նշանակման կարգը

57. Միայն այն հանգամանքը, որ դատավորները նշանակվում են խորհրդարանի կողմից, չի կարող ինքնին կասկածի տակ դնել այդ դատավորների անկախությունը (*Filippini-ն ընդդեմ Սան Մարինոյի* (որոշում), *Ninn-Hansen-ն ընդդեմ Դանիայի* (որոշում)):

58. Նմանապես, դատավորների նշանակումը գործադիր իշխանության կողմից թույլատրելի է՝ պայմանով, որ նշանակված անձանց վրա ազդեցություն կամ ճնշում չի գործադրվում իրենց դատական գործառույթներն իրականացնելիս (*Henryk Urban-ը և Ryszard Urban-ն ընդդեմ Լեհաստանի*, § 49, *Campbell-ը և Fell-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 79):

59. Չնայած այն բանին, որ գործը կոնկրետ դատավորին կամ դատարան հանձնելը մտնում է ներպետական իշխանությունների՝ այդպիսի հարցերում ունեցած հայեցողական լիազորությունների շրջանակի մեջ, Դատարանը պետք է համոզվի, որ դա

համապատասխանում է 6-րդ հոդվածի 1-ին կետին և, մասնավորապես՝ դրանում ամրագրված՝ անկախության և անաչառության պահանջներին (*Moiseyev-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 176):

ii. Մարմնի անդամների կողմից իրենց լիազորությունների իրականացման ժամկետը

60. Պաշտոնավարման անհրաժեշտ նվազագույն ժամկետ սահմանված չէ: Ընդհանուր առմամբ պետք է համարել, որ պաշտոնավարման ընթացքում դատավորների անփոփոխելիությունն անմիջականորեն բխում է նրանց անկախության պահանջից: Սակայն այն, որ այդպիսի անփոփոխելիությունը ձևականորեն ճանաչված չէ օրենքով, ինքնին չի ենթադրում անկախության բացակայություն՝ փաստացի ճանաչված լինելու և անհրաժեշտ այլ երաշխիքների առկայության պայմանով (*Campbell-ը և Fell-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 80):

iii. Արտաքին ճնշումներից պաշտպանության երաշխիքները

61. Դատավորների անկախության համար պահանջվում է, որ առանձին դատավորներն ազատ լինեն ինչպես արտաքին, այնպես էլ դատական համակարգի ներսից բխող անհարկի ազդեցությունից: Դատական համակարգի ներսում անկախության համար պահանջվում է, որ դատավորներն ազատ լինեն գործընկեր դատավորների կամ դատարանում վարչական գործառույթներ իրականացնող անձանց, օրինակ՝ դատարանի նախագահի կամ դատարանի ստորաբաժանման նախագահի հրահանգներից կամ ճնշումից: Դատական համակարգի ներսում դատավորների անկախությունն ու, մասնավորապես, դատական համակարգում իրենց վերադասներից անկախությունն ապահովող երաշխիքների բացակայությունը կարող է պատճառ լինել, որ Դատարանը հանգի այն եզրակացության, որ դիմումատուի կասկածները՝ կապված տվյալ դատարանի անկախության և անաչառության հետ, օբյեկտիվորեն հիմնավորված են (*Parlov-Tkalčić-ն ընդդեմ Խորվաթիայի*, § 86, *Daktaras-ն ընդդեմ Լիտվայի*, *Moiseyev-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 184):

iv. Անկախության արտաքին հատկանիշները

62. Արտաքին հատկանիշները նույնպես կարող են նշանակություն ունենալ՝ պարզելու համար արդյոք տվյալ տրիբունալը կարող է 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն համարվել «անկախ»: Կարևորն այն է, որ ժողովրդավարական հասարակությունում դատարանները վստահություն ներշնչեն հանրությանը, իսկ կոնկրետ գործով քրեական վարույթի դեպքում՝ նախեւառաջ մեղադրյալին (*Şahiner-ն ընդդեմ Թուրքիայի*, § 44):

63. Որոշելու համար, թե արդյոք տվյալ դատարանի անկախությունն ու անաչառությունը կասկածի տակ առնելու որևէ ողջամիտ պատճառ կա, մեղադրյալի տեսակետը կարևոր է, բայց ոչ որոշիչ: Որոշիչն այն է, թե արդյոք նրա կասկածները կարող են համարվել օբյեկտիվորեն հիմնավորված (*Incal-ն ընդդեմ Թուրքիայի*, § 71): Անկախության հետ կապված կասկածներ չեն ծագում, երբ Դատարանը կարծում է, որ քննվող գործի հանգամանքներից ելնելով՝ «օբյեկտիվ դիտորդը» այդ հարցի վերաբերյալ մտահոգությունների պատճառ չէր ունենա (*Clarke-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում)):

64. Եթե տրիբունալի կազմում ընդգրկված են այնպիսի անձինք, որոնք իրենց պարտականությունների և աշխատանքի կազմակերպման տեսանկյունից կողմերից մեկի նկատմամբ գտնվում են ստորադաս դիրքում, ապա մեղադրյալն այդ անձանց անկախության վերաբերյալ կարող է ունենալ ողջամիտ կասկածներ (*Şahiner-ն ընդդեմ Թուրքիայի*, § 45):

2. Անաչառ տրիբունալը

65. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում է, որ այն տրիբունալը, որի վրա տարածվում է դրա գործողությունը, լինի «անաչառ»: Անաչառություն՝ սովորաբար նշանակում է կանխակալության կամ կողմնակալության բացակայություն, և դրա առկայությունը կամ հակառակը՝ բացակայությունը, կարող է ստուգվել տարբեր ձևերով (*Kyprianou-ն ընդդեմ Կիպրոսի* [ՄՊ], § 118, *Micallef-ն ընդդեմ Մալթայի* [ՄՊ], § 93):

ա. Անաչառության գնահատման չափորոշիչները

66. Դատարանը տարբերակում է դնում հետևյալի միջև՝

i. *սուբյեկտիվ* մոտեցում, այն է՝ ջանալ պարզել կոնկրետ գործով տվյալ դատավորի անձնական համոզմունքը կամ շահագրգռվածությունը,

ii. *օբյեկտիվ* մոտեցում, այն է՝ որոշել, թե արդյոք նա բավարար երաշխիքներ է առաջարկել այս առումով որեւէ ողջամիտ կասկած բացառելու համար (*Kyprianou-ն ընդդեմ Կիպրոսի* [ՄՊ], § 118, *Piersack-ն ընդդեմ Բելգիայի*, § 30, *Grieves-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 69):

67. Այնուամենայնիվ, այդ երկու հասկացությունները հստակորեն տարբերակված չեն, քանի որ դատավորի վարքագիծը ոչ միայն կարող է արտաքին դիտորդի մոտ օբյեկտիվ կասկածներ առաջացնել իր անաչառության վերաբերյալ (օբյեկտիվ գնահատում), այլև կարող է վկայել դատավորի անձնական համոզմունքի մասին (սուբյեկտիվ գնահատում): Հետևաբար, որոշելու համար, թե արդյոք տվյալ դեպքում հարկավոր է կիրառել այս կամ այն գնահատումը, պետք է հաշվի առնել վիճարկվող վարքագծի հետ կապված կոնկրետ փաստերը (*Kyprianou-ն ընդդեմ Կիպրոսի* [ՄՊ], §§ 119 և 121):

i. Սուբյեկտիվ մոտեցումը

68. Սուբյեկտիվ գնահատում կիրառելիս Դատարանը բազմիցս եկել է այն եզրահանգման, որ դատավորի անձնական անկողմնակալությունը ենթադրվում է այնքան ժամանակ, քանի դեռ չկան հակառակն ապացուցող փաստեր (*Kyprianou-ն ընդդեմ Կիպրոսի* [ՄՊ], § 119, *Hauschildt-ն ընդդեմ Դանիայի*, § 47):

69. Ինչ վերաբերում է պահանջվող ապացույցի տեսակին, ապա Դատարանը, օրինակ, փորձել է պարզել՝ արդյոք դատավորը ցուցաբերել է թշնամական վերաբերմունք կամ չարամիտ դիտավորություն, կամ փորձել է ստանալ գործը՝ ելնելով անձնական պառճառներից (*De Cubber-ն ընդդեմ Բելգիայի*, § 25):

70. Չնայած որոշ դեպքերում կարող է դժվար լինել այնպիսի ապացույց ձեռք բերելը, որը թույլ կտար հերքել դատավորի սուբյեկտիվ անաչառության կանխավարկածը, սուբյեկտիվ անաչառության պահանջն ապահովում է լրացուցիչ կարևոր երաշխիքի առկայություն:

Դատարանն անշուշտ ընդունել է սուբյեկտիվ կողմնակալության մասով 6-րդ հոդվածի խախտումն արձանագրելու դժվարությունը, և այդ պատճառով դեպքերի ճնշող մեծամասնության պարագայում այն կենտրոնացել է օբյեկտիվ գնահատման վրա (*Kyprianou-ն ընդդեմ Կիպրոսի* [ՄՊ], § 119):

ii. Օբյեկտիվ մոտեցումը

71. Ինչ վերաբերում է օբյեկտիվ գնահատմանը, ապա որպես դատական կազմ հանդես եկող մարմին դիմելու դեպքում, պետք է որոշվի, թե արդյոք, անկախ այդ մարմնի որևէ անդամի անձնական վարքագծից, կան հավաստի փաստեր, որոնք կարող են այդ մարմնի անաչառության վերաբերյալ կասկածներ առաջացնել (*Castillo Algar-ն ընդդեմ Իսպանիայի*, § 45):

72. Երբ որոշվում է, թե արդյոք կոնկրետ մարմնի անաչառության մասով մտավախության որևէ հիմնավոր պատճառ կա, տվյալ մարմնի անաչառությունը վիճարկող անձի տեսակետը կարևոր է, բայց ոչ որոշիչ: Որոշիչ է այն, թե արդյոք նրա մտավախությունը կարող է համարվել օբյեկտիվորեն հիմնավորված (*Ferrantelli-ն և Santangelo-ն ընդդեմ Իտալիայի*, § 58, *Padovani-ն ընդդեմ Իտալիայի* § 27):

73. Օբյեկտիվ գնահատումը հիմնականում վերաբերում է դատավորի և վարույթում ներգրավված այլ անձանց միջև աստիճանակարգային կամ մյուս կապերին, որոնք կարող են օբյեկտիվորեն հիմնավորել տրիբունալի անաչառության հետ կապված մտավախությունները, և, հետևաբար, չեն համապատասխանում Կոնվենցիայի չափանիշներին՝ օբյեկտիվ գնահատման տեսանկյունից (*Micallef-ն ընդդեմ Մալթայի* [ՄՊ], § 97): Հետևաբար, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է որոշել՝ արդյոք տվյալ հարաբերությունների բնույթը և սերտության աստիճանը վկայում են այն մասին, որ տրիբունալն անաչառ չէ (*Pullar-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 38):

74. Այս առումով, նույնիսկ արտաքին հատկանիշները կարող են որոշակի նշանակություն ունենալ: Կարևոր է, որ ժողովրդավարական հասարակությունում դատարանները վստահություն ներշնչեն հանրությանը, այդ թվում՝ մեղադրյալին: Այսպիսով, ցանկացած դատավոր, որի անաչառության մասով կա մտահոգվելու հիմնավոր պատճառ, պետք է գործի քննությունից հեռացվի (*Castillo Algar-ն ընդդեմ Իսպանիայի*, § 45):

75. Ուշադրություն պետք է դարձվի նաև ներքին կառուցվածքային հարցերին (*Piersack-ն ընդդեմ Բելգիայի*, § 30 (դ)): Անաչառության ապահովման մասով ազգային ընթացակարգերի, մասնավորապես՝ դատավորներին գործի քննությունից հեռացնելը կարգավորող կանոնների առկայությունն էական գործոն է: Այդպիսի կանոնները վկայում են այն մասին, որ ազգային օրենսդիրները հատուկ ուշադրություն են դարձնում տվյալ դատավորի կամ դատարանի անաչառության հետ կապված հիմնավոր բոլոր կասկածները վերացնելուն, և այդպիսի կասկածների պատճառները վերացնելու միջոցով փորձում են անաչառություն ապահովել: Որպես այդպիսին կողմնակալության բացակայությունն ապահովելուց բացի՝ այդ կանոններն ուղղված են կողմնակալության ցանկացած արտաքին հատկանիշ վերացնելուն, և այդպիսով նպաստում են, որ ժողովրդավարական հասարակությունում դատարանները հանրությանը վստահություն ներշնչեն (տե՛ս *Micallef-ն ընդդեմ Մալթայի* [ՄՊ], § 99, *Mežnarić-ն ընդդեմ Խորվաթիայի*, § 27, *Harabin-ն ընդդեմ v. Սլովակիայի*, § 132): Դատարանը հաշվի կառնի այդ կանոնները «տրիբունալի» անաչառության և, մասնավորապես, դիմումատուի մտավախություններն օբյեկտիվորեն հիմնավորված լինելու վերաբերյալ իր սեփական գնահատումը կատարելիս

(*Pfeifer-ը և Plankl-ն ընդդեմ Ավստրիայի*, § 6, *Oberschlick-ն ընդդեմ Ավստրիայի (թիվ 1)*, § 50, *Pescador Valero-ն ընդդեմ Իսպանիայի*, §§ 24-29):

բ. Իրավիճակներ, երբ կարող են կասկածներ առաջանալ դատարանի անաչառության վերաբերյալ

76. Գոյություն ունի երկու հնարավոր իրավիճակ, երբ կարող են կասկածներ առաջանալ դատարանի անաչառության վերաբերյալ (*Kyprianou-ն ընդդեմ Կիպրոսի* [ՄՊ], § 121)՝

i. առաջինը կրում է *գործառութային բնույթ* և վերաբերում է, օրինակ, դատական գործընթացի շրջանակներում միևնույն անձի կողմից տարբեր գործառույթների իրականացմանը կամ վարույթին ներգրավված այլ անձի հետ աստիճանակարգային կամ այլ կապերի.

ii. երկրորդն *անձնական բնույթի* է և բխում է տվյալ գործում դատավորի *վարքագծից*.

i. Գործառութային բնույթի իրավիճակները

ա. Տարբեր դատական գործառույթների իրականացումը

77. Այն փաստը, որ քրեական դատարանը մինչդատական վարույթի ընթացքում կայացրել է գործի վերաբերյալ որոշումներ՝ ներառյալ նախնական կալանքի մասին որոշումները, չի կարող ինքնին դիտարկվել որպես անաչառության բացակայության վերաբերյալ մտավախությունները հիմնավորող. նշանակություն ունեն այդ որոշումների շրջանակը և բնույթը (*Fey-ն ընդդեմ Ավստրիայի*, § 30, *Sainte-Marie-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 32, *Nortier-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 33): Այն դեպքում, երբ նախնական կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումները մեղավորության հարցով պահանջել են «հստակության շատ բարձր աստիճան», Դատարանը եկել է այն եզրահանգման, որ տվյալ տրիբունալների անաչառությունը կարող էր կասկածների տեղիք տալ, և այդ կապակցությամբ դիմումատուի մտավախությունները կարող էին համարվել օբյեկտիվորեն հիմնավորված (*Hauschildt-ն ընդդեմ Դանիայի*, §§ 49-52):

78. Այն փաստը, որ դատավորը նախկինում եղել է դատախազության վարչության աշխատակից, պատճառ չէ նրա անաչառության հետ կապված մտավախություններ ունենալու համար. այնուամենայնիվ, եթե այն անձը, որն այդ վարչությունում զբաղեցրել է պաշտոն, որի բնույթից ելնելով նա կարող էր զբաղվել տվյալ հարցով իր պարտականությունների կատարման ընթացքում, հետագայում մասնակցում է նույն գործի քննությանը որպես դատավոր, ապա հանրությունը կարող է ունենալ մտավախություն, որ տվյալ անձը անաչառության բավարար երաշխիքներ չի ապահովում (*Piersack-ն ընդդեմ Բելգիայի*, § 30 (բ) և (դ)):

79. Այն, որ նույն անձը նույն գործով շարունակաբար իրականացրել է նախնական քննության հարցերով պատասխանատու դատավորի և գործը քննող դատավորի գործառույթները, թույլ տվեց Դատարանին հանգել է այն եզրակացության, որ գործը քննող դատարանի անաչառությունը կարող էր դիմումատուի մոտ կասկածների տեղիք տալ (*De Cubber-ն ընդդեմ Բելգիայի*, §§ 27-30):

Սակայն, այն դեպքերում, երբ գործը քննող դատավորի մասնակցությունը քննությանն ունեցել է ժամանակային սահմանափակում, կայացել է երկու վկաներին հարցաքննելու մեջ, չի հանգեցրել ապացույցների գնահատման և նրանից չի պահանջվել եզրակացություններ կատարել, Դատարանը եկել է այն եզրահանգման, որ ազգային

իրավասու դատարանի անաչառության հետ կապված դիմումատուի մտավախությունը չի կարող համարվել օբյեկտիվորեն հիմնավորված (*Bulut-ն ընդդեմ Ավստրիայի*, §§ 33-34):

80. Դատավորի անաչառության բացակայության հարցը չի առաջանում այն դեպքում, երբ դատավորը նախկինում կայացրել է բացառապես ձևական կամ ընթացակարգային որոշումներ վարույթների մյուս փուլերում. սակայն անաչառության հետ կապված խնդիրներ կարող են առաջանալ, եթե վարույթի մյուս փուլերում դատավորը կարծիք է հայտնել մեղադրյալի մեղավորության մասին (*Gómez de Liaño y Botella ընդդեմ Իսպանիայի*, §§ 67-72):

81. Այն փաստը, որ դատավորը որոշումներ է կայացրել նույնանման, բայց միմյանց հետ չկապված քրեական մեղադրանքների վերաբերյալ, կամ այն, որ նա արդեն մասնակցել է նույն մեղադրյալի գործի քննությանն այլ քրեական վարույթում, ինքնին բավարար չէ՝ այդ դատավորի անաչառությունը հետագա գործի քննության ժամանակ կասկածի տակ դնելու համար (*Kriegisch-ն ընդդեմ Գերմանիայի* (որոշում). *Khodorkovskiy-ն և Lebedev-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 544): Սակայն այլ հարց է, երբ ավելի վաղ կայացված դատավճիռները պարունակում են եզրահանգումներ, որոնք փաստացի կանխորոշում են մեղադրյալի մեղավորության հարցն այդպիսի հետագա վարույթներում (*Poppe-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 26, *Schwarzenberger-ն ընդդեմ Գերմանիայի*, § 42, *Ferrantelli-ն և Santangelo-ն ընդդեմ Իտալիայի*, § 59):

82. Անաչառություն պահպանելու պարտավորությունը չի կարող մեկնաբանվել այնպես, որ պարտադրվեն պարտավորություններ այն վերադաս դատարանին, որը բեկանում է վարչական կամ դատական որոշումները և գործը վերադարձնում այլ իրավասության մարմին կամ այդ մարմնի մեկ այլ կազմի (*Thomann-ն ընդդեմ Շվեյցարիայի*, § 33, *Stow-ն և Gai-ն ընդդեմ Պորտուգալիայի* (որոշում)):

β. Աստիճանակարգային կամ այլ կապեր վարույթի մյուս մասնակիցների հետ

- *Աստիճանակարգային կապերը*

83. Զինվորականներին ներկայացված քրեական մեղադրանքների հիմնավորվածության պարզումը զինվորական տրիբունալի կողմից հիմնականում չի հակասում 6-րդ հոդվածի դրույթներին (*Cooper-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 110): Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ զինվորական դատարանի բոլոր անդամներն ունեցել են ավելի ցածր կոչում, քան դատական նիստ գումարող զինվորականը, և գտնվել են նրա ենթակայության ներքո, դիմումատուի՝ տվյալ տրիբունալի անաչառության հետ կապված կասկածները կարող էին լինել օբյեկտիվորեն հիմնավորված (*Findlay-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 76, *Miller-ը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության*, §§ 30-31):

84. Քաղաքացիական անձանց գործերով վարույթը, որն իրականացվում է մասամբ զինված ուժերի ծառայողներից կազմված դատարանի կողմից, կարող է առաջացնել ողջամիտ մտավախություն, որ դատարանը կարող է ենթարկվել ոչ օբյեկտիվ տեսանկյունների ազդեցության (*Incal-ն ընդդեմ Թուրքիայի*, § 72, *Iprahim Ülger-ն ընդդեմ Թուրքիայի*, § 26): Նույնիսկ եթե զինվորական դատավորը քաղաքացիական անձի դեմ հարուցված գործով վարույթում մասնակցել է միայն նախնական որոշում կայացնելուն, որը շարունակում է ուժի մեջ մնալ, վարույթն ընդհանուր առմամբ զրկվում է անկախ և անաչառ դատավորի կողմից իրականացված լինելու հատկանիշներից (*Öcalan-ն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], § 115):

85. Այն իրավիճակները, որոնց դեպքում զինվորական դատարանն իրավասու է իրականացնելու քաղաքացիական անձի դեմ հարուցված գործով դատական վարույթ՝ զինված ուժերի դեմ կատարված գործողությունների համար, կարող են առաջացնել հիմնավոր կասկածներ՝ այդպիսի դատարանի օբյեկտիվ անաչառության հետ կապված: Այն դատական համակարգը, որտեղ զինվորական դատարանն իրավասու է իրականացնելու այն անձի դեմ հարուցված գործով դատական վարույթ, որը զինված ուժերի ծառայող չէ, հեշտությամբ կարող է համարվել այնպիսի համակարգ, որտեղ չի պահպանվում դատարանի և քրեական վարույթի մասնակիցների միջև անհրաժեշտ հեռավորությունը, նույնիսկ եթե առկա են այդ դատարանի անկախությունն ապահովող բավարար երաշխիքներ (*Ergin-ն ընդդեմ Թուրքիայի*, § 49):

86. Զինվորական դատարաններում քաղաքացիական անձանց ներկայացված քրեական մեղադրանքների հիմնավորվածությունը պարզելը կարող է համարվել 6-րդ հոդվածին համապատասխան միայն բացառիկ հանգամանքներում (*Martin-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 44):

- *Այլ կապեր*

87. Քննող դատարանի նախագահող դատավորի անաչառության հետ կապված կասկածները ճանաչվել են օբյեկտիվորեն հիմնավորված, երբ պարզվել է, որ դատավորի ամուսինը գլխավորել է դիմումատուների գործով զբաղվող քննիչների թիմը (*Dorozhko-ն և Pozharskiy-ն ընդդեմ Էստոնիայի*, §§ 56-58):

88. Այն փաստը, որ տրիբունալի անդամն անձամբ ծանոթ է գործով վկաներից մեկի հետ, անհրաժեշտաբար չի նշանակում, որ այդ դատավորը կանխակալ մոտեցում է ցուցաբերելու այդ անձի ցուցմունքների նկատմամբ: Յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է որոշել՝ արդյոք տվյալ ծանոթությունն այն բնույթի և սերտության աստիճանի է, որ կասկածներ առաջացնի՝ կապված տրիբունալի անաչառության հետ (*Pullar-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 38՝ ատենակալների կազմում մեղադրանքի կողմի երկու հիմնական վկաներից մեկի աշխատողի ներկայության առնչությամբ. *Hanif-ը և Khan-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 141՝ ատենակալների կազմում ոստիկանության ծառայողի ներկայության առնչությամբ):

ii. Անձնական բնույթի իրավիճակները

89. Որպես անաչառ դատավորներ բնութագրվելու համար դատական մարմինները պետք է չափազանց շրջահայաց լինեն իրենց հանձնարարված գործերը քննելիս: Այդպիսի շրջահայացությունը ենթադրում է, որ վերջիններս չպետք է օգտագործեն մամուլը, նույնիսկ եթե նրանց դրդում են դրան: Այդ պարտավորությունը սահմանվում է արդարադատության բարձր պահանջներով և դատավորի պաշտոնի բնույթով (*Lavents-ն ընդդեմ Լատվիայի*, § 118, *Buscemi-ն ընդդեմ Իտալիայի*, § 67): Ուստի, եթե դատարանի նախագահը հրապարակայնորեն օգտագործել է արտահայտություններ, որոնք թույլ են տվել ենթադրել, որ նա արդեն ոչ բարենպաստ կարծիք է կազմել դիմումատուի գործի վերաբերյալ՝ նախքան դրա վերաբերյալ դատական նիստը նախագահելը, ապա այդպիսի պնդումները կարող են օբյեկտիվորեն հիմնավորել դատավորի անաչառության հետ կապված մեղադրյալի մտավախությունները (նույն տեղում, § 68, տե՛ս նաև *Lavents-ն ընդդեմ Լատվիայի*, § 119, երբ դատավորը հրապարակայնորեն քննադատել էր

պաշտպանության կողմին և զարմանք հայտնել, որ մեղադրյալը չի ճանաչել իր մեղավորությունը):

90. 6-րդ հոդվածի խախտում չի հայտնաբերվել՝ կապված ազգային իրավաբանական ծառայության մի շարք անդամների կողմից մամուլի և Դատավորների ու դատախազների ազգային ասոցիացիայի կողմից հրատարակվող թերթի համար արված այն հայտարարությունների հետ, որոնցով քննադատվել է այն քաղաքական միջավայրը, որում անցել է դատական քննությունը, ինչպես նաև Կառավարության կողմից առաջարկված օրենսդրական բարեփոխումները և պաշտպանության ռազմավարությունը, սակայն ոչինչ չի ասվել դիմումատուի մեղավորության մասին: Ավելին, դիմումատուի գործը քննող դատարանը կազմված է եղել բացառապես մասնագետ դատավորներից, որոնց փորձը և պատրաստվածությունը թույլ են տվել վերջիններիս խուսափել արտաքին ազդեցություններից (*Previti-ն ընդդեմ Իտալիայի* (որոշում), § 253):

IV. Ընդհանուր երաշխիքներ. ընթացակարգային պահանջները

Ա. Արդարացիությունը

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են ... իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը ... ունի ... տրիբունալի կողմից .... արդարացի ... դատաքննության իրավունք»:

1. Կողմերի իրավահավասարությունը և մրցակցային դատավարությունը

91. Կողմերի իրավահավասարությունն արդար դատաքննությանը ներհատուկ առանձնահատկություն է: Այդ սկզբունքով պահանջվում է, որ կողմերից յուրաքանչյուրին տրվի իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու համապատասխան հնարավորություն, որն իր համար էապես վատ պայմաններ չի ստեղծի՝ համեմատած իր հակառակորդի հետ (*Foucher-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 34, *Bulut-ն ընդդեմ Ավստրիայի*, *Bobek-ն ընդդեմ Լեհաստանի*, § 56, *Klimentyev-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 95): Կողմերի իրավահավասարությամբ պահանջվում է, որ կողմերի միջև ապահովվի արդարացի հավասարակշռություն, և հավասարապես կիրառվում է քրեական և քաղաքացիական գործերում:

92. Մրցակցային դատավարության իրավունքը հիմնականում նշանակում է, որ կողմերին պետք է տրվի ներկայացված բոլոր ապացույցներին կամ դիտարկումներին ծանոթանալու և դրանք մեկնաբանելու հնարավորություն՝ դատարանի որոշման վրա ազդելու նպատակով: Մրցակցային դատավարության իրավունքը սերտորեն կապված է կողմերի իրավահավասարության հետ, և որոշ դեպքերում, իսկապես, Դատարանն արձանագրում է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ այդ երկու հասկացությունները միասին դիտարկելով:

93. Դատարանի նախադեպային իրավունքում տեղի են ունեցել էական զարգացումներ, մասնավորապես, կապված այն նշանակության հետ, որը տրվում է արդարադատության արտաքին հատկանիշներին և արդարադատության իրականացման նկատմամբ հասարակության հատուկ ուշադրությանը (*Borgers-ն ընդդեմ Բելգիայի*, § 24):

94. Քրեական գործերում 6-րդ հոդվածի 1-ին կետը համընկնում է 6-րդ հոդվածի 3-րդ կետի հատուկ երաշխիքների հետ, սակայն դա չի սահմանափակվում տվյալ հոդվածով սահմանված իրավունքներով: Իսկապես, 6-րդ հոդվածի 3-րդ կետում ներկայացված երաշխիքները, ի թիվս այլոց, 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար դատաքննության հասկացության բաղկացուցիչ տարրերն են:

ա. Կողմերի իրավահավասարությունը

95. Պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակում է հայտնաբերվել *Borgers-ն ընդդեմ Բելգիայի* գործում, որտեղ դիմումատուին Վճռաբեկ դատարանում հնարավորություն չէր տրվել պատասխանելու *գլխավոր փաստաբանի* ներկայացրած գրավոր փաստարկներին և նախապես չէին տրամադրվել այդ գրավոր փաստարկների պատճենները: Կողմերի անհավասարությունն ավելի է խորացել, երբ *գլխավոր փաստաբանը* մասնակցել է դատարանի խորհրդակցություններին՝ խորհրդատվական ձայնի իրավունքով:

96. Դատարանը հայտնաբերել է 6-րդ հոդվածի 1-ին կետի և 6-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում քրեական վարույթում, որի ժամանակ պաշտպանը ստիպված է եղել սպասել տասնհինգ ժամ՝ մինչև վաղ առավոտյան իր գործով հանդես գալու հնարավորություն ստանալը (*Makhfi-ն ընդդեմ Ֆրանսիայի*): Նույն կերպ, Դատարանը հայտնաբերել է կողմերի իրավահավասարության սկզբունքի խախտում՝ կապված քրեական գործով Գերագույն դատարանի որոշման հետ: Վերաքննիչ կարգով գործի քննության ժամանակ մեղավոր ճանաչված և դատական նիստին ներկա գտնվելու թույլտվություն խնդրած դիմումատուին թույլ չէր տրվել մասնակցել դռնփակ նախնական նիստին (*Zhuk-ն ընդդեմ Ուկրաինայի*, § 35):

97. Հակառակ դրան, կողմերի իրավահավասարության վերաբերյալ բողոքը ճանաչվել է անընդունելի՝ բացահայտ անհիմն լինելու պատճառով, երբ դիմումատուն բողոք էր ներկայացրել՝ կապված այն բանի հետ, որ դատախազը զբաղեցնում էր ավելի բարձր դիրք, քան վարույթի կողմերը: Իր շահերի պաշտպանության առումով մեղադրյալն անբարենպաստ իրավիճակում չէր հայտնվել (*Diriöz-ն ընդդեմ Թուրքիայի*, § 25):

98. Օրենսդրությամբ սահմանված՝ քրեական դատավարության կանոնների բացակայությունը կարող է խախտել կողմերի իրավահավասարության սկզբունքը, քանի որ դրանց նպատակն է պաշտպանել ամբաստանյալին իշխանության մարմինների կողմից լիազորությունների չարաշահումից, և, հետևաբար, այդպիսի կանոնների բացակայությունը կամ հստակ չլինելն առավել շատ վնասում է հենց պաշտպանության կողմին (*Coëme-ը և այլք ընդդեմ Բելգիայի*, § 102):

99. Մեղադրանքի կողմի և պաշտպանության կողմի վկաները պետք է արժանանան հավասար վերաբերմունքի, սակայն, խախտման հայտնաբերումը կախված է այն բանից՝ արդյոք վկան իսկապես արտոնյալ դիրքում է եղել (*Bonicsh-ն ընդդեմ Ավստրիայի*, § 32, հակառակ դրա՝ տե՛ս *Brandstetter-ն ընդդեմ Ավստրիայի*, § 45):

100. Պաշտպանության կողմին ապացույցներին չծանոթացնելը կարող է խախտել կողմերի իրավահավասարությունը (ինչպես նաև մրցակցային դատավարության

իրավունքը) (*Kuopila-ն ընդդեմ Ֆինլանդիայի*, § 38, որտեղ պաշտպանության կողմին հնարավորություն չի տրվել մեկնաբանություններ կատարել ոստիկանության լրացուցիչ հաշվետվության վերաբերյալ):

101. Կողմերի իրավահավասարությունը կարող է խախտվել նաև այն դեպքում, երբ մեղադրյալի՝ իր գործի նյութերին և այլ փաստաթղթերի ծանոթանալու իրավունքը սահմանափակվել է՝ ելնելով հանրային շահերի պաշտպանությունից (*Matyjek-ն ընդդեմ Լեհաստանի*, § 65):

բ. Մրցակցային դատավարությունը

102. Արդար դատաքննության իրավունքի հիմնարար կողմն այն է, որ քրեական վարույթները, այդ թվում՝ դրանց՝ դատավարությանն առնչվող տարրերը, պետք է հիմնված լինեն մրցակցության սկզբունքի վրա և, որ մեղադրանքի կողմի և պաշտպանության կողմի միջև պետք է պահպանվի կողմերի իրավահավասարության սկզբունքը: Քրեական գործով մրցակցային դատավարության իրավունքը ենթադրում է, որ և՛ մեղադրանքի կողմին, և՛ պաշտպանության կողմին պետք է տրվի մյուս կողմի ներկայացրած բոլոր դիտարկումներին և ապացույցներին ծանոթանալու և դրանք մեկնաբանելու հնարավորություն: Բացի այդ, 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում է, որ դատախազության մարմինները պաշտպանության կողմին ներկայացնեն իրենց մոտ առկա բոլոր իրեղեն ապացույցները, որոնք մեղադրյալի օգտին են կամ նրա դեմ (*Rowe-ն և Davis-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 60):

103. Քրեական դատավարությունում 6-րդ հոդվածի 1-ին կետը հաճախ համընկնում է 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պաշտպանության այնպիսի իրավունքների հետ, ինչպիսին է վկաներին հարցաքննելու իրավունքը:

104. Այն դեպքերում, երբ պաշտպանության կողմին հնարավորություն չի տրվել ծանոթանալու ապացույցին՝ ելնելով հանրային շահերից, Դատարանը չի ուսումնասիրում այն հարցը, թե արդյոք տվյալ դեպքում ապացույցները չբացահայտելու որոշումը հիմնավորված է եղել: Փոխարենը, այն դիտարկում է որոշում ընդունելու ընթացակարգը՝ ապահովելու համար, որ այն հնարավորինս համապատասխանի մրցակցային դատավարության և կողմերի իրավահավասարության պահանջներին ու ներառի մեղադրյալի շահերը պաշտպանելու համար համապատասխան երաշխիքներ:

105. *Rowe-ն և Davis-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] գործով Դատարանը հայտնաբերել է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ կապված այն բանի հետ, որ մեղադրանքի կողմը տվյալ ապացույցը չէր ներկայացրել գործը քննող դատավորին և թույլ չէր տվել նրան որոշում կայացնել այդ ապացույցի բացահայտման վերաբերյալ, այդպիսով զրկելով դիմումատուների արդար դատաքննության իրավունքից: Սակայն, *Jasper-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] (§ 58) գործում Դատարանը չի հայտնաբերել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ հիմնվելով այն փաստի վրա, որ չբացահայտված նյութերը մեղադրական նյութերի մաս երբևէ չեն կազմել և չեն ներկայացվել ատենակալներին:

106. Այնուամենայնիվ, համապատասխան ապացույցին ծանոթանալու իրավունքը բացարձակ իրավունք չէ: Քրեական վարույթում կարող են լինել մրցակցող շահեր, ինչպիսին ազգային անվտանգությունը կամ այն վկաներին պաշտպանելու անհրաժեշտությունն է, որին վտանգ է սպառնում, կամ հանցագործությունների քննության համար ոստիկանության կողմից կիրառվող մեթոդները գաղտնի պահելու անհրաժեշտությունը, որը պետք է հակակշռվի մեղադրյալի շահերի հետ: Որոշ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել պաշտպանության կողմին թույլ չտալ ծանոթանալ կոնկրետ

ապացույցին՝ պահպանելու համար այլ անձի հիմնարար իրավունքները կամ ապահովելու համար կարևոր հանրային շահերի պաշտպանությունը: Այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ թույլատրվում է կիրառել միայն պաշտպանության կողմի իրավունքները սահմանափակող այնպիսի միջոցներ, որոնք խիստ անհրաժեշտ են (*Van Mechelen-ը և այլք ընդդեմ Նիդեռլանդների*, § 58): Ավելին, ապահովելու համար ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքը՝ ցանկացած դժվարություն, որի հետ բախվում է պաշտպանության կողմն իր իրավունքների սահմանափակման պատճառով, պետք է պատշաճ կերպով հակակշռվի դատական մարմինների կողմից պահպանվող ընթացակարգերով (նույն տեղում, § 54, *Doorson-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 72):

107. *Edwards-ը և Lewis-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] գործով, դիմումատուներին թույլ չի տրվել ծանոթանալ ապացույցներին, և, հետևաբար, նրանց ներկայացուցիչները չեն կարողացել ամբողջովին ներկայացնել իրենց փաստարկները դատարանում՝ սադրանքի հետ կապված գործով: Դատարանը, համապատասխանաբար, ճանաչել է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտումը, քանի որ այն ընթացակարգը, որը կիրառվել է ապացույցների բացահայտման և սադրանքի հետ կապված հարցերի լուծման համար, չի համապատասխանել մրցակցային դատավարության և կողմերի իրավահավասարության պահանջներին, ինչպես նաև չի ներառել մեղադրյալի շահերի պաշտպանության համապատասխան երաշխիքներ:

108. Մրցակցային դատավարության իրավունքի խախտում հայտնաբերվել է նաև այն դեպքում, երբ կողմերը մինչև դատական նիստը չեն ստացել զեկուցող դատավորի զեկույցը, մինչդեռ գլխավոր փաստաբանը ստացել է այն, ինչպես նաև այն դեպքում, երբ նրանք հնարավորություն չեն ունեցել պատասխանելու գլխավոր փաստաբանի գրավոր փաստարկներին (*Reinhardt-ը և Slimane-Kaïd-ն ընդդեմ Ֆրանսիայի,* §§ 105-106):

2. Դատական որոշումների պատճառաբանումը

109. Ձևավորված այն նախադեպային իրավունքի համաձայն, որն արտացոլում է արդարադատության պատշաճ իրականացման հետ կապված սկզբունքը, դատարանների և տրիբունալների որոշումներում պետք է պատշաճորեն ներկայացված լինեն այն պատճառները, որոնց հիման վրա դրանք ընդունվել են (*Papon-ն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում)):

110. Պատճառաբանված որոշումներն անհրաժեշտ են՝ կողմերին ցույց տալու համար, որ նրանց լսել են, այդպիսով նպաստելով, որ վերջիններս ավելի պատրաստակամ լինեն՝ ընդունելու իրենց մասով կայացված որոշումը: Բացի այդ, դրանք պարտավորեցնում են դատավորներին, որ վերջիններիս պատճառաբանությունները հիմնված լինեն օբյեկտիվ փաստարկների վրա, ինչպես նաև պահպանում են պաշտպանության կողմի իրավունքները: Այնուամենայնիվ, որոշումները պատճառաբանելու պարտավորության ծավալը կարող է տարբեր լինել՝ կախված որոշման բնույթից, և պետք է որոշվի՝ հաշվի առնելով գործի հանգամանքները (*Ruiz Torija-ն ընդդեմ Իսպանիայի,* § 29):

111. Չնայած դատարանները պարտավոր չեն մանրամասն պատասխան ներկայացնել առաջադրված յուրաքանչյուր փաստարկի վերաբերյալ (*Van de Hurk-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 61), որոշումից պետք է պարզ լինի, որ գործի կարևոր հարցերն ուսումնասիրվել են (*Boldea-ն ընդդեմ Ռումինիայի*, § 30):

112. Ազգային դատարանները պետք է բավական պարզ ներկայացնեն այն հիմքերը, որոնցով ընդունվել է նրանց որոշումը, որպեսզի կողմին թույլ տան արդյունավետորեն

իրականացնել բողոքարկման ցանկացած իրավունք (նույն տեղում, *Hadjianastassiou-ն ընդդեմ Հունաստանի*):

Ատենակալների կողմից կայացված որոշումների պատճառաբանական մասը

113. Ատենակալները քրեական գործերով հազվադեպ են պատճառաբանված վճիռներ կայացնում, և այն, թե արդյոք դա համապատասխանում է արդարության սկզբունքին, քննարկվել է մի շարք գործերում՝ սկզբից Հանձնաժողովի, այնուհետև՝ Դատարանի կողմից:

114. Կոնվենցիայի համաձայն՝ ատենակալներից չի պահանջվում պատճառաբանել իրենց որոշումները, և 6-րդ հոդվածը չի խոչընդոտում ատենակալների կողմից ամբաստանյալի նկատմամբ դատական քննություն իրականացնելը, նույնիսկ եթե վճռի մեջ չեն ներկայացվում դրա պատճառները (*Saric-ն ընդդեմ Դանիայի* (որոշում)): Այնուամենայնիվ, արդար դատաքննության պահանջները կատարելու համար մեղադրյալները, ինչպես և հանրությունը, պետք է կարողանան հասկանալ կայացված վճիռը. դա կարևոր երաշխիք է կամայականության դեմ (*Taxquet-ն ընդդեմ Բելգիայի* [ՄՊ], § 92, *Legillon-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 53):

115. Երդվյալ ատենակալների դատարանների դեպքում պետք է հաշվի առնվեն բոլոր ընթացակարգային առանձնահատկությունները, քանի որ ատենակալներից սովորաբար չի պահանջվում (կամ նրանց չի թույլատրվում) պատճառաբանել մեղավորության մասին անձնական կարծիքը: Այս պարագայում, 6-րդ հոդվածով պահանջվում է գնահատել՝ արդյոք ապահովվել են համապատասխան երաշխիքներ՝ կամայականության ռիսկից խուսափելու համար, և որպեսզի մեղադրյալը կարողանա հասկանալ իր նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի պատճառները: Այդպիսի դատավարական երաշխիքները կարող են ներառել, օրինակ, նախագահող դատավորի կողմից ցուցումներ կամ ուղղորդումներ ատենակալներին իրավական հարցերի կամ ներկայացված ապացույցների, դատավորի կողմից ատենակալներին ուղղված երկիմաստ հարցերի վերաբերյալ, այդպիսով ստեղծելով վճռի կայացման համար հիմքեր կամ պատշաճորեն ընդգծելով ատենակալների պատասխանների չհիմնավորված լինելու փաստը (*R.-ն ընդդեմ Բելգիայի*, Հանձնաժողովի որոշում, *Zarouali-ն ընդդեմ Բելգիայի*, Հանձնաժողովի որոշում, *Planka-ն ընդդեմ Ավստրիայի*, Հանձնաժողովի որոշում, *Papon-ն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում)): Դատարանը հայտնաբերել է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում այն դեպքում, երբ երդվյալ ատենակալների դատարանը հրաժարվել է ամբաստանյալներից յուրաքանչյուրի հետ կապված հստակ հարցադրումներ կատարել ծանրացուցիչ հանգամանքների առկայության վերաբերյալ՝ այդպիսով հնարավորություն չտալով ատենակալներին որոշելու դիմումատուի անձնական քրեական պատասխանատվությունը (*Goktepe-ն ընդդեմ Բելգիայի,* § 28):

116. *Bellerín Lagares-ն ընդդեմ Իսպանիայի* (որոշում) գործում Դատարանը նշել է, որ վիճարկվող դատավճիռը, որին կից ներկայացվել են ատենակալների խորհրդակցությունների վերաբերյալ գրառումները, պարունակել է այն փաստերի ցանկը, որոնք ատենակալները հաստատված են համարել դիմումատուին մեղավոր ճանաչելիս, նշված փաստերի իրավական վերլուծությունը, և, վճիռ կայացնելու համար, հղում պարզված այն հանգամանքներին, որոնք կարող էին ազդել տվյալ գործում դիմումատուի պատասխանատվության աստիճանի վրա: Ուստի, Դատարանը գտել է, որ տվյալ դատավճիռը եղել է բավականաչափ պատճառաբանված՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի տեսանկյունից:

117. Հարկավոր է հաշվի առնել մեղադրյալին հասանելի բողոքարկման բոլոր միջոցները (*Taxquet-ն ընդդեմ Բելգիայի* [ՄՊ], § 92): Տվյալ դեպքում դիմումատուի հետ կապված կատարվել է ընդամենը չորս հարցադրում. դրանք նման են եղել նույն գործով մյուս մեղադրյալների հետ կապված հարցադրումներին և թույլ չեն տվել դիմումատուին պարզել այն փաստացի և իրավական հիմքերը, որոնցով նա մեղավոր է ճանաչվել: Ուստի, այն, որ նա չի կարողացել հասկանալ, թե ինչու է մեղավոր ճանաչվել, հանգեցրել է ոչ արդար դատաքննության (նույն տեղում, § 100):

118. *Judge-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում) գործով Դատարանը պարզել է, որ Շոտլանդիայի ատենակալների չհիմնավորված վճռի ընդհանուր համատեքստը բավարար է եղել, որ մեղադրյալը հասկանա վճիռը: Ավելին, Դատարանը նաև համոզվել է, որ Շոտլանդիայի օրենսդրությամբ սահմանված բողոքարկման իրավունքները բավարար են եղել ատենակալների կողմից ցանկացած ոչ իրավաչափ վճռի կապակցությամբ իրավական պաշտպանության միջոց ունենալու համար: Կիրառվող օրենսդրության համաձայն՝ Վերաքննիչ դատարանն ունեցել է վերանայման մասով լիազորությունների լայն շրջանակ և իրավասու է եղել բեկանելու ցանկացած ոչ արդարացի մեղադրական դատավճիռ:

3. Լռություն պահպանելու և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը

ա. Հաստատումը և կիրառության ոլորտը

119. Յուրաքանչյուր անձ, որին ներկայացվել է քրեական մեղադրանք, իրավունք ունի լռություն պահպանելու և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու (*Funke-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 44, *O'Halloran-ը և Francis-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 45, *Saunders-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 60): Չնայած լռություն պահպանելու իրավունքը և ցուցմունք տալու պարտավորությունից ազատ լինելը հատուկ նշված չեն 6-րդ հոդվածում, դրանք համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային չափանիշներ են, որոնք ընկած են արդար դատաքննության հիմքում՝ 6-րդ հոդվածի համաձայն: Պաշտպանելով մեղադրյալին իշխանության մարմինների կողմից անհարկի հարկադրանքից՝ այս արտոնությունները թույլ են տալիս խուսափել արդարադատության ոչ պատշաճ իրականացումից և հասնել 6-րդ հոդվածի նպատակներին (*John Murray-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 45):

120. Սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը կիրառվում է քրեական վարույթների նկատմամբ՝ քրեական իրավախախտումների բոլոր տեսակների մասով (ամենապարզից մինչև ամենաբարդ իրավախախտումներ) (*Saunders-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 74):

121. Լռություն պահպանելու իրավունքը գործում է այն պահից, երբ կասկածյալը հարցաքննվում է ոստիկանության կողմից (*John Murray-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 45):

բ. Շրջանակը

122. Սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը ենթադրում է, որ քրեական գործում մեղադրանքի կողմը փորձում է ապացուցել մեղադրյալի դեմ հարուցված գործով իր դիրքորոշումը՝ առանց օգտագործելու ապացույցներ, որոնք ձեռք են բերվել

հարկադրաբար կամ ճնշում գործադրելու միջոցով՝ մեղադրյալի կամքին հակառակ (*Saunders-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 68, *Bykov-ն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ], § 92):

123. Սակայն, սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը չի տարածվում քրեական վարույթում այն նյութերի օգտագործման վրա, որոնք մեղադրյալից կարող են ձեռք բերվել հարկադրանք կիրառելու լիազորություններն օգտագործելու միջոցով, բայց գոյություն ունեն կասկածյալի կամքից անկախ, ինչպիսիք են որոշման համաձայն ձեռք բերված փաստաթղթերը, արտաշնչած օդի, արյան և մեզի նմուշներն ու հյուսվածքները՝ ԴՆԹ-ի հետազոտություն անցկացնելու համար (*Saunders-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 69, *O'Halloran-ն և Francis-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 47):

124. Փաստաբանի ծառայություններից ժամանակին օգտվելու հնարավորությունը դատավարական այն երաշխիքների մաս է, որոնց Դատարանը հատուկ ուշադրություն է դարձնում այն հարցը դիտարկելիս, թե արդյոք ընթացակարգով չի խախտվում սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքի բուն էությունը: Որպեսզի արդար դատաքննության իրավունքը, 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, մնա «գործնական և արդյունավետ», փաստաբանի ծառայություններից օգտվելու հնարավորությունը, որպես կանոն, տրվում է ոստիկանության կողմից կասկածյալին առաջին անգամ հարցաքննելու պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ, ելնելով յուրաքանչյուր գործի որոշ հանգամանքներից, կան այդ իրավունքը սահմանափակելու համոզիչ պատճառներ (*Salduz-ն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], §§ 54-55):

125. Ոստիկանության կողմից արգելանքի տակ պահվող անձինք հարցաքննության ժամանակ իրավունք ունեն ցուցմունք չտալու սեփական անձի դեմ և լռություն պահպանելու, ինչպես նաև օգտվելու փաստաբանի ծառայություններից: Այս իրավունքներն առանձին են. դրանցից մեկից հրաժարվելը չի ենթադրում մյուսից հրաժարվել: Այնուամենայնիվ, այս իրավունքները փոխլրացնող են, քանի որ ոստիկանության կողմից արգելանքի տակ պահվող անձանց պետք է նախևառաջ տրամադրվի փաստաբանի օգնություն, եթե իշխանության մարմինները նախապես չեն տեղեկացրել նրանց՝ լռություն պահպանելու իրավունքի մասին (*Brusco-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 54, *Navone-ն և այլք ընդդեմ Մոնակոյի*, § 74): Լռություն պահպանելու իրավունքի մասին կասկածյալին տեղեկացնելն այնքան կարևոր է, որ նույնիսկ եթե անձը համաձայնել է ոստիկանությանը ցուցմունք տալ այն բանից հետո, երբ իրեն տեղեկացրել են, որ իր խոսքերը կարող են օգտագործվել որպես իր դեմ ապացույց, դա չի կարող համարվել լիովին տեղեկացված ընտրություն, եթե կասկածյալն ուղղակի կերպով չի տեղեկացվել լռություն պահպանելու իրավունքի մասին, և եթե այդպիսի որոշում է կայացրել առանց փաստաբանի հետ խորհրդակցելու (նույն տեղում *Stojkovic-ն ընդդեմ Ֆրանսիայի և Բելգիայի*, § 54):

126. Լռություն պահպանելու և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքները, ըստ էության, ծառայում են կասկածյալի՝ ոստիկանության կողմից հարցաքննության ժամանակ խոսելու կամ լռություն պահպանելու ազատության իրավունքը պաշտպանելու համար: Այդպիսի ընտրության ազատությունը լրջորեն սահմանափակվել էր, երբ գործով կասկածյալը նախընտրել էր լռություն պահպանել հարցաքննության ժամանակ և իշխանության մարմինները խորամանկությամբ փորձել էին կասկածյալից ստանալ խոստովանական ցուցմունք կամ մեղավորությունն ապացուցող այլ հայտարարություններ, որոնք չէին կարողացել ստանալ հարցաքննության ժամանակ (տվյալ կոնկրետ դեպքում՝ դիմումատուի հետ նույն խցում գտնվող՝ ոստիկանության

իրազեկիչին արված խոստովանություն), և այդպիսի ճանապարհով ստացված խոստովանական ցուցմունքը կամ հայտարարությունները դատաքննության ժամանակ ներկայացվել են որպես ապացույցներ (*Allan-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 50):

127. Հակառակ դրան՝ *Bykov-ն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ] (§§ 102-103) գործով, դիմումատուի նկատմամբ ճնշում կամ բռնություն չի գործադրվել, նա կալանքի տակ չի գտնվել և ինքն է ընտրել՝ հանդիպել և խոսել ոստիկանության իրազեկիչի հետ կամ չանել դա: Ավելին, դատական քննության ժամանակ խոսակցությունների ձայնագրությունները չեն համարվել ուղղակի խոստովանական ցուցմունք, որը կարող էր հիմք ծառայել դիմումատուին մեղավոր ճանաչելու համար. այդ ձայնագրությունները դատարանի կողմից գնահատված ապացույցների ընդհանուր կազմում կարևոր դեր չեն ունեցել:

գ. Հարաբերական իրավունքը

128. Լռություն պահպանելու իրավունքը բացարձակ չէ (*John Murray-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 47):

129. Երբ քննարկվում է, թե արդյոք ընթացակարգով խախտվել է սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքի բուն էությունը, Դատարանը հաշվի է առնում, մասնավորապես, հետևյալ տարրերը՝

- հարկադրանքի բնույթը և աստիճանը,
- դատավարական համապատասխան երաշխիքների առկայությունը,
- այն, թե ինչպես է օգտագործվել այդ ճանապարհով ստացված ցանկացած նյութ (*Jalloh-ն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ], § 101, *O'Halloran-ը և Francis-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 55, *Bykov-ն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ], § 104):

130. Մի կողմից, մեղադրանքը չպետք է ամբողջությամբ կամ հիմնականում հիմնված լինի մեղադրյալի լռության կամ հարցերին պատասխանելուց կամ ցուցմունք տալուց հրաժարվելու վրա: Մյուս կողմից, լռություն պահպանելու իրավունքը չի կարող խոչընդոտել, որպեսզի մեղադրյալի լռությունը (այն դեպքերում, երբ ուղղակիորեն պահանջվում են բացատրություններ նրա կողմից) հաշվի առնվի մեղադրանքի կողմի կողմից ապացույցների համոզիչ լինելու աստիճանը գնահատելիս: Այսպիսով, չի կարելի ասել, որ մեղադրյալի՝ քրեական վարույթի ընթացքում լռություն պահպանելու որոշումը միանշանակ հետևանքներ չի ունենա:

131. Երբ որոշվում է, թե արդյոք մեղադրյալի լռությունից ի վնաս նրա հետևություններ անելը խախտում է 6-րդ հոդվածը, պետք է հաշվի առնվեն գործի բոլոր հանգամանքները, և հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել այն նշանակությանը, որն ազգային դատարանների կողմից տրվում է այդպիսի հետևություններին՝ ապացույցների և տվյալ իրավիճակում հարկադրանքի աստիճանի գնահատման ժամանակ (*John Murray-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 47):

132. Բացի այդ, կոնկրետ իրավախախտման մասով քննության և պատժի հետ կապված հանրային շահի նշանակությունը կարող է հաշվի առնվել և գնահատվել անհատի՝ իր դեմ վկայող ապացույցներն օրինական ճանապարհով ձեռք բերված լինելու հետ կապված շահի հետ համեմատության կարգով: Այնուամենայնիվ, հանրային շահերով չեն կարող արդարացվել այն միջոցները, որոնք խախտում են դիմումատուի պաշտպանության իրավունքի, այդ թվում՝ սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքի բուն էությունը (*Jalloh-ն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ], § 97): Մեղադրյալի մեղքը դատական վարույթի

ընթացքում ապացուցելու նպատակով մինչդատական քննությամբ հարկադրաբար ձեռք բերված պատասխանների օգտագործումը չի կարող արդարացվել՝ հանրային շահի հիման վրա (*Heaney-ն և McGuinness-ն ընդդեմ Իռլանդիայի*, § 57):

4. Անօրինական ճանապարհով կամ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը

133. Չնայած 6-րդ հոդվածով երաշխավորվում է արդար դատաքննության իրավունքը, այն չի սահմանում, որպես այդպիսին, ապացույցների ընդունելիության կանոններ, ինչը նախևառաջ ազգային օրենսդրությամբ կարգավորման ենթակա խնդիր է (*Schenk-ն ընդդեմ Շվեյցարիայի,* §§ 45-46, *Heglas-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության*, § 84):

134. Այնուամենայնիվ, ապացույցների որոշակի տեսակների, օրինակ՝ ներպետական օրենսդրության իմաստով անօրինական ճանապարհով ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը որոշելը սկզբունքորեն Դատարանի խնդիրը չէ: Պատասխան ակնկալող հարցն այն է, թե արդյոք վարույթը, ընդհանուր առմամբ, ներառյալ այն եղանակը, որով ձեռք են բերվել ապացույցները, արդար է եղել: Սա ներառում է ենթադրյալ անօրինականության, և եթե խոսքը Կոնվենցիայով նախատեսված այլ իրավունքի խախտման մասին է, ապա հայտնաբերված խախտման բնույթի վերաբերյալ քննություն (*Khan-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 34, *P.G.-ն ու J.H.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 76, *Allan-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 42):

135. Երբ որոշվում է, թե արդյոք վարույթն ընդհանուր առմամբ եղել է արդար, հարկավոր է պարզել նաև՝ արդյոք պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները: Մասնավորապես, հարկավոր է պարզել՝ արդյոք դիմումատուին հնարավորություն է տրվել վիճարկել ապացույցների իսկությունը և առարկել դրանց օգտագործման դեմ: Բացի այդ, հարկավոր է հաշվի առնել ապացույցների որակը, ինչպես նաև դրանք ձեռք բերելու հանգամանքները, և արդյոք այդ հանգամանքներն ապացույցների վստահելիության և իսկության հետ կապված կասկածների տեղիք չեն տալիս: Չնայած այն հանգամանքին, որ դատաքննության արդար լինելու հետ կապված խնդիր է առաջանում այն դեպքում, երբ ձեռք բերված ապացույցի իսկությունը չի հիմնավորվում այլ նյութերով, հարկ է նշել, որ եթե ապացույցը ծանրակշիռ է և դրա վստահելիության հետ կապված կասկածներ չկան, ապա հիմնավորող ապացույցի առկայությունը, համապատասխանաբար, այդքան էլ անհրաժեշտ չէ (*Bykov-ն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ], § 89, *Jalloh-ն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ], § 96): Այդ կապակցությամբ, Դատարանն ուշադրություն է դարձնում նաև այն հանգամանքին, թե արդյոք տվյալ ապացույցը որոշիչ է եղել քրեական գործով վարույթի ելքի համար (*Gäfgen-ն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ]):

136. Ինչ վերաբերում է Կոնվենցիայի հայտնաբերված խախտման բնույթը պարզելուն, ապա այն հարցը, թե արդյոք 8-րդ հոդվածի խախտմամբ ձեռք բերված տեղեկատվությունը որպես ապացույց օգտագործելն ընդհանուր առմամբ անարդար է դարձրել դատաքննությունը՝ խախտելով 6-րդ հոդվածը, պետք է դիտարկվի՝ հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները և, մասնավորապես, դիմումատուի պաշտպանության իրավունքը պահպանելու հարցը, ինչպես նաև տվյալ ապացույցի որակը և կարևորությունը (նույն տեղում, § 165):

137. Այնուամենայնիվ, 3-րդ հոդվածի խախտմամբ ձեռք բերված ապացույցները քրեական

վարույթում օգտագործելու մասով կիրառվում են հատուկ նկատառումներ: Կոնվենցիայով երաշխավորված հիմնական և բացարձակ իրավունքներից մեկի խախտմամբ ստացված այդպիսի ապացույցների օգտագործումը մշտապես լուրջ հարցեր է առաջացնում դատաքննության արդար լինելու հետ կապված, նույնիսկ եթե այդպիսի ապացույցների ընդունումը որոշիչ չի եղել մեղադրական դատավճիռ կայացնելու համար (*Jalloh-ն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ], §§ 99 և 105, *Harutyunyan-ն ընդդեմ Հայաստանի*, § 63):

138. Հետևաբար, 3-րդ հոդվածի խախտմամբ ձեռք բերված ցուցմունքների օգտագործումը քրեական վարույթում (անկախ այն բանից, թե ինչպես է դասակարգվել վերաբերմունքը՝ խոշտանգում, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք) այդպիսի վարույթն ինքնաբերաբար դարձնում է ոչ արդար՝ խախտելով 6-րդ հոդվածը (*El Haski-ն ընդդեմ Բելգիայի, Gäfgen-ն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ], § 166): Նույն մոտեցումը կիրառելի է նաև անմիջապես խոշտանգումների միջոցով ձեռք բերված իրեղեն ապացույցների օգտագործման նկատմամբ (նույն տեղում, § 167, *Jalloh-ն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ], § 105): Այնպիսի ապացույց ընդունելը, որը ձեռք է բերվել 3-րդ հոդվածի խախտմամբ՝ որպես անմարդկային վերաբերմունք դասակարգվող, սակայն խոշտանգում չհամարվող գործողության արդյունքում, միայն 6-րդ հոդվածի խախտում է, եթե ապացուցվի, որ 3-րդ հոդվածի խախտումն առնչություն ունի ամբաստանյալի դեմ հարուցված վարույթի ելքի հետ, այսինքն՝ ազդել է մեղադրական դատավճռի կամ պատժի վրա (*El Haski-ն ընդդեմ Բելգիայի*, § 85, *Gäfgen-ն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ], § 178):

139. Այս սկզբունքները կիրառվում են ոչ միայն այն դեպքում, երբ 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքից տուժած անձն ամբաստանյալն է, այլ նաև այն դեպքում, երբ խոսքը երրորդ անձանց մասին է (*El Haski-ն ընդդեմ Բելգիայի*, § 85): Մասնավորապես, Դատարանը պարզել է, որ դատական քննության ժամանակ խոշտանգումների արդյունքում ձեռք բերված ապացույցներ օգտագործելը ենթադրում է արդարադատության ակնհայտ մերժում, նույնիսկ եթե այն անձը, որից ստացվել են այդ ապացույցները, երրորդ անձ է եղել (*Othman-ը (Abu Qatada-ն) ընդդեմ Միացյալ Թագավորության,* §§ 263 և 267):

5. Սադրանքը

ա. Ընդհանուր նկատառումներ

140. Դատարանն ընդունել է իշխանությունների՝ հատուկ քննչական մեթոդների դիմելու անհրաժեշտությունը, մասնավորապես՝ կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի վերաբերյալ գործերում: Այս առնչությամբ այն վճռել է, որ հատուկ քննչական մեթոդների կիրառությունը, մասնավորապես՝ գաղտնի տեխնիկաները, ինքնին չի խախտում արդար դատաքննության իրավունքը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ոստիկանության կողմից հրահրման՝ այդպիսի տեխնիկաների առաջացրած ռիսկը, դրանց կիրառությունը պետք է պահվի հստակ սահմանների շրջանակում (*Ramanauskas-ն ընդդեմ Լիտվայի [ՄՊ]*, § 51):

141. Մինչ կազմակերպված հանցավորության աճը պահանջում է, որ Պետությունները ձեռնարկեն համապատասխան միջոցառումներ, արդար դատաքննության իրավունքը, որից տրամաբանորեն բխում է արդարադատության պատշաճ իրականացման պահանջը, այնուամենայնիվ, կիրառվում է բոլոր տեսակի քրեական իրավախախտումների նկատմամբ՝ ամենապարզից մինչև ամենաբարդի: Արդարադատության արդար իրականացման իրավունքը ժողովրդավարական հասարակությունում ունի այնպիսի ակնառու տեղ, որ այն չի կարող զոհաբերվել հանուն նպատակահարմարության (նույն

տեղում, § 53): Այս առնչությամբ Դատարանն ընդգծել է, որ ոստիկանությունը կարող է գործել գաղտնի, սակայն ոչ՝ հրահրել (*Khudobin-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 128):

142. Ավելին, մինչ Կոնվենցիայով նախնական քննության փուլում և այն դեպքում, երբ սա կարող է երաշխավորվել իրավախախտման բնույթով, չի թույլատրվում հիմնվել այնպիսի աղբյուրների վրա, ինչպիսիք են անանուն տեղեկատվություն տրամադրողները, դատապարտումը հիմնավորելու համար այդպիսի աղբյուրների հետագա կիրառությունը գործը քննող դատարանի կողմից այլ հարց է (*Teixeira de Castro-ն ընդդեմ Պորտուգալիայի*, § 35): Այդպիսի կիրառությունը կարող է ընդունելի լինել միայն եթե չարաշահման դեմ առկա են պատշաճ և բավարար երաշխիքներ, մասնավորապես՝ նշված քննչական միջոցառումները թույլատրելու, իրականացնելու և վերահսկելու հստակ ու կանխատեսելի ընթացակարգ (*Ramanauskas-ն ընդդեմ Լիտվայի* [ՄՊ], § 51): Ինչ վերաբերում է գաղտնի գործողությունների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնին, ապա Դատարանը համարել է, որ մինչ դատական վերահսկողությունը կլիներ ամենահամապատասխան միջոցը, կարող են կիրառվել այլ միջոցներ՝ պայմանով, որ առկա են պատշաճ ընթացակարգեր ու երաշխիքներ, ինչպես օրինակ՝ դատախազի կողմից վերահսկողությունը (*Bannikova-ն ընդդեմ Ռուսաստանի,* § 50):

143. Մինչ գաղտնի գործակալների կիրառությունը հանդուրժելի է՝ պայմանով, որ այն ենթակա է հստակ սահմանափակումների ու երաշխիքների, հանրային շահը չի կարող արդարացնել ոստիկանության կողմից հրահրման արդյունքում ձեռք բերված ապացույցների օգտագործումը, քանի որ սա մեղադրյալին կենթարկեր ի սկզբանե արդար դատաքննությունից միանշանակ զրկված լինելու ռիսկին (*Ramanauskas-ն ընդդեմ Լիտվայի* [ՄՊ], § 54):

144. Հետևաբար, հաստատելու համար, թե արդյոք արդար դատաքննության իրավունքը գաղտնի գործակալների մասնակցությամբ գործում հարգվել է, թե ոչ, Դատարանը նախ քննում է, թե արդյոք եղել է սադրանք («հրահրման նյութական չափորոշիչ»), թե ոչ, և եթե այո, ապա՝ թե արդյոք դիմումատուն ներպետական դատարաններում կարողացել է ստանալ սադրանքից պաշտպանություն (*Bannikova-ն ընդդեմ Ռուսաստանի*, §§ 37 և 51): Եթե գործակալի գործողությունները, անկախ նրանից, թե նա աշխատել է Պետության, թե իշխանություններին աջակցող մասնավոր անձի համար, սադրանք են համարվել, և արդյունքում, ձեռք բերված ապացույցներն օգտագործվել են դիմումատուի դեմ՝ իր դեմ հարուցված քրեական վարույթում, ապա Դատարանը կարձանագրի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում (*Ramanauskas-ն ընդդեմ Լիտվայի* [ՄՊ], § 73):

բ. Հրահրման նյութական չափորոշիչը

145. Ի հակադրություն օրինական գաղտնի քննության՝ Դատարանը սադրանք[1] սահմանել է որպես մի իրավիճակ, որտեղ ներգրավված ծառայողները՝ թե՛ անվտանգության ուժերի անդամները, թե՛ նրանց հրահանգներով գործող անձինք, չեն սահմանափակվում քրեական գործունեությունն ըստ էության պասիվ կերպով քննելով, այլ իրավախախտումը հաստատելը հնարավոր դարձնելու, այսինքն՝ ապացույցներ տրամադրելու և հետապնդում հարուցելու նպատակով այնպես են ազդում սուբյեկտի վրա, որ հրահրում են այնպիսի իրավախախտում կատարել, որն այլապես չէր կատարվի (*Ramanauskas-ն ընդդեմ Լիտվայի* [ՄՊ], § 55):

[1] «Սադրանք, ոստիկանության կողմից հրահրում և սադրիչ գործակալներ» եզրույթները Դատարանի նախադեպային իրավունքում օգտագործվում են փոխարինաբար:

146. Որոշելիս, թե արդյոք քննությունը «ըստ էության պասիվ» է եղել, թե ոչ, Դատարանը քննում է գաղտնի գործողության հիմքում ընկած պատճառներն ու այն իրականացնող մարմինների վարքագիծը: Մասնավորապես, այն կորոշի, թե արդյոք եղել են օբյեկտիվ կասկածներ, որ դիմումատուն ներգրավված է եղել քրեական գործունեության մեջ կամ նախատրամադրված է եղել քրեական իրավախախտում կատարելու (*Bannikova-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 38):

147. Իր գնահատման մեջ Դատարանը հաշվի է առնում մի շարք գործոններ: Օրինակ, *Teixeira de Castro-ն ընդդեմ Պորտուգալիայի* (§§ 37-38) վաղ նախադեպային գործում Դատարանն, *inter alia* (ի թիվս այլնի), հաշվի է առել այն փաստը, որ դիմումատուն դատվածություն չի ունեցել, որ նրա նկատմամբ քննություն հարուցված չի եղել, որ նա ոստիկանության ծառայողներին ծանոթ չի եղել, որ նրա տանը թմրադեղեր չեն հայտնաբերվել, և որ ձերբակալման ընթացքում նրա մոտ հայտնաբերված թմրադեղերի չափն ավելին չի եղել, քան գաղտնի գործակալների կողմից պահանջվող չափը: Այն գտել է, որ գործակալների գործողությունները գաղտնի գործակալների գործողությունների շրջանակից դուրս են եկել, քանի որ նրանք դրդել են իրավախախտման, և ոչինչ չի եղել ենթադրելու, որ առանց նրանց միջամտության նշված իրավախախտումը կատարված կլիներ:

148. Նախկինում դատվածություն ունենալն ինքնին քրեական իրավախախտում կատարելու նախատրամադրվածության ցուցիչ չէ (*Constantin-ը և Stoian-ն ընդդեմ Ռումինիայի*, § 55): Այնուամենայնիվ, դիմումատուի ծանոթ լինելը թմրադեղերի ներկայիս գնին և կարճ ժամկետում թմրադեղեր ձեռք բերելու նրա կարողությունը, գործարքից նրա դուրս չգալու հետ մեկտեղ՝ չնայած այդպես անելու մի շարք հնարավորություններ ունենալուն, Դատարանի կողմից համարվել են նախօրոք գոյություն ունեցող քրեական գործունեության կամ մտադրության ցուցիչ (*Shannon-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում)):

149. Հաշվի առնելու ենթակա մեկ այլ գործոն է այն, թե արդյոք դիմումատուի վրա ճնշում են գործադրել, որ կատարի նշված իրավախախտումը: Դիմումատուի հետ կապ հաստատելու հարցում նախաձեռնություն ցուցաբերելը որևէ օբյեկտիվ կասկածի բացակայության դեպքում, որ դիմումատուն ներգրավված է եղել քրեական գործունեության մեջ կամ նախատրամադրված է եղել կատարելու քրեական իրավախախտում (*Burak Hun-ն ընդդեմ Թուրքիայի,* § 44), առաջարկը վերահաստատելը՝ չնայած դիմումատուի նախնական մերժմանը, համառորեն հուշելը (*Ramanauskas-ն ընդդեմ Լիտվայի* [ՄՊ], § 67), գինը միջինից բարձրացնելը (*Malininas-ն ընդդեմ Լիտվայի,* § 37) և դիմումատուի կարեկցանքին դիմելը՝ նշելով ժուժկալության ախտանիշներ (*Vanyan-ն ընդդեմ Ռուսաստանի*, §§ 11 և 49), Դատարանի կողմից համարվել են վարքագիծ, որը կարող էր համարվել դիմումատուի վրա ճնշման գործադրում, որ կատարի նշված իրավախախտումը՝ անկախ նրանից, թե արդյոք նշված գործակալն անվտանգության ուժերի անդամ էր, թե նրանց հրահանգներով գործող մասնավոր անձ:

150. Հետագա կարևորության հարց է, թե արդյոք կարող է համարվել, որ պետական գործակալները «միացել» են քրեական գործունեությանը կամ «ներթափանցել» են քրեական գործունեության մեջ, այլ ոչ թե նախաձեռնել այն: Առաջին դեպքում նշված գործողությունը մնում է գաղտնի աշխատանքի սահմանների շրջանակում: Դատարանը *Miliniené-ն ընդդեմ Լիտվայի գործում* (§§ 37-38) համարեց, որ չնայած նրան, որ ոստիկանությունն ազդել էր դեպքերի ընթացքի վրա, մասնավորապես՝ տեխնիկական սարքավորումներ տալով մասնավոր անձին՝ խոսակցություններ ձայնագրելու համար, և աջակցելով դիմումատուին ֆինանսական շարժառիթ տալու առաջարկին, նրանց

գործողությունները դիտարկվել են որպես քրեական գործունեությանը «միանալ», այլ ոչ թե այն նախաձեռնել, քանի որ գործում նախաձեռնությունը ցուցաբերվել էր մասնավոր անձի կողմից: Վերջինս բողոքել էր ոստիկանությանը, որ դիմումատուն իր գործով նպաստավոր ելքի հասնելու համար կաշառք կպահանջեր, և միայն այս բողոքից հետո էր գործողությունը թույլատրվել և վերահսկվել Գլխավոր դատախազի տեղակալի կողմից՝ նպատակ ունենալով հաստատելու բողոքը (նմանատիպ պատճառաբանության համար տե՛ս *Sequieira-ն ընդդեմ Պորտուգալիայի* (որոշում), *Eurofinacom-ն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում)):

151. Գաղտնի ոստիկանական գործողությունը մեկնարկելու և իրականացնելու եղանակը նշանակալի է գնահատելիս, թե արդյոք դիմումատուն ենթարկվել է սադրանքի, թե ոչ: Նշված քննչական միջոցառումը թույլատրելու, իրականացնելու և վերահսկելու հստակ ու կանխատեսելի ընթացակարգերի բացակայությունը հավասարակշռությունը թեքում է այն եզրակացության օգտին, որ նշված արարքները սադրանք են համարվում. տե՛ս, օրինակ, *Teixeira-ն ընդդեմ Պորտուգալիայի*, § 38, որտեղ Դատարանը նշել է այն փաստը, որ գաղտնի գործակալների միջամտությունը տեղի չէր ունեցել որպես թմրադեղերի ապօրինի շրջանառության դեմ պաշտոնական գործողության մաս, որը վերահսկվել է դատավորի կողմից, *Ramanauskas-ն ընդդեմ Լիտվայի* [ՄՊ], § 64, որտեղ որևէ նշում չի եղել, թե ինչ պատճառներ ու անձնական դրդապատճառներ են գաղտնի գործակալին ուղղորդել, որ սեփական նախաձեռնությամբ մոտենա դիմումատուին՝ առանց հարցն իր վերադասի ուշադրությանն արժանացնելու, *Vanyan-ն ընդդեմ Ռուսաստանի*, §§ 46-47, որտեղ Դատարանը նշել է, որ ոստիկանական գործողությունը թույլատրվել է այն մարմնի պարզ վարչական որոշմամբ, որը հետագայում իրականացրել է գործողությունը, որ որոշումը ծրագրված փորձնական գնման պատճառների և նպատակների վերաբերյալ պարունակել է շատ քիչ տեղեկատվություն, և որ գործողությունը ենթակա չի եղել դատական վերահսկողության կամ որևէ այլ անկախ հսկողության: Այս առնչությամբ Ռուսաստանի իշխանությունների կողմից օգտագործված «փորձնական գնում» տեխնիկան մանրամասն ուսումնասիրվել է *Veselov-ը և այլք ընդդեմ Ռուսաստանի* գործում, որտեղ Դատարանը վճռել է, որ նշված ընթացակարգը թերի է եղել, և որ այն դիմումատուներին ենթարկել է ոստիկանության կամայական գործողություններին ու խախտել է նրանց դեմ քրեական վարույթի արդարությունը: Այն այնուհետև գտել է, որ ներպետական դատարանները նաև պատշաճորեն չեն քննել սադրանքի վերաբերյալ դիմումատուների հայտարարությունը, և, մասնավորապես, չեն վերանայել փորձնական գնման պատճառներն ու ոստիկանության ու նրանց տեղեկատվություն տրամադրողների վարքագիծը դիմումատուների նկատմամբ (նույն տեղում, § 127):

գ. Սադրանքից պաշտպանության նկատմամբ դատական վերահսկողությունը

152. Այն գործերում, որտեղ սադրանքի վերաբերյալ հարցեր են բարձրացվում, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները պահպանված են համարվում, միայն եթե դիմումատուն կարողացել է արդյունավետորեն բարձրացնել հրահրման վերաբերյալ հարցն իր դատաքննության ընթացքում՝ անկախ նրանից՝ առարկության միջոցով, թե այլ կերպ: Ջուտ այն փաստը, որ դիտարկվել են ընդհանուր երաշխիքներ, ինչպիսիք են կողմերի իրավահավասարությունը կամ պաշտպանության կողմի իրավունքները, բավարար չէ (*Ramanauskas-ն ընդդեմ Լիտվայի* [ՄՊ], § 69): Այդպիսի գործերում Դատարանը նշել է, որ հրահրում տեղի ունեցած չլինելու փաստն ապացուցելն ընկնում է մեղադրանքի կողմի վրա՝ պայմանով, որ մեղադրյալի պնդումներն ամբողջովին անհավանական չեն:

153. Եթե սադրանքի վերաբերյալ հայտարարություն է արվել, և առկա են սադրանքի որոշակի prima facie (առերևույթ) ապացույցներ, ապա դատական մարմինները պետք է քննեն գործի փաստերը և ճշմարտությունը բացահայտելու համար ձեռնարկեն անհրաժեշտ քայլեր, որպեսզի որոշեն, թե արդյոք եղել է որևէ սադրանք, թե ոչ: Եթե նրանք գտնեն, որ եղել է, ապա պետք է հանգեն եզրակացության՝ համաձայն Կոնվենցիայի (նույն տեղում, § 70): Ջուտ այն փաստը, որ դիմումատուն քրեական մեղադրանքներում իրեն մեղավոր է ճանաչել, գործը քննող դատարանին չի ազատում սադրանքի վերաբերյալ պնդումները քննելու պարտականությունից (նույն տեղում, § 72):

154. Այս առնչությամբ Դատարանը հաստատում է, թե արդյոք սադրանքի վերաբերյալ prima facie բողոքը ներպետական օրենսդրությամբ նյութական պաշտպանություն է համարվում, թե ապացույցները բացառելու հիմքեր է տալիս կամ հանգեցնում է նմանատիպ հետևանքների (*Bannikova-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 54): Չնայած հրահրման վերաբերյալ հայտարարության հանդիպելիս ներպետական իշխանությունների գործն է որոշելը, թե որ ընթացակարգն է համապատասխան, Դատարանը պահանջում է, որ նշված ընթացակարգը լինի մրցակցային, մանրակրկիտ, համապարփակ ու սադրանքի վերաբերյալ հարցի առումով վերջնական (նույն տեղում, § 57): Ավելին, քննչական մարմինների կողմից տեղեկատվությունը չբացահայտելու համատեքստում Դատարանը հատուկ կշիռ է տալիս մրցակցության սկզբունքի վրա հիմնված վարույթին ու կողմերի իրավահավասարությանը (նույն տեղում, § 58):

155. Եթե մեղադրյալը պնդում է, որ նրան հրահրել են իրավախախտում կատարելու, ապա քրեական դատարանը պետք է իրականացնի գործի նյութերի մանրակրկիտ քննություն, քանի որ, որպեսզի դատաքննությունը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով լինի արդար, ոստիկանության հրահրման արդյունքում ձեռք բերված բոլոր ապացույցները պետք է բացառվեն: Սա հատկապես ճշմարիտ է, եթե ոստիկանական գործողությունը տեղի է ունեցել առանց բավարար իրավական դաշտի կամ պատշաճ երաշխիքների (*Ramanauskas-ն ընդդեմ Լիտվայի* [ՄՊ], § 60):

156. Եթե հասանելի տեղեկատվությունը Դատարանին թույլ չի տալիս եզրակացնել, թե արդյոք դիմումատուն ենթարկվել է սադրանքի, թե ոչ, ապա սադրանքի վերաբերյալ հայտարարության նկատմամբ դատական վերահսկողությունը դառնում է որոշիչ (*Edwards-ը և Lewis-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 46, *Ali-ն ընդդեմ Ռումինիայի*, § 101, տե՛ս նաև *Khudobin-ն ընդդեմ Ռուսաստանի*, որտեղ ներպետական դատարանները չեն վերլուծել համապատասխան փաստական և իրավական տարրերը, որպեսզի տարբերակեն սադրանքը քննչական գործունեության օրինական ձևից, *V.-ն ընդդեմ Ֆինլանդիայի*, որտեղ դիմումատուի համար անհնար էր դիմել սադրանքից պաշտպանության, և *Shannon-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում), որտեղ մասնավոր անձի կողմից գործի դրված խորամանկությունը ներպետական դատարանների քննության առարկան էր, որը գտավ, որ սադրանքի վերաբերյալ պնդումը հիմնավորված չէր):

6. Արդար դատաքննության իրավունքի երաշխիքներից հրաժարվելը

157. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ո՛չ տառը, ո՛չ էությունը չեն խոչընդոտում անձի կողմից արդար դատաքննության երաշխիքների իրավունքից իր սեփական ազատ կամքով կա՛մ բացահայտ, կա՛մ ենթադրաբար հրաժարվելը: Այնուամենայնիվ, այդպիսի հրաժարումը, եթե այն արդյունավետ է Կոնվենցիայի նպատակների համար, պետք է հաստատվի

միանշանակ կերպով և իրագործվի նվազագույն երաշխիքներով, ըստ կարևորության: Ի հավելումն, այն չպետք է հակասի որևէ կարևոր հանրային շահի (*Hermi-ն ընդդեմ Իտալիայի [ՄՊ]*, § 73, *Sejdovic-ն ընդդեմ Իտալիայի [ՄՊ]*, § 86):

158. Մինչ կարելի լինի ասել, որ մեղադրյալն իր վարքագծով անուղղակիորեն հրաժարվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված կարևոր իրավունքից, պետք է ցույց տրվի, որ նա կարող էր ողջամտորեն կանխատեսել, թե որոնք կլինեին իր վարքագծի հետևանքները (*Hermi-ն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ], § 74, *Sejdovic-ն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ], § 87):

Բ. Հրապարակային դատաքննությունը

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը

> «1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում [է] ... իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը, ունի ... տրիբունալի կողմից ... հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կվնասեր արդարադատության շահերը:»

1. Հրապարակայնության սկզբունքը

159. Վարույթի հրապարակային բնույթը դատավարության մասնակիցներին պաշտպանում է արդարադատության գաղտնի իրականացումից՝ առանց հանրության կողմից հսկողության. այն նաև այն միջոցներից մեկն է, որոնց միջոցով կարող է պահպանվել դատարանների հանդեպ վստահությունը: Արդարադատության իրականացումը տեսանելի դարձնելով, հրապարակայնությունը նպաստում է 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակին, այսինքն՝ արդար դատաքննության հասնելուն, որի երաշխիքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկն է (*Riepan-ն ընդդեմ Ավստրիայի,* § 27, *Krestovskiy-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 24, *Sutter-ն ընդդեմ Շվեյցարիայի,* § 26):

160. Դատական վարույթի հրապարակային բնույթի սկզբունքը ենթադրում է երկու ասպեկտ՝ դռնբաց լսումների անցկացումն ու դատավճիռների հրապարակային հայտարարումը (նույն տեղում, § 27, *Tierce-ը և այլք ընդդեմ Սան Մարինոյի,* § 93):

2. Բանավոր դատաքննության և դատական նիստին ներկա գտնվելու իրավունքը

161. 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված «հրապարակային դատաքննության» իրավունքն անհրաժեշտորեն ենթադրում է «բանավոր դատաքննության» իրավունք (*Döry-ն ընդդեմ Շվեդիայի,* § 37):

162. Բանավոր ու հրապարակային դատաքննության սկզբունքը կարևոր է հատկապես քրեական համատեքստում, որտեղ քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող անձը պետք է ընդհանուր առմամբ կարողանա ներկա գտնվել առաջին ատյանի դատարանում դատաքննությանը (*Tierce-ը և այլք ընդդեմ Սան Մարինոյի*, § 94, *Jussila-ն ընդդեմ Ֆինլանդիայի* [ՄՊ], § 40):

163. Առանց ներկա գտնվելու դժվար է ենթադրել, թե ինչպես անձը կարող է իրականացնել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ», «դ» և «ե» ենթակետերով սահմանված հատուկ իրավունքները, այսինքն՝ իրավունքները՝ «պաշտպանելու իրեն անձամբ», «հարցաքննելու վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության» և «օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»: Քրեական գործով ամբաստանյալի՝ դատարանի դահլիճում ներկա գտնվելու իրավունքը երաշխավորելու պարտականությունն այդ իսկ պատճառով համարվում է 6-րդ հոդվածի էական պահանջներից մեկը (*Hermi-ն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ], §§ 58-59, *Sejdovic-ն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ], §§ 81 և 84):

164. Չնայած նրան, որ դատական քննությունը, որը տեղի է ունենում մեղադրյալի բացակայությամբ, ինքնին անհամատեղելի չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, այնուամենայնիվ, տեղի է ունենում արդարադատության մերժում, երբ in absentia (բացակայությամբ) դատապարտված անձն անկարող է հետագայում իրեն լսած դատարանից հասնել մեղադրանքի էության վերաբերյալ նոր քննության անցկացման՝ և՛ իրավունքի, և՛ փաստի մասով, եթե չի հաստատվել, որ նա հրաժարվել է դատաքննությանը ներկա գտնվելու և իրեն պաշտպանելու իրավունքից, կամ որ նա մտադիր է եղել խուսափել դատաքննությունից (նույն տեղում, § 82):

165. Լսումներ անցկացնելու պարտավորությունն, այնուամենայնիվ, անվերապահորեն չի տարածվում 6-րդ հոդվածի քրեական մասի գործողության տակ ընկնող բոլոր գործերի վրա: «Քրեական մեղադրանք» հասկացության՝ քրեական իրավունքի ավանդական կատեգորիաներին չպատկանող գործերի (ինչպիսիք են վարչական տույժերի, մաքսային օրենսդրության և լրացուցիչ հարկերի վերաբերյալ) վրա տարածման լույսի ներքո կան տարբեր ծանրության «քրեական մեղադրանքներ»: Թեև արդար դատաքննության պահանջներն ամենախիստն են քրեական իրավունքի հիմնական տարրերի տեսանկյունից, պարտադիր չէ, որ 6-րդ հոդվածի քրեական մասի երաշխիքները կիրառվեն իրենց ողջ խստությամբ գործերի մյուս կատեգորիաների նկատմամբ, որոնց վրա տարածվում է այդ մասը, և որոնք նշանակալի աստիճանի խարանելի չեն համարվում (*Jussila-ն ընդդեմ Ֆինլանդիայի* [ՄՊ], §§ 41-43):

166. Այն հանգամանքների բնույթը, որոնք կարող են արդարացնել բանավոր դատաքննություն չիրականացնելը, հիմնականում տանում է այն հարցերի բնույթին, որոնց հետ պետք է գործ ունենա իրավասու դատարանը, մասնավորապես՝ թե արդյոք սրանք առաջացնում են փաստի կամ իրավունքի մասով որևէ հարց, որը չէր կարող պատշաճ կերպով լուծվել գործի նյութերի հիման վրա, թե ոչ: Բանավոր դատաքննություն կարող է չպահանջվել, եթե չկան վստահելիության վերաբերյալ հարցեր կամ վիճարկվող փաստեր, որոնք առաջացնում են ապացույցները բանավոր ներկայացնելու կամ վկաների խաչաձև հարցաքննության անհրաժեշտություն, և եթե մեղադրյալին տրվել է իր գործը գրավոր ներկայացնելու և իր դեմ եղած ապացույցները վիճարկելու պատշաճ հնարավորություն (նույն տեղում, §§ 41-42 և 47-48): Այս առնչությամբ ազգային իշխանություններն իրավասու են հաշվի առնելու արդյունավետության ու խնայողության պահանջները (նույն տեղում, §§ 41-43 և 47-48, լրացուցիչ հարկերի մասով վարույթի վերաբերյալ, *Suhadolc-ն ընդդեմ Սլովենիայի* (որոշում), ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների

պարզեցված ընթացակարգի վերաբերյալ):

3. Բողոքարկման վարույթը

167. Ամբաստանյալի անձնական ներկայությունը վերաքննիչ դատարանում դատաքննության համար չունի միևնույն առանցքային նշանակությունը, որն ունի առաջին ատյանի դատարանում դատաքննության համար: 6-րդ հոդվածը վերաքննիչ դատարաններում վարույթի նկատմամբ կիրառելու եղանակը կախված է տվյալ վարույթի առանձնահատկություններից, և պետք է հաշվի առնել ներպետական իրավակարգի շրջանակներում իրականացվող վարույթների ամբողջությունն ու դրանցում վերաքննիչ դատարանի դերակատարումը (*Hermi-ն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ], § 60):

168. Բողոքարկման իրավունքի մասով վարույթը և այն վարույթը, որը ներառում է միայն իրավունքի մասով հարցեր, ի հակադրություն փաստի մասով հարցերի, կարող է համապատասխանել 6-րդ հոդվածի պահանջներին՝ չնայած այն փաստին, որ հնարավորություն չի տրվում, որ բողոքարկողին անձամբ լսեն վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանում՝ պայմանով, որ առաջին ատյանում անցկացվում է հրապարակային դատաքննություն (*Monnell-ը և Morris-ն ընդդեմ Միացյալ Թագավորության,* § 58, բողոքարկման իրավունքի հարցի առնչությամբ, *Sutter-ն ընդդեմ Շվեյցարիայի*, § 30, վճռաբեկ դատարանի առնչությամբ):

169. Նույնիսկ եթե վերաքննիչ դատարանն իրավասություն ունի գործը վերանայելու և՛ փաստերի, և՛ իրավունքի մասով, միշտ չէ, որ 6-րդ հոդվածով պահանջվում է հրապարակային դատաքննության իրավունքի, առավել քիչ՝ անձամբ ներկայանալու իրավունքի իրականացում (*Fejde-ն ընդդեմ Շվեդիայի,* § 31): Այս հարցը որոշելու նպատակով պետք է հաշվի առնվեն նշված վարույթի առանձնահատկություններն ու վերաքննիչ դատարանում դիմումատուի շահերը փաստացի ներկայացնելու և պաշտպանելու եղանակը, մասնավորապես՝ դրա կողմից որոշվելիք հարցերի բնույթի լույսի ներքո (*Seliwiak-ն ընդդեմ Լեհաստանի*, § 54, *Sibgatullin-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 36):

170. Այնուամենայնիվ, եթե վերաքննիչ դատարանը պետք է գործը քննի փաստերի ու իրավունքի տեսանկյունից և մեղավորության կամ անմեղության հարցի ամբողջական գնահատում կատարի, ապա այն չի կարող հարցի վերաբերյալ որոշում կայացնել առանց մեղադրյալի կողմից անձամբ ներկայացված այն ապացույցների ուղղակի գնահատման, որոնք տրամադրվել են՝ ապացուցելու համար, որ ենթադրաբար քրեական իրավախախտում համարվող արարքը ինքը չի կատարել (*Popovici-ն ընդդեմ Մոլդովայի,* § 68, *Lacadena Calero-ն ընդդեմ Իսպանիայի* § 38): Այն սկզբունքը, որ լսումները պետք է հրապարակային անցկացվեն, ներառում է մեղադրյալի կողմից վերաքննիչ դատարանում անձամբ ապացույցներ ներկայացնելու իրավունք: Այդ տեսանկյունից՝ հրապարակայնության սկզբունքը հետամուտ է լինում մեղադրյալի՝ պաշտպանության մասով իրավունքները երաշխավորելու նպատակին (*Tierce-ը և այլք ընդդեմ Սան Մարինոյի*, § 95):

4. Հրապարակայնության կանոնից բացառությունները

171. Հրապարակային դատաքննություն անցկացնելու պահանջը ենթակա է բացառությունների: Սա ակնհայտ է հենց 6-րդ հոդվածի 1-ին կետի տեքստից, որը պարունակում է դրույթ այն մասին, որ «մամուլի ներկայացուցիչների և հանրության

ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում ... երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կվնասեր արդարադատության շահերը:»: Թե՛ ամբողջությամբ, թե՛ մասամբ դռնփակ դատական քննություն անցկացնելը, պետք է խստապես պահանջվի գործի հանգամանքներով (*Welke-ն և Białek-ն ընդդեմ Լեհաստանի*, § 74, *Martinie-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 40):

172. Եթե կան այս բացառություններից մեկը կամ ավելին կիրառելու հիմքեր, ապա իշխանությունները պարտավոր չեն, սակայն իրավունք ունեն կարգադրելու, որ դատական նիստերն անցկացվեն դռնփակ, եթե նրանք համարում են, որ այդպիսի սահմանափակումը հիմնավորված է (*Toeva-ն ընդդեմ Բուլղարիայի* (որոշում)):

173. Չնայած նրան, որ քրեական գործով վարույթներում առկա է հրապարակայնության բարձր ակնկալիք, 6-րդ հոդվածով կարող է ժամանակ առ ժամանակ անհրաժեշտ լինել սահմանափակել գործի քննության բաց և հրապարակային բնույթը, օրինակ, պաշտպանելու համար վկաների անվտանգությունն ու անձնական կյանքը կամ խթանելու համար տեղեկատվության ու կարծիքի փոխանակումը՝ հետամուտ լինելով արդարությանը (*Բ.-ն և Պ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 37):

174. Անվտանգության մասով խնդիրները քրեական գործերով բազմաթիվ վարույթների ընդհանուր հատկանիշ են, սակայն այն գործերը, որտեղ անվտանգության մասով նկատառումներն իրենցով արդարացնում են հանրության ներկայությունը դատաքննության ընթացքում չթույլատրելը, այնուամենայնիվ, հազվադեպ են (*Riepan-ն ընդդեմ Ավստրիայի*, § 34): Անվտանգության միջոցառումները պետք է մանրամասն մշակված լինեն ու համապատասխանեն անհրաժեշտության սկզբունքին: Դատական մարմինները պետք է հաշվի առնեն հնարավոր բոլոր այլընտրանքները՝ դատարանի դահլիճում անվտանգությունն ապահովելու և ավելի խիստ միջոցառման փոխարեն պակաս խիստը նախընտրելու համար, երբ այն կարող է հասնել նույն նպատակին (*Krestovskiy-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 29):

175. Հասարակական կարգի ու անվտանգության խնդիրների մասով նկատառումները կարող են արդարացնել հանրության բացառումը դատապարտված բանտարկյալների դեմ բանտում իրականացվող կարգապահական վարույթի քննությունից (*Campbell-ը և Fell-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 87):

176. Քրեական գործով սովորական վարույթով դատաքննությունը բանտում անցկացնելն անպայման չի նշանակում, որ այն հրապարակային չէ: Այնուամենայնիվ, դատարանի դահլիճից դուրս դատաքննությունն անցկացնելու հարցում առկա խոչընդոտներին դիմակայելու նպատակով Պետությունը պարտավորություն է կրում ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու համար, որ հանրությունն ու լրատվամիջոցները պատշաճ կերպով տեղեկացվեն դատական քննության վայրի մասին ու ստանան արդյունավետ մատչելիություն (*Riepan-ն ընդդեմ Ավստրիայի*, §§ 28-29):

177. Գործի նյութերում գաղտնի տեղեկությունների սոսկ առկայությունն ինքնաբերաբար չի ենթադրում, որ դատաքննությունը պետք է փակ լինի հանրության համար՝ այդպիսով հաշվի չառնելով բաց դատաքննության ապահովման և ազգային անվտանգության մասով նկատառումների միջև հավասարակշռությունը: Հանրության ներկայությունը քրեական գործով դատաքննության ընթացքում չթույլատրելուց առաջ դատարանները պետք է բացահայտեն հատուկ փաստեր, որ դատաքննությունը փակելն անհրաժեշտ է պետության

գերակա շահը պաշտպանելու համար, և պետք է սահմանափակեն գաղտնիությունն այնքանով, որքանով որ անհրաժեշտ է այդպիսի շահը պահպանելու համար (*Belashev-ն ընդդեմ Ռուսաստանի,* § 83, *Welke-ն և Białek-ն ընդդեմ Լեհաստանի*, § 77):

5. Դատավճիռները հրապարակային հայտնելը

178. Դատարանն իրեն պարտավորված չի համարել ընդունելու «հրապարակայնորեն հայտնած» բառերի բառացի մեկնաբանություն (*Sutter-ն ընդդեմ Շվեյցարիայի*, § 33, *Campbell-ը և Fell-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 91):

179. Չնայած այն շարադրանքին, որից ենթադրաբար կբխեր, որ պահանջվում է ընթերցում դռնբաց դատական նիստում, 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ կարող են համատեղելի լինել դատավճռի հրապարակման այլ միջոցներ: Որպես ընդհանուր կանոն՝ «դատավճռի» հրապարակման ձևը պատասխանող Պետության ներպետական օրենսդրությամբ պետք է գնահատվի նշված վարույթի առանձնահատկությունների լույսի ներքո և հղում կատարելով այն խնդրին, որին այս համատեքստում հետամուտ է լինում 6-րդ հոդվածի 1-ին կետը, այսինքն՝ ապահովել հանրության կողմից դատական իշխանության նկատմամբ հսկողությունը՝ արդար դատաքննության իրավունքը երաշխավորելու նպատակով: Այս գնահատումը կատարելիս պետք է հաշվի առնել վարույթի ամբողջությունը (*Welke-ն և Białek-ն ընդդեմ Լեհաստանի,* § 83, որտեղ հրապարակային հայտնելը դռնփակ անցկացված դատական նիստերի դատավճիռների եզրափակիչ մասով սահմանափակելը չի հակասել 6-րդ հոդվածին):

180. Դատական որոշումն ամբողջությամբ հանրությունից թաքցնելը չի կարող արդարացվել: Անվտանգության մասով օրինական նկատառումները կարող են բավարարվել որոշակի տեխնիկաների միջոցով, ինչպիսին է դատական որոշումների միայն այն մասերի գաղտնիացումը, որոնց բացահայտումը կվտանգեր ազգային անվտանգությունը կամ այլոց պաշտպանությունը (*Raza-ն ընդդեմ Բուլղարիայի,* § 53, *Fazliyski-ն ընդդեմ Բուլղարիայի,* §§ 67-68):

Գ. Ողջամիտ ժամկետը

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը

> «1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում [է] ... իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը, ունի ... ողջամիտ ժամկետում արդարացի ... դատաքննության իրավունք:»

1. Վարույթի տևողությունը որոշելը

181. Քրեական գործերում 6-րդ հոդվածի 1-ին կետի, որով յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք, նպատակն է ապահովել, որ մեղադրվող անձինք մեղադրված չլինեն չափազանց երկար, և որ որոշվի մեղադրանքի հիմնավորվածությունը (*Wemhoff-ն ընդդեմ Գերմանիայի,* § 18, *Kart-ն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], § 68):

ա. Այն ժամկետի սկիզբը, որը պետք է հաշվի առնվի

182. Ժամկետը, որը պետք է հաշվի առնվի, սկսվում է այն օրվանից, երբ անձին մեղադրանք է ներկայացվում (*Neumeister-ն ընդդեմ Ավստրիայի,* § 18):

183. «Ողջամիտ ժամկետի» ընթացքը կարող է սկսվել նախքան գործը քննող դատարան հասնելը (*Deweer-ն ընդդեմ Բելգիայի*, § 42), օրինակ՝ ձերբակալության պահից (*Wemhoff-ն ընդդեմ Գերմանիայի*, § 19), այն պահից, երբ անձին մեղադրանք է ներկայացվում (*Neumeister-ն ընդդեմ Ավստրիայի*, § 18), կամ նախնական քննությունն սկսվելու պահից (*Ringeisen-ն ընդդեմ Ավստրիայի,* § 110):

184. 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներով «մեղադրանքը» կարող է սահմանվել որպես «իրավասու մարմնի կողմից անձին տրված պաշտոնական ծանուցում այն պնդման վերաբերյալ, որ նա կատարել է քրեական իրավախախտում» (*Deweer-ն ընդդեմ Բելգիայի*, § 46). սահմանում, որը նաև համապատասխանում է այն չափորոշչին, թե արդյոք կասկածյալի վիճակի վրա եղել է «զգալի ազդեցություն», թե ոչ (նույն տեղում, *Neumeister-ն ընդդեմ Ավստրիայի*, § 13, *Eckle-ն ընդդեմ Գերմանիայի*, § 73, *McFarlane-ն ընդդեմ Իռլանդիայի [ՄՊ]*, § 143):

բ. Ժամկետի ավարտը

185. Դատարանը վճռել է, որ քրեական գործերում այն ժամկետը, որի նկատմամբ կիրառելի է 6-րդ հոդվածը, ընդգրկում է նշված վարույթն ամբողջությամբ (*König-ն ընդդեմ Գերմանիայի,* § 98)՝ ներառյալ բողոքարկման վարույթը (*Delcourt-ն ընդդեմ Բելգիայի*, §§ 25-26, *König-ն ընդդեմ Գերմանիայի*, § 98, *V.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ]*, § 109): Բացի այդ, 6-րդ հոդվածի 1-ին կետը որպես վերջնակետ է նշում մեղադրանքի հիմնավորվածությունը որոշող դատավճիռը. դա կարող է լինել վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշում, երբ այդպիսի դատարանը հրապարակում է մեղադրանքի էությունը (*Neumeister-ն ընդդեմ Ավստրիայի*, § 19):

186. Այն ժամկետը, որը պետք է հաշվի առնվի, տևում է նվազագույնը մինչև արդարացման կամ դատապարտման դատավճռի կայացումը, նույնիսկ եթե այդ որոշումը կայացվել է բողոքարկման վարույթի արդյունքում: Բացի այդ, չկա որևէ պատճառ, թե ինչու մտահոգված անձանց՝ դատական վարույթի ձգձգման դեմ տրամադրված պաշտպանությունը պետք է ավարտվի դատաքննության առաջին լսման ժամանակ. պետք է մտավախություն ունենալ նաև գործը քննող դատարանների կողմից գործերի քննության չհիմնավորված հետաձգումներից կամ անհարկի ձգձգումներից (*Wemhoff-ն ընդդեմ Գերմանիայի*, § 18):

187. Դատապարտման դեպքում 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «... քրեական մեղադրանքի հիմնավորվածության ... որոշումը» բացակայում է, եթե պատիժը հստակորեն չի հաստատվել (*Eckle-ն ընդդեմ Գերմանիայի*, § 77, *Ringeisen-ն ընդդեմ Ավստրիայի*, § 110, *V.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 109):

188. Ցանկացած դատարանի կողմից կայացված դատավճռի կատարումը 6-րդ հոդվածի նպատակներով պետք է համարվի դատաքննության անբաժանելի մասը (*Assanidze-ն ընդդեմ Վրաստանի [ՄՊ]*, § 181): Կոնվենցիայի 6-րդ հոդվածով տրամադրվող երաշխիքներն անիրական կլինեին, եթե Պայմանավորվող պետության ներպետական իրավական կամ վարչական համակարգով թույլատրվեր, որ արդարացման վերաբերյալ վերջնական, պարտադիր ուժ ունեցող դատական որոշումը մնար չգործող՝ ի վնաս արդարացված անձի: Քրեական վարույթն ամբողջություն է կազմում, և 6-րդ հոդվածով

տրամադրվող պաշտպանությունը չի ավարտվում արդարացման վերաբերյալ որոշմամբ (նույն տեղում, § 182): Եթե պետության վարչական մարմինները կարողանային մերժել կամ չկատարել ամբաստանյալին արդարացնող դատավճիռը կամ նույնիսկ հետաձգել դա անելը, ապա 6-րդ հոդվածի՝ վարույթի դատական փուլում ամբաստանյալի կողմից օգտագործվող երաշխիքները մասամբ անիրական կդառնային (նույն տեղում, § 183):

2. Ողջամիտ ժամկետի գնահատումը

ա. Սկզբունքները

189. Վարույթի տևողության ողջամտությունը որոշվում է գործի այն հանգամանքների լույսի ներքո, որոնք պահանջում են ընդհանուր գնահատում (*Boddaert-ն ընդդեմ Բելգիայի*, § 36): Եթե վարույթի որոշակի փուլեր ինքնին անցկացվում են ընդունելի արագությամբ, ապա վարույթի ընդհանուր տևողությունը կարող է այնուամենայնիվ գերազանցել «ողջամիտ ժամկետը» (*Dobbertin-ն ընդդեմ Ֆրանսիայի [Dobbertin v. France]*, § 44):

190. 6-րդ հոդվածը պահանջում է, որ դատական վարույթն արագացված լինի, սակայն այն նաև սահմանում է արդարադատության պատշաճ իրականացման առավել ընդհանուր սկզբունքներ: Այս հիմնարար պահանջի տարբեր ասպեկտների միջև պետք է հաստատվի արդար հավասարակշռություն (*Boddaert-ն ընդդեմ Բելգիայի*, § 39):

բ. Չափորոշիչները

191. Որոշելիս, թե արդյոք քրեական վարույթի տևողությունը ողջամիտ է եղել, թե ոչ, Դատարանը պետք է հաշվի առնի այնպիսի գործոններ, ինչպիսիք են գործի բարդությունը, դիմումատուի վարքագիծը և համապատասխան վարչական ու դատական մարմինների վարքագիծը (*König-ն ընդդեմ Գերմանիայի*, § 99, *Neumeister-ն ընդդեմ Ավստրիայի*, § 21, *Ringeisen-ն ընդդեմ Ավստրիայի*, § 110, *Pélissier-ը և Sassi-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 67, *Pedersen-ը և Baadsgaard-ն ընդդեմ Դանիայի*, § 45):

192. *Գործի բարդությունը*. այն կարող է բխել, օրինակ, մեղադրանքների թվից, վարույթում ներգրավված մարդկանց թվից, ինչպիսիք են մեղադրյալներն ու վկաները, կամ գործի միջազգային մասշտաբից (*Neumeister-ն ընդդեմ Ավստրիայի,* § 20, որտեղ վիճարկվող գործարքները հետևանքներ ունեին տարբեր երկրներում, ինչը պահանջել է Ինտերպոլի աջակցությունն ու փոխադարձ իրավական աջակցության մասին պայմանագրերի իրականացումը, և 22 անձ էր ներգրավված, որոնցից ոմանք արտերկրում էին գտնվում): Գործը կարող է նաև չափազանց բարդ լինել, եթե կասկածները կապված են «պաշտոնեական» հանցագործությունների հետ, այսինքն՝ լայնածավալ խարդախության, որում ներգրավված են տարբեր ընկերություններ ու բարդ գործարքներ, որոնք մշակված են քննչական մարմինների հսկողությունից խուսափելու համար, և պահանջում են հաշվապահական ու ֆինանսական ոլորտների փորձագետի զգալի գիտելիքներ (*C.P.-ն և այլք ընդդեմ Ֆրանսիայի,* § 30):

193. Չնայած նրան, որ գործը կարող է որոշակի բարդության լինել, Դատարանը չի կարող չպարզաբանված անգործության երկար ժամանակահատվածները համարել «ողջամիտ» (*Adiletta-ն ընդդեմ Իտալիայի,* § 17, որտեղ քննության ընդհանուր տևողությունը կազմել է տասներեք տարի հինգ ամիս՝ ներառյալ նախնական քննության հարցերով պատասխանատու դատավորին գործը փոխանցելու և մեղադրյալին ու վկաներին հարցաքննելու միջև հինգ տարվա հետաձգումը, և նախնական քննության հարցերով

պատասխանատու դատավորին գործը վերադարձնելու ժամանակի և դատաքննության համար դիմումատուների գործը նորից դատարան ներկայացնելու միջև մեկ տարի ինն ամսվա հետաձգումը):

194. Դիմումատուի վարքագիծը. 6-րդ հոդվածով դիմումատուներից չի պահանջվում ակտիվորեն համագործակցել դատական մարմինների հետ: Ոչ էլ նրանց կարող են մեղադրել ներպետական օրենսդրությամբ նրանց հասանելի իրավական պաշտպանության միջոցներից լիովին օգտվելու մեջ: Այնուամենայնիվ, նրանց վարքագիծն օբյեկտիվ փաստ է համարվում, որը չի կարող վերագրվել Պատասխանող պետությանը, և որը պետք է հաշվի առնել՝ որոշելիս, թե արդյոք վարույթի տևողությունը գերազանցում է ողջամիտ ժամկետը, թե ոչ (*Eckle-ն ընդդեմ Գերմանիայի,* § 82, որտեղ դիմումատուներն ավելի ու ավելի էին դիմում այնպիսի գործողությունների, որոնք հավանաբար կձգձգեին վարույթը, ինչպիսին է դատավորներին կանոնավոր բացարկ հայտնելը. այս գործողությունների որոշ մասը կարող էր նույնիսկ ենթադրել կանխամտածված կերպով խոչընդոտների ստեղծում):

195. Վարքագծի մեկ օրինակ, որը պետք է հաշվի առնել, դիմումատուի մտադրությունն է ձգձգել քննությունը, որտեղ սա ակնհայտ է գործի նյութերից (*I.A.-ն ընդդեմ Ֆրանսիայի,* § 121, որտեղ դիմումատուն, նախքան մի շարք լրացուցիչ քննչական միջոցառումներ պահանջելը, ի թիվս այլ բաների, սպասել էր տեղեկացվելու գործի՝ դատախազին մոտակա փոխանցման մասին):

196. Դիմումատուն չի կարող հիմնվել որպես փախստական անցկացրած ժամանակահատվածի վրա, որի ընթացքում նա փորձել է խուսափել իր սեփական երկրում արդարադատության առջև կանգնելուց: Երբ մեղադրվող անձը փախուստի է դիմում այն Պետությունից, որը հավատարիմ է օրենքի գերակայության սկզբունքին, կարելի է ենթադրել, որ իր՝ փախուստի դիմելուց հետո նա իրավունք չունի բողոքելու վարույթի ոչ ողջամիտ տևողությունից, եթե նա չի կարող տրամադրել այս կանխավարկածի հերքման բավարար պատճառներ (*Vayiç-ն ընդդեմ Թուրքիայի,* § 44):

197. Համապատասխան իշխանությունների վարքագիծը. 6-րդ հոդվածի 1-ին կետով Պայմանավորվող պետությունների վրա դրվում է իրենց դատական համակարգերն այնպես կազմակերպելու պարտականություն, որ նրանց դատարանները կարողանան բավարարել իր պահանջներից յուրաքանչյուրը (*Abdoella-ն ընդդեմ Նիդեռլանդների,* § 24, *Dobbertin-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 44):

198. Չնայած նրան, որ գործերի ժամանակավոր կուտակումը չի ներառում Պայմանավորվող պետությունների համար պատասխանատվություն՝ պայմանով, որ նրանք անհրաժեշտ արագությամբ ձեռնարկեն դատական պաշտպանության միջոցներին ուղղված գործողություններ՝ այս տեսակի բացառիկ իրավիճակը կարգավորելու համար (*Milasi-ն ընդդեմ Իտալիայի,* § 18, *Baggetta-ն ընդդեմ Իտալիայի,* § 23), իշխանությունների կողմից վկայակոչված մեծ ծանրաբեռնվածությանն ու հարցերը շտկելու համար ձեռնարկված միջոցներին Դատարանի կողմից հազվադեպ է տրվում որոշիչ կշիռ (*Eckle-ն ընդդեմ Գերմանիայի*, § 92):

199. Այն, ինչը դիմումատուի համար վտանգված է, պետք է հաշվի առնվի վարույթի տևողության ողջամտությունը գնահատելիս: Օրինակ, եթե անձը պահվում է կալանքի տակ մինչդատական վարույթի ընթացքում, ապա այս գործոնը պետք է հաշվի առնվի՝ գնահատելիս, թե արդյոք մեղադրանքի հիմնավորվածությունը որոշվել է ողջամիտ ժամկետում, թե ոչ (*Abdoella-ն ընդդեմ Նիդեռլանդների,* § 24, որտեղ փաստաթղթերը Գերագույն դատարան ուղարկելու համար պահանջվող ժամանակը երկու դեպքում գործի

քննության համար պահանջված 52 ամիսների ավելի քան 21 ամիսն է կազմել: Դատարանը գտել է, որ անգործության այդպիսի տևական ժամանակահատվածներն անընդունելի են, հատկապես՝ քանի որ մեղադրյալը գտնվել է կալանքի տակ):

3. Մի քանի օրինակ

ա. Ողջամիտ ժամկետը գերազանցվել է

- 9 տարի 7 ամիս՝ առանց ներգրավված մարդկանց թվից (35) բացի որևէ այլ առանձնակի բարդության՝ չնայած զանգվածային անկարգությունների ժամանակահատվածից հետո դատարանի բացառիկ ծանրաբեռնվածությունը կարգավորելու համար իշխանությունների ձեռնարկած միջոցներին (*Milasi-ն ընդդեմ Իտալիայի*, §§ 14-20):
- 13 տարի 4 ամիս, տարածաշրջանում քաղաքական անհանգստություններ ու դատարանների չափազանց մեծ ծանրաբեռնվածություն, Պետության կողմից դատարանների աշխատանքային պայմանները բարելավելուն ուղղված ջանքերի գործադրում միայն տարիներ հետո (*Baggetta-ն ընդդեմ Իտալիայի*, §§ 20-25):
- 5 տարի 5 ամիս 18 օր՝ ներառյալ դատավճռի հայտարարման ու պատասխանատու դատավորի կողմից ամբողջական գրավոր տարբերակի կազմման միջև ընկած 33 ամիսը՝ առանց որևէ պատշաճ կարգապահական միջոց ձեռնարկելու (*B.-ն ընդդեմ Ավստրիայի,* §§ 48-55):
- 5 տարի 11 ամիս, գործի բարդություն՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված յուրացման գործով հարցաքննվելիք մարդկանց թվի և ուսումնասիրվելիք փաստաթղթերի տեխնիկական բնույթի պատճառով՝ չնայած նրան, որ այդ վարքագիծը չէր կարող արդարացնել գործով քննությունը, որը տևել էր հինգ տարի երկու ամիս. նաև՝ իշխանություններին վերագրելի անգործության մի շարք ժամանակահատվածներ: Այսպիսով, մինչ դատաքննության փուլի տևողությունը ողջամիտ էր թվում, չէր կարելի ասել, որ գործով քննությունն իրականացվել էր պատշաճ կերպով (*Rouille-ն ընդդեմ Ֆրանսիայի,* § 29):
- 12 տարի 7 ամիս 10 օր՝ առանց որևէ առանձնակի բարդության կամ դիմումատուի՝ վարույթը ձգձգելու որևէ մարտավարության, սակայն ներառյալ վարչական դատարան հայց ներկայացնելու և հարկային մարմինների նախնական հիմնավորումները ստանալու միջև երկու տարի ինն ամսից ավելի ժամանակահատվածը (*Clinique Mozart SARL-ն ընդդեմ Ֆրանսիայի*, §§ 34-36):

բ. Ողջամիտ ժամկետը չի գերազանցվել

- 5 տարի 2 ամիս, խարդախության և կեղծ սնանկության կապակցված գործերի բարդություն՝ դիմումատուի կողմից անթիվ պահանջներով ու բողոքներով՝ ոչ բացառապես իրեն ազատ արձակելու համար, այլ նաև շահագրգիռ դատավորների մեծ մասին բացարկ հայտնելու և վարույթն այլ դատարանների իրավասությանը փոխանցելու համար (*Ringeisen-ն ընդդեմ Ավստրիայի*, § 110):
- 7 տարի 4 ամիս. այն փաստը, որ արդեն ավելի քան յոթ տարի էր անցել մեղադրանքներ ներկայացնելուց հետո՝ առանց դրանց հիմնավորվածությունը որոշող, մեղադրյալին դատապարտող կամ արդարացնող դատավճիռ

կայացնելու, անշուշտ, ցույց էր տալիս չափազանց երկար ժամանակահատված, որը, մեծ մասամբ, պետք է համարվի ողջամիտ ժամկետը գերազանցող. ավելին, 15 ամիս դատավորը չէր հարցաքննել միևնույն գործով բազմաթիվ մեղադրյալներից որևէ մեկի կամ որևէ վկայի, կամ իրականացրել որևէ այլ պարտականություն. այնուամենայնիվ, գործը հատկապես բարդ էր (մեղադրանքների և ներգրավված անձանց թիվը, միջազգային մասշտաբը, որն առաջացնում էր առանձնակի բարդություններ արտերկրում դատական աջակցություն ստանալու վերաբերյալ հարցումները կատարելիս և այլն) (*Neumeister-ն ընդդեմ Ավստրիայի*, § 21):

V. Հատուկ երաշխիքներ

Ա. Անմեղության կանխավարկածը (6-րդ հոդվածի 2-րդ կետ)

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը

«2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական իրավախախտում կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:»

1. Ապացուցման բեռը

200. Անմեղության կանխավարկածի սկզբունքն, *inter alia*, պահանջում է, որ իրենց պարտականությունները կատարելիս դատարանի անդամները քննությունը չպետք է սկսեն այն կանխակալ գաղափարով, որ մեղադրյալը կատարել է իրավախախտումը, որում մեղադրվում է. ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը, և ցանկացած կասկած մեկնաբանվում է հօգուտ մեղադրյալի: Մեղադրանքի կողմն է, որ պետք է տեղեկացնի մեղադրյալին՝ իր դեմ հարուցվելիք գործի մասին, որպեսզի վերջինս կարողանա պատշաճ կերպով նախապատրաստել ու ներկայացնել իր պաշտպանությունը, և պետք է ներկայացնի նրան մեղավոր ճանաչելու համար բավարար ապացույցներ (*Barberà-ն, Messegué-ն և Jabardo-ն ընդդեմ Իսպանիայի,* § 77, *Janosevic-ն ընդդեմ Շվեդիայի,* § 97): Անմեղության կանխավարկածը կխախտվի, եթե ապացուցման բեռը մեղադրանքի կողմից անցնի պաշտպանության կողմին (*Telfner-ն ընդդեմ Ավստրիայի,* § 15): Ապացուցման բեռը չի կարող փոխանցվել վնասի փոխհատուցման գործով վարույթում, որը հարուցվում է վարույթը կարճելու մասին վերջնական որոշում կայացվելուց հետո (*Capeau-ն ընդդեմ Բելգիայի*, § 25):

201. Քրեական պատասխանատվությունից ազատելը չի բացառում ապացուցման պակաս խիստ բեռի հիման վրա միևնույն փաստերից բխող փոխհատուցում վճարելու քաղաքացիական պատասխանատվության հաստատումը (*Ringvold-ն ընդդեմ Նորվեգիայի*, § 38, *Y-ն ընդդեմ Նորվեգիայի,* § 41, *Lundkvist-ն ընդդեմ Շվեդիայի* (որոշում)):

2. Փաստի և իրավունքի կանխավարկածը

202. Անձի՝ քրեական գործով անմեղ համարվելու իրավունքը և իրավունքը՝ պահանջելու, որ իր դեմ պնդումներն ապացուցելու բեռը կրի մեղադրանքի կողմը, բացարձակ չէ, քանի որ փաստի կամ իրավունքի կանխավարկածները գործում են յուրաքանչյուր քրեաիրավական համակարգում, և Կոնվենցիայով սկզբունքորեն արգելված չեն (*Falk-ն ընդդեմ Նիդեռլանդների* (որոշում), ավտոմեքենայի գրանցված սեփականատիրոջ նկատմամբ տուգանք նշանակելու վերաբերյալ, որը երթևեկության կանոնների խախտման պահին փաստացի վարորդը չէր եղել): Մասնավորապես, Պայմանավորվող պետությունները կարող են որոշակի պայմաններում պատիժ նշանակել, որպես այդպիսին, պարզ կամ օբյեկտիվ փաստի առնչությամբ՝ անկախ նրանից, թե դա հանցավոր մտադրության, թե անփութության արդյունք է (*Salabiaku-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 27, մաքսանենգության համար քրեական պատասխանատվության կանխավարկածի վերաբերյալ, որը բխում է թմրամիջոցներ պահելուց, *Janosevic-ն ընդդեմ Շվեդիայի*, § 100, օբյեկտիվ հիմքերի հիման վրա լրացուցիչ հարկերի նշանակման և նախքան դատարանի կողմից որոշվելը՝ դրանց հարկադիր կատարման վերաբերյալ): Այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի 2-րդ կետով Պետություններից պահանջվում է այս կանխավարկածները սահմանափակել ողջամիտ սահմաններում, որոնցով հաշվի է առնվում այն ամենի կարևորությունը, ինչը վտանգված է, և պահպանվում են պաշտպանության կողմի իրավունքները (*Salabiaku-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 28, *Radio France-ը և այլք ընդդեմ Ֆրանսիայի,* § 24, հրատարակչության տնօրենի նկատմամբ քրեական պատասխանատվության կանխավարկածի վերաբերյալ՝ ռադիո հաղորդումների ընթացքում արված վարկաբեկող հայտարարությունների համար, *Klouvi-ն ընդդեմ Ֆրանսիայի,* § 41, օրենքով հաստատված այն կանխավարկածի պատճառով չարամիտ հետապնդման մեղադրանքը պաշտպանելու անկարողության վերաբերյալ, որ ապացույցների բացակայության հետևանքով արդարացված ամբաստանյալին ներկայացված մեղադրանքը կեղծ էր):

203. Քրեական իրավունքում կանխավարկած կիրառելիս Պայմանավորվող պետություններից պահանջվում է հավասարակշռություն հաստատել այն ամենի կարևորության, ինչը վտանգված է, և պաշտպանության կողմի իրավունքների միջև. այլ կերպ ասած՝ կիրառվող միջոցները պետք է ողջամտորեն համաչափ լինեն այն օրինական նպատակին, որին հետամուտ են լինում հասնել (*Janosevic-ն ընդդեմ Շվեդիայի*, § 101, *Falk-ն ընդդեմ Նիդեռլանդների* (որոշում)):

3. 6-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառման ոլորտը

ա. Քրեական վարույթը

204. 6-րդ հոդվածի 2-րդ կետով կարգավորվում է քրեական վարույթն իր ամբողջությամբ՝ անկախ հետապնդման արդյունքից, և ոչ թե միայն մեղադրանքի էության քննությունը (տե՛ս, ի թիվս բազմաթիվ աղբյուրների, *Poncelet-ն ընդդեմ Բելգիայի,* § 50, *Minelli-ն ընդդեմ Շվեյցարիայի,* § 30, *Garycki-ն ընդդեմ Լեհաստանի*, § 68):

205. Երբ վարույթը շարունակվում է բողոքարկման կարգով, անմեղության կանխավարկածը չի դադարում կիրառվել միայն այն պատճառով, որ առաջին ատյանի վարույթի արդյունքում ամբաստանյալը դատապարտվել է (*Konstas-ն ընդդեմ Հունաստանի*, § 36):

206. Երբ մեղադրյալի մեղավորությունը պատշաճ կերպով ապացուցվում է, 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի կարող կիրառություն ունենալ մեղադրյալի բնույթի ու վարքագծի վերաբերյալ արված պնդումների առնչությամբ՝ նրան դատապարտելու գործընթացի շրջանակներում, բացառությամբ, եթե այդպիսի մեղադրանքներն այնպիսի բնույթ ու աստիճան ունեն, որ Կոնվենցիայի ինքնավար իմաստով հավասարազոր են նոր «մեղադրանք» առաջադրելուն (*Böhmer-ն ընդդեմ Գերմանիայի,* § 55, *Geerings-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 43, *Phillips-ն ընդդեմ Միացյալ Թագավորության,* § 35):

207. Այնուամենայնիվ, անձի՝ անմեղ համարվելու իրավունքը և իրավունքը՝ պահանջելու, որ իր դեմ պնդումներն ապացուցելու բեռը կրի մեղադրանքի կողմը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար դատաքննության ընդհանուր հասկացության մասն է կազմում, որը կիրառվում է դատավճռի կայացման ընթացակարգի նկատմամբ (նույն տեղում, §§ 39-40, *Grayson-ը և Barnham-ն ընդդեմ Միացյալ Թագավորության,* §§ 37 և 39):

բ. Հետագա վարույթները

208. Անմեղության կանխավարկածը նաև պաշտպանում է այն անհատներին, որոնք արդարացվել են քրեական գործով վարույթի արդյունքում, կամ ում նկատմամբ քրեական վարույթը շարունակվել է, պետական պաշտոնատար անձանց ու իշխանությունների կողմից այնպիսի վերաբերմունքից, որ կարծես թե նրանք իրականում մեղավոր են այն իրավախախտման կատարման մեջ, որի առնչությամբ նրանց մեղադրանք է առաջադրվել: Առանց պաշտպանության, որ ապահովվի արդարացման կամ կարճելու մասին որոշման նկատմամբ հարգանքը ցանկացած այլ վարույթում, կարող էր վտանգ լինել, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետի երաշխիքները դառնային տեսական ու անիրական: Քրեական վարույթի ավարտից հետո վտանգված է նաև անձի համբավը և հանրության կողմից այդ անձին ընկալելու եղանակը (*Allen-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ]*, § 94):

209. Երբ առաջանում է 6-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառելիության հարց հետագա վարույթների համատեքստում, դիմումատուն պետք է ցույց տա ավարտված քրեական վարույթի և հետագա վարույթի միջև կապի առկայություն: Այդպիսի կապի առկայությունը հավանական է, օրինակ, եթե հետագա վարույթը պահանջում է նախորդ քրեական վարույթի արդյունքի ուսումնասիրություն, և, մասնավորապես, եթե այն դատարանին պարտավորեցնում է վերլուծել քրեական գործով դատավճիռը, զբաղվել քրեական գործում առկա ապացույցների վերանայմամբ ու գնահատմամբ, գնահատել դիմումատուի մասնակցությունը քրեական մեղադրանքին հանգեցնող իրադարձությունների մի մասի կամ բոլորի մեջ, կամ մեկնաբանություն տալ դիմումատուի հնարավոր մեղավորության՝ գոյություն ունեցող նշանների վերաբերյալ (նույն տեղում, § 104):

210. Դատարանն ուսումնասիրել է 6-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառելիությունը քրեական վարույթի ավարտից հետո կայացված դատական որոշումների նկատմամբ, որոնք, *inter alia,* վերաբերում են հետևյալին՝

- նախկին մեղադրյալի՝ դատական ծախսերն ու հետապնդման իրականացումից բխող ծախսերը կրելու պարտավորությանը,
- նախկին մեղադրյալի՝ նախնական կալանքի կամ ցանկացած այլ անհարմարության համար փոխհատուցում ստանալու պահանջին, որն առաջացրել է քրեական վարույթը,

- նախկին մեղադրյալի՝ պաշտպանության կողմի կրած ծախսերի հատուցման պահանջին,
- նախկին մեղադրյալի՝ անօրինական կամ սխալ քննությամբ կամ հետապնդմամբ պատճառված վնասի փոխհատուցման պահանջին,
- տուժողին փոխհատուցում վճարելու քաղաքացիական պատասխանատվության սահմանմանը,
- ապահովագրողների դեմ դիմումատուի ներկայացրած քաղաքացիական հայցերը մերժելուն,
- երեխայի խնամքի մասին հրամանն ուժի մեջ պահելուն՝ այն բանից հետո, երբ մեղադրանքի կողմը որոշում է կայացրել երեխայի նկատմամբ բռնարարքի համար ծնողի դեմ մեղադրանքներ չներկայացնել,
- կարգապահական կամ աշխատանքից ազատելու հետ կապված հարցերին, և
- դիմումատուին սոցիալական կացարանի (բնակարանի) իրավունքից զրկելուն (տե՛ս *Allen-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 98՝ բազմաթիվ հետագա հղումներով):

4. Մինչդատական հայտարարությունները

211. 6-րդ հոդվածի 2-րդ կետն ուղղված է տվյալ վարույթի հետ սերտորեն կապված մինչդատական հայտարարություններ անելու միջոցով արդար քրեական դատաքննության խախտումը կանխելուն: Եթե չկա կամ գոյություն չի ունեցել այդպիսի վարույթ, ապա քրեական բնույթի կամ այլ դատապարտելի վարքագիծ վերագրող հայտարարություններն ավելի կապված են զրպարտության դեմ պաշտպանության ու դատարան պատշաճ մատչելիության նկատառումների հետ՝ քաղաքացիական իրավունքները որոշելու համար՝ բարձրացնելով Կոնվենցիայի 8-րդ և 6-րդ հոդվածներով սահմանված հնարավոր հարցեր (*Zollmann-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում), *Ismoilov-ը և այլք ընդդեմ Ռուսաստանի,* § 160):

212. Պետք է հիմնարար կերպով տարբերակել հայտարարությունն այն մասին, որ որևէ մեկին պարզապես կասկածում են հանցագործություն կատարելու մեջ, վերջնական մեղադրական դատավճռի բացակայության պարագայում բացահայտ արված հայտարարությունից այն մասին, որ անհատը կատարել է նշված հանցագործությունը (նույն տեղում, § 166, *Nešťák-ն ընդդեմ Սլովակիայի,* § 89): Վերջինս խախտում է անմեղության կանխավարկածը, մինչդեռ առաջին տեսակի հայտարարությունը Դատարանի կողմից ուսումնասիրված տարբեր իրավիճակներում համարվել է անառարկելի (*Garycki-ն ընդդեմ Լեհաստանի,* § 67):

213. Այն հարցը, թե արդյոք դատավորի կամ պետական իշխանության այլ մարմնի կողմից արված հայտարարությամբ խախտվում է անմեղության կանխավարկածի սկզբունքը, թե ոչ, պետք է որոշվի այն կոնկրետ հանգամանքների համատեքստում, որոնցում արվել է վիճարկվող հայտարարությունը (*Daktaras-ն ընդդեմ Լիտվայի,* § 42, *A.L.-ն ընդդեմ Գերմանիայի,* § 31):

214. Դատավորների կողմից արված հայտարարությունները ենթակա են ավելի խիստ մանրակրկիտ ուսումնասիրության, քան քննչական մարմինների կողմից արված հայտարարությունները (*Pandy-ն ընդդեմ Բելգիայի,* § 43):

215. Մեղադրյալի անմեղության վերաբերյալ կասկածները բարձրաձայնելն ընդունելի է, քանի դեռ քրեական վարույթի արդյունքում մեղադրանքի էության վերաբերյալ որոշում չի կայացվել (*Sekanina-ն ընդդեմ Ավստրիայի,* § 30): Այնուամենայնիվ, երբ արդարացումը

դառնում է վերջնական, մեղավորության վերաբերյալ ցանկացած կասկած բարձրաձայնելն անհամատեղելի է անմեղության կանխավարկածի հետ (*Rushiti-ն ընդդեմ Ավստրիայի,* § 31, *O.-ն ընդդեմ Նորվեգիայի*, § 39, *Geerings-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 49, *Paraponiaris-ն ընդդեմ Հունաստանի,* § 32):

5. Դատական մարմինների հայտարարությունները

216. Անմեղության կանխավարկածը խախտվում է, եթե քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող անձի վերաբերյալ դատական որոշումն արտացոլում է կարծիք, որ նա մեղավոր է՝ նախքան նրա մեղավորությունն օրենքին համապատասխան ապացուցված կլինի: Նույնիսկ որևիցե պաշտոնական եզրակացության բացակայության պայմաններում, դա բավարար պատճառ կարող է լինել կարծելու, որ դատարանը մեղադրյալին դիտում է որպես մեղավոր (տե՛ս, որպես առաջատար աղբյուր, *Minelli-ն ընդդեմ Շվեյցարիայի*, § 37, և, բոլորովին վերջերս, *Nerattini-ն ընդդեմ Հունաստանի,* § 23, *Didu-ն ընդդեմ Ռումինիայի,* § 41): Տրիբունալի կողմից այդպիսի կարծիք վաղաժամ արտահայտելն ինքնին անխուսափելիորեն կհակասի այս կանխավարկածին (*Nešťák-ն ընդդեմ Սլովակիայի*, § 88, *Garycki-ն ընդդեմ Լեհաստանի*, § 66):

217. 6-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթի կիրառության մեջ կարևորը նշված հայտարարությունների իրական իմաստն է, ոչ թե նրանց բառացի ձևակերպումը (*Lavents-ն ընդդեմ Լատվիայի*, § 126):

218. Այն փաստը, որ դիմումատուն ի վերջո մեղավոր է ճանաչվել, չի կարող վերացնել նրա՝ նախքան օրենքին համապատասխան մեղավորությունն ապացուցելը, անմեղ համարվելու սկզբնական իրավունքը (*Matijašević-ն ընդդեմ Սերբիայի,* § 49, *Nešťák-ն ընդդեմ Սլովակիայի*, § 90, դիմումատուների նախնական կալանքը երկարաձգելու վերաբերյալ որոշումների վերաբերյալ):

6. Պետական պաշտոնատար անձանց հայտարարությունները

219. Անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի կողմից, այլև պետական իշխանության այլ մարմինների կողմից (*Allenet de Ribemont-ն ընդդեմ Ֆրանսիայի,* § 36, *Daktaras-ն ընդդեմ Լիտվայի,* § 42, *Petyo Petkov-ն ընդդեմ Բուլղարիայի*, § 91): 6-րդ հոդվածի 2-րդ կետն արգելում է քրեական գործերով ընթացող քննությունների վերաբերյալ պետական պաշտոնատար անձանց կողմից այն հայտարարությունները, որոնք նպաստում են հանրությանը հավատալ կասկածյալի մեղավորությանը, և կանխորոշել իրավասու դատական մարմնի կողմից փաստերի գնահատումը (*Ismoilov-ը և այլք ընդդեմ Ռուսաստանի*, § 161, *Butkevičius-ն ընդդեմ Լիտվայի*, § 53):

220. Անմեղության կանխավարկածի սկզբունքը չի կանխում, որ իշխանությունները տեղեկացնեն հանրությանը քրեական գործով քննությունների ընթացքի վերաբերյալ, սակայն այն պահանջում է, որ նրանք դա անեն անհրաժեշտ հայեցողությամբ ու շրջահայացությամբ, երբ անմեղության կանխավարկածը պետք է հարգվի (*Fatullayev-ն ընդդեմ Ադրբեջանի*, § 159, *Allenet de Ribemont-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 38, *Garycki-ն ընդդեմ Լեհաստանի*, § 69):

221. Դատարանն ընդգծել է պետական պաշտոնատար անձանց կողմից իրենց հայտարարություններում բառերի ընտրության կարևորությունը՝ նախքան

դատաքննության արդյունքում իրավախախտման համար անձին մեղավոր ճանաչելը (*Daktaras-ն ընդդեմ Լիտվայի*, § 41, *Arrigo-ն և Vella-ն ընդդեմ Մալթայի* (որոշում), *Khuzhin-ը և այլք ընդդեմ Ռուսաստանի,* § 94):

7. Մամուլի անբարենպաստ արշավը

222. Ժողովրդավարական հասարակությունում մամուլի խիստ մեկնաբանությունները հանրային շահին վերաբերող գործերում երբեմն անխուսափելի են (*Viorel Burzo-ն ընդդեմ Ռումինիայի,* § 160, *Akay-ն ընդդեմ Թուրքիայի* (որոշում)):

223. Մամուլի չարակամ արշավը կարող է, այնուամենայնիվ, դատաքննության արդարության վրա բացասաբար ազդել՝ ներգործելով հանրային կարծիքի վրա և, հետևաբար, մեղադրյալի մեղավորությունը որոշող երդվյալ ատենակալների վրա (*Kuzmin-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 62): Որոշիչը ոչ թե կասկածյալի՝ քննող դատարաններից պահանջվող կանխակալության բացակայության վերաբերյալ սուբյեկտիվ ընկալումներն են, որքան էլ որ հասկանալի լինեն, այլ՝ թե արդյոք գործի կոնկրետ հանգամանքներում նրա մտավախությունները կարող են համարվել օբյեկտիվորեն արդարացված (*Włoch-ն ընդդեմ Լեհաստանի* (որոշում), *Daktaras-ն ընդդեմ Լիտվայի* (որոշում), *Priebke-ն ընդդեմ Իտալիայի* (որոշում), *Mustafa (Abu Hamza)-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում), §§ 37-40, գործը քննող դատարանի անկողմնակալության վրա մամուլի լուսաբանման ազդեցության վերաբերյալ):

224. Ազգային դատարանները, որոնք ամբողջովին կազմված են մասնագետ դատավորներից, սովորաբար, ի տարբերություն երդվյալ ատենակալների անդամների, ունենում են համապատասխան փորձ ու վերապատրաստում, որը նրանց թույլ է տալիս դիմակայել ցանկացած արտաքին ազդեցությանը (*Craxi-ն ընդդեմ Իտալիայի (թիվ 1)*, § 104, *Mircea-ն ընդդեմ Ռումինիայի,* § 75):

225. Կասկածյալների լուսանկարների հրապարակումն ինքնին չի խախտում անմեղության կանխավարկածը (*Y.B.-ն և այլք ընդդեմ Թուրքիայի,* § 47): Կասկածյալի լուսանկարը հեռուստատեսությամբ հեռարձակելը կարող է որոշակի հանգամանքներում 6-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները պահպանելու հարց բարձրացնել (*Rupa-ն ընդդեմ Ռումինիայի (թիվ 1)*, § 232):

8. Պատժամիջոցները տեղեկատվություն չտրամադրելու դեպքում

226. Անմեղության կանխավարկածը սերտորեն կապված է իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի հետ (*Heaney-ն և McGuinness-ն ընդդեմ Իռլանդիայի*, § 40):

227. Ավտոմեքենաների սեփականատերերին ներկայացվող՝ երթևեկության կանոնների ենթադրյալ խախտման պահին վարորդին նույնականացնելու պահանջը անհամատեղելի չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ (*O'Halloran-ը և Francis-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ]*):

228. Վարորդներին պարտավորեցնելը, որ սթափության վիճակի զննության ենթարկվեն կամ արյան թեստ հանձնեն, չի հակասում անմեղության կանխավարկածի սկզբունքին (*Tirado Ortiz-ը և Lozano Martin-ն ընդդեմ Իսպանիայի* (որոշում)):

Բ. Պաշտպանության կողմի իրավունքները (6-րդ հոդվածի 3-րդ կետ)

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը

«3. Քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին.

բ) բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար.

գ) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները.

ե) օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով։»

229. 6-րդ հոդվածի 3-րդ կետի՝ պաշտպանության կողմի իրավունքների վերաբերյալ պահանջները դիտարկվում են որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորվող արդար դատաքննության իրավունքի առանձնակի ասպեկտներ (*Sakhnovskiy-ն ընդդեմ Ռուսաստանի [ՄՊ]*, § 94, *Gäfgen-ն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ], § 169):

230. 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված հատուկ երաշխիքներն արդար դատաքննության հասկացության օրինակ են ներկայացնում այնպիսի բնորոշ ընթացակարգային իրավիճակների առնչությամբ, որոնք ծագում են քրեական գործերում, սակայն նրանց իրական նպատակը քրեական վարույթի, որպես ամբողջության, արդարության մշտապես ապահովումն է կամ ապահովմանը նպաստելը: 6-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված երաշխիքները, հետևաբար, ինքնին վերջնանպատակ չեն, և դրանք պետք է համապատասխանաբար մեկնաբանվեն այն գործառույթի լույսի ներքո, որը նրանք ունեն վարույթի ընդհանուր համատեքստում (*Mayzit-ն ընդդեմ Ռուսաստանի,* § 77, *Can-ն ընդդեմ Ավստրիայի*, Հանձնաժողովի զեկույց, § 48):

1. Մեղադրանքի բնույթի ու հիմքի վերաբերյալ տեղեկատվությունը (Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետ)

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետը

«3. Քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,»

ա. Ընդհանուր

231. 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի կիրառության շրջանակը պետք է գնահատվի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության ավելի ընդհանուր իրավունքի լույսի ներքո: Քրեական հարցերում մեղադրյալին առաջադրված մեղադրանքների վերաբերյալ ամբողջական, մանրամասն տեղեկատվության տրամադրումը և, հետևաբար, իրավաբանական որակումը, որ դատարանը կարող էր տվյալ հարցով տալ, կարևոր նախապայման է՝ վարույթի արդարությունն ապահովելու համար (*Pélissier-ը և Sassi-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 52, *Sejdovic-ն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ], § 90):

232. 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը կապված են նրանով, որ մեղադրանքի բնույթի ու հիմքի վերաբերյալ տեղեկացվելու իրավունքը պետք է դիտարկվի մեղադրյալի՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու իրավունքի լույսի ներքո (*Pélissier-ը և Sassi-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 54, *Dallos-ն ընդդեմ Հունգարիայի,* § 47):

բ. Մեղադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը

233. 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով նշվում է պաշտպանյալին «մեղադրանքի» մասին ծանուցելուն հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը: Իրավախախտման առանձնահատկությունները քրեաիրավական գործընթացում առանցքային դեր են խաղում այն պատճառով, որ դրանց վերհանելու պահից է, որ կասկածյալը պաշտոնապես գրավոր ծանուցվում է իրեն առաջադրված մեղադրանքների փաստական և իրավական հիմքերի մասին (*Kamasinski-ն ընդդեմ Ավստրիայի,* § 79, *Pélissier-ն և Sassi-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 51):

234. 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետը պաշտպանյալին իրավունք է տալիս տեղեկացված լինել ոչ միայն մեղադրանքի «հիմքի» մասին, այսինքն՝ այն արարքների, որոնք նա ենթադրաբար կատարել է, և որոնց վրա հիմնված է մեղադրանքը, այլև մեղադրանքի «բնույթի», այսինքն՝ այդ արարքներին տրված իրավական բնութագրի մասին (*Mattoccia-ն ընդդեմ Իտալիայի*, § 59, *Penev-ն ընդդեմ Բուլղարիայի,* §§ 33 և 42):

235. Պարտադիր չէ, որ տեղեկատվության մեջ անհրաժեշտաբար նշվեն այն ապացույցները, որոնց վրա հիմնած է մեղադրանքը (*X.-ն ընդդեմ Բելգիայի,* Հանձնաժողովի որոշում, *Collozza-ն և Rubinat-ն ընդդեմ Իտալիայի,* Հանձնաժողովի զեկույց):

236. 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով որևէ տեսակի հատուկ ձևական կողմի պահանջ չի սահմանվում այն եղանակի մասով, որով մեղադրյալը պետք է տեղեկացվի իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի ու հիմքի մասին (*Pélissier-ն և Sassi-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 53, *Drassich-ն ընդդեմ Իտալիայի,* § 34, *Giosakis-ն ընդդեմ Հունաստանի (թիվ 3)*, § 29):

237. Մեղադրյալին տեղեկացնելու պարտականությունն ամբողջովին դրված է մեղադրանքի կողմի վրա և չի կարող կատարվել պասիվ ձևով, այսինքն՝ տեղեկատվությունն առանց պաշտպանության կողմի ուշադրությանը ներկայացնելու հասանելի դարձնելու եղանակով (*Mattoccia-ն ընդդեմ Իտալիայի*, § 65, *Chichlian-ն և Ekindjian-ն ընդդեմ Ֆրանսիայի,* Հանձնաժողովի զեկույց, § 71):

238. Մեղադրյալը պետք է փաստացի ստանա տեղեկատվությունը. ստացած լինելու իրավական ենթադրությունը բավարար չէ (*C.-ն ընդդեմ Իտալիայի,* Հանձնաժողովի որոշում):

239. Եթե բողոքի առարկա իրավիճակը վերագրելի է մեղադրյալի սեփական վարքագծին, ապա վերջինս այն դիրքում չէ, որ հիմնվի պաշտպանության կողմի իրավունքների խախտման վրա (*Erdogan-ն ընդդեմ Թուրքիայի,* Հանձնաժողովի որոշում, *Campbell-ն և Fell-ն ընդդեմ Միացյալ Թագավորության,* § 96):

240. Մտավոր թերություններ ունեցող անձի դեպքում իշխանություններից պահանջվում է ձեռնարկել լրացուցիչ միջոցներ, որպեսզի անձը հնարավորություն ունենա մանրամասնորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին (*Vaudelle-ն ընդդեմ Ֆրանսիայի,* § 65):

գ. Մեղադրանքի վերաորակումը

241. Մեղադրյալին պետք է պատշաճ կերպով և ամբողջովին տեղեկացնեն մեղադրանքի ցանկացած փոփոխության, այդ թվում՝ դրա «հիմքի» փոփոխության մասին, և նրան պետք է տրամադրվեն բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ դրանց արձագանքելու և իր պաշտպանությունը ցանկացած նոր տեղեկատվության կամ ենթադրության հիման վրա կազմակերպելու համար (*Mattoccia-ն ընդդեմ Իտալիայի*, § 61, *Bäckström-ն և Andersson-ն ընդդեմ Շվեդիայի* (որոշում)):

242. Առաջադրված մեղադրանքների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ներառյալ իրավական բնութագիրը, որը կարող է ընդունվել դատարանի կողմից որոշակի հարցի առնչությամբ, պետք է տրվի կա՛մ մեղադրական եզրակացության մեջ՝ նախքան դատաքննությունը, կա՛մ առնվազն դատաքննության ընթացքում՝ այլ միջոցներով, ինչպիսիք մեղադրանքների պաշտոնական կամ անուղղակի ավելացումն են: Ջուտ հղում կատարելն այն վերացական հնարավորությանը, որ դատարանը կարող է իրավախախտման որակման առնչությամբ կատարել մեղադրանքի կողմի եզրահանգումից տարբեր եզրահանգում, ակնհայտորեն բավարար չէ (*I.H.-ը և այլք ընդդեմ Ավստրիայի,* § 34):

243. Վարույթի ընթացքում փաստերի վերաորակման դեպքում մեղադրյալին պետք է հնարավորություն տրվի գործնական և արդյունավետ կերպով ու պատշաճ ժամանակում իրականացնել իր պաշտպանության իրավունքը (*Pélissier-ն և Sassi-ն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 62, *Block-ն ընդդեմ Հունգարիայի,* § 24):

244. Իրավախախտման վերաորակումը համարվում է մեղադրյալի համար բավականաչափ կանխատեսելի, եթե այն վերաբերում է այնպիսի տարրի, որը ներհատուկ է մեղադրանքին (*De Salvador Torres-ն ընդդեմ Իսպանիայի,* § 33, *Sadak-ը և այլք ընդդեմ Թուրքիայի (թիվ 1)*, §§ 52 և 56, *Juha Nuutinen-ն ընդդեմ Ֆինլանդիայի,* § 32):

245. Մեղադրանքի մասին ծանուցելու թերությունները կարող են բողոքարկման վարույթի ընթացքում վերացվել, եթե մեղադրյալը հնարավորություն ունենա վերաձևակերպված մեղադրանքի առնչությամբ իր պաշտպանությունն իրականացնելու ավելի բարձր ատյանի դատարաններում և վիճարկելու իր դատապարտումը բոլոր համապատասխան իրավական և փաստական հանգամանքների մասով (նույն տեղում, § 33, *Dallos-ն ընդդեմ Հունգարիայի*, §§ 49-52, *Sipavičius-ն ընդդեմ Լիտվայի,* §§ 30-33, *Zhupnik-ն ընդդեմ Ուկրաինայի,* §§ 39-43, *I.H.-ն և այլք ընդդեմ Ավստրիայի*, §§ 36-38):

դ. «Մանրամասնորեն»

246. Քանի դեռ «մանրամասն» տեղեկատվության շրջանակը տարբերվում է՝ կախված յուրաքանչյուր գործի կոնկրետ հանգամանքներից, մեղադրյալին պետք է առնվազն տրամադրվի բավականաչափ տեղեկատվություն՝ լիովին հասկանալու համար իրեն առաջադրված մեղադրանքների շրջանակը, որպեսզի նախապատրաստի պատշաճ պաշտպանություն:

247. Այդ կապակցությամբ տեղեկատվության պատշաճությունը պետք է գնահատվի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի տեսանկյունից, որը յուրաքանչյուրին իրավունք է վերապահում ունենալ բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, ինչպես նաև՝ 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված ավելի ընդհանուր՝ արդար դատաքննության իրավունքի լույսի ներքո (*Mattoccia-ն ընդդեմ Իտալիայի*, § 60, *Bäckström-ը և Andersson-ն ընդդեմ Շվեդիայի* (որոշում)):

ե. Անհապաղ»

248. Տեղեկատվությունը պետք է մեղադրյալին ներկայացվի պատշաճ ժամանակին՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար, որը 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի հիմքում ընկած սկզբունքային նպատակն է (*C.-ն ընդդեմ Իտալիայի գործը*, Հանձնաժողովի որոշում, որտեղ դիմումատուին մեղադրանքների մասին ծանուցելը դատաքննությունից չորս ամիս առաջ համարվել է ընդունելի, տե՛ս, ի հակադրություն դրա, *Borisova-ն ընդդեմ Բուլղարիայի գործը*, §§ 43-45, որտեղ դիմումատուն իր պաշտպանությունն առանց դատապաշտպանի նախապատրաստելու համար ունեցել է ընդամենը երկու ժամ):

249. 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետին համապատասխանությունը քննելիս Դատարանը հաշվի է առնում «մեղադրվող» և «քրեական մեղադրանք» բառերի անկախ նշանակությունը, որը պետք է մեկնաբանվի ավելի շատ հաշվի առնելով նպատակը, այլ ոչ թե պաշտոնական իրավիճակը (*Padin Gestoso-ն ընդդեմ Իսպանիայի* (որոշում), *Casse-ն ընդդեմ Լյուքսեմբուրգի*, § 71):

զ. «Լեզուն»

250. Եթե ցույց է տրվում կամ հիմքեր կամ ենթադրելու, որ մեղադրյալն անբավարար չափով է տիրապետում այն լեզվին, որով տրված է տեղեկատվությունը, ապա համապատասխան մարմինները պետք է նրան ապահովեն թարգմանությամբ (*Brozicek-ն ընդդեմ Իտալիայի*, § 41, *Tabaï-ն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշում)):

251. Քանի որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետում չի նշվում, որ օտարերկրացի պաշտպանյալին համապատասխան տեղեկատվությունը պետք է տրամադրվի գրավոր կամ գրավոր թարգմանված, դատարանի կողմից գործածվող լեզվին անծանոթ պաշտպանյալը կարող է գործնականում հայտնվել իր համար անշահավետ իրադրության մեջ, եթե նրան չի տրամադրել նաև մեղադրական եզրակացության գրավոր թարգմանությունն իրեն հասկանալի լեզվով (*Hermi-ն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ], § 68, *Kamasinski-ն ընդդեմ Ավստրիայի*, § 79):

252. Այնուամենայնիվ, մեղադրանքների վերաբերյալ բավարար տեղեկատվությունը կարող է նաև տրամադրվել մեղադրական եզրակացության բանավոր թարգմանության միջոցով, եթե դա մեղադրյալին թույլ է տալիս նախապատրաստել իր պաշտպանությունը (նույն տեղում, § 81, *Husain-ն ընդդեմ Իտալիայի* (որոշում)):

253. Սույն դրույթով մեղադրյալի համար չի նախատեսվում դատական գործերի ամբողջական թարգմանությունն ունենալու իրավունք (*X.-ն ընդդեմ Ավստրիայի*, Հանձնաժողովի որոշում):

254. Մեղադրանքի թարգմանության հետ կապված ծախսերը պետք է հոգա պետությունը՝ համաձայն 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ե» ենթակետի, որով երաշխավորվում է թարգմանչի անվճար օգնությունից օգտվելու իրավունքը (*Luedicke-ը, Belkacem-ը and Koç-ն ընդդեմ Գերմանիայի,* § 45):

2. Պաշտպանության նախապատրաստումը (6-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետ)

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը

«3. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական իրավախախտում կատարելու մեջ, ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

...

բ) ունենալ բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար.

ա. Ընդհանուր նկատառումներ

255. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը վերաբերում է պատշաճ պաշտպանության երկու տարրերի, մասնավորապես՝ հնարավորությունների հարցին և ժամանակի հարցին: Սույն դրույթը ենթադրում է, որ մեղադրյալի կողմից նյութական պաշտպանության գործողությունները կարող են ընդգրկել այն ամենը, ինչն «անհրաժեշտ» է դատաքննությունը նախապատրաստելու համար: Մեղադրյալը պետք է ունենա իր պաշտպանությունը պատշաճ կերպով և առանց սահմանափակման կազմակերպելու հնարավորություն՝ պաշտպանության բոլոր համապատասխան փաստարկները գործը քննող դատարան ներկայացնելու և ուստի՝ գործի ելքի վրա ազդելու եղանակով (*Can-ն ընդդեմ Ավստրիայի*, Հանձնաժողովի որոշում, § 53, *Gregačević-ն ընդդեմ Խորվաթիայի*, § 51):

256. Մեղադրյալին տրված ժամանակի ու հնարավորությունների բավարարության հարցը պետք է գնահատվի յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո (*Iglin-ն ընդդեմ Ուկրաինայի,* § 65, *Galstyan-ն ընդդեմ Հայաստանի,* § 84):

բ. Բավարար ժամանակը

257. Քննարկվող 6-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետով՝ մեղադրյալին շնորհվում է պաշտպանություն՝ հապճեպ դատաքննությունից (*Kröcher-ը և Möller-ն ընդդեմ Շվեյցարիայի*, Հանձնաժողովի որոշում, *Bonzi-ն ընդդեմ Շվեյցարիայի*, Հանձնաժողովի որոշում): Չնայած այն հանգամանքին, որ կարևոր է վարույթն անցկացնել պատշաճ արագությամբ, այնուամենայնիվ դա չպետք է իրականացվի կողմերից մեկի

ընթացակարգային իրավունքների հաշվին (*OAO Neftyanaya Kompaniya Yukos-ն ընդդեմ Ռուսաստանի,* § 540):

258. Մեղադրյալի կողմից իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ ունենալու հանգամանքը գնահատելիս, պետք է հատուկ ուշադրություն դարձնել վարույթի բնույթին, ինչպես նաև գործի բարդությանն ու վարույթի համապատասխան փուլին (*Gregačević-ն ընդդեմ Խորվաթիայի*, § 51): Պետք է հաշվի առնել նաև իրավախորհրդատուի սովորական ծանրաբեռնվածությունը. այնուամենայնիվ, ոչ ողջամիտ չէ պաշտպան պահանջելը՝ նրա աշխատանքի շեշտադրման մեջ թերևս որոշ չափով փոփոխություն կատարելու համար, եթե դա անհրաժեշտ է՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հատուկ հրատապությունը (*Mattick-ն ընդդեմ Գերմանիայի* (որոշում)):

259. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետով չի պահանջվում, որ որոշակի տևողությամբ դատաքննության նախապատրաստումն ավարտվի՝ նախքան առաջին լսումը: Դատաքննությունների ընթացքը չի կարող նախապես ամբողջովին ներկայացվել գրաֆիկով, սակայն կարող է վեր հանել այնպիսի տարրեր, որոնք մինչ այդ երևան չեն եկել, և որոնք կողմերից պահանջում են լրացուցիչ նախապատրաստում (նույն տեղում):

260. Վարույթում որոշակի հանգամանքներ ի հայտ գալուց հետո պաշտպանության կողմին պետք է տրվի լրացուցիչ ժամանակ՝ իր դիրքորոշումը ճշգրտելու, պահանջ նախապատրաստելու, բողոք ներկայացնելու համար և այլն (*Miminoshvili-ն ընդդեմ Ռուսաստանի,* § 141):

Այդպիսի «հանգամանքները» կարող են ներառել փոփոխություններ մեղադրական եզրակացության մեջ (*Pélissier-ը և Sassi-ն ընդդեմ Ֆրանսիայի [ՄՊ]*, § 62), նոր ապացույցների ներկայացում մեղադրանքի կողմի կողմից (*G.B.-ն ընդդեմ Ֆրանսիայի*, §§ 60-62) կամ դատաքննության ընթացքում փորձագետի եզրակացության մեջ անսպասելի ու կտրուկ փոփոխություն (նույն տեղում, §§ 69-70):

261. Մեղադրյալից ակնկալվում է պահանջել հետաձգելու կամ երկարաձգելու լսումը, եթե թույլատրվող ժամանակի հետ կապված, հասկանալի խնդիր է առկա (*Campbell-ը և Fell-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 98, *Bäckström-ը և Andersson-ն ընդդեմ Շվեդիայի* (որոշում), *Craxi-ն ընդդեմ Իտալիայի (թիվ 1)*, § 72)՝ բացառությամբ բացառիկ դեպքերի (*Goddi-ն ընդդեմ Իտալիայի*, § 31), կամ եթե ներպետական օրենսդրության մեջ և պրակտիկայում առկա չէ այդպիսի իրավունքից օգտվելու հիմք (*Galstyan-ն ընդդեմ Հայաստանի*, § 85):

262. Որոշակի հանգամանքներում դատարանից կարող է պահանջվել հետաձգելու իր սեփական միջնորդության լսումը՝ պաշտպանության կողմին բավարար ժամանակ տրամադրելու նպատակով (*Sadak-ը և այլք ընդդեմ Թուրքիայի (թիվ 1)*, § 57, *Sakhnovskiy-ն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ], §§ 103 և 106):

263. Մեղադրյալի կողմից իր համար հասանելի բողոքարկելու իրավունքն արդյունավետորեն իրականացնելու համար ազգային դատարանները պետք է բավարար հստակությամբ նշեն այն հիմքերը, որոնց վրա նրանք կայացրել են իրենց որոշումը (*Hadjianastassiou-ն ընդդեմ Հունաստանի,* § 33): Երբ ամբողջությամբ հիմնավորված վճիռը հասանելի չէ՝ նախքան բողոք ներկայացնելու ժամկետի ավարտը, մեղադրյալին պետք է տրամադրվի բավարար տեղեկատվություն՝ հնարավորություն տալու համար ներկայացնել համապատասխան տեղեկատվությամբ համալրված բողոք (*Zoon-ն ընդդեմ Նիդեռլանդների,* §§ 40-50, *Baucher-ն ընդդեմ Ֆրանսիայի,* §§ 46-51):

264. Պետությունները պետք է ապահովեն, որ քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք հնարավորություն ունենա օգտվելու 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված երաշխիքներից: Հատկացված ժամկետի սկիզբը կամ ավարտը պարզելու պարտավորությունը դատապարտված բողոքարկողների վրա դնելը համատեղելի չէ «ջանասիրության» հետ, որը պետք է ցուցաբերվի Պայմանավորվող պետությունների կողմից՝ 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներից արդյունավետ կերպով օգտվելն ապահովելու համար (*Vacher-ն ընդդեմ Ֆրանսիայի,* § 28):

գ. Բավարար հնարավորությունները

i. Ապացույցների մատչելիությունը

265. Այն «հնարավորությունները», որոնցից պետք է օգտվի քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք, ներառում են վարույթի ընթացքում իրականացված քննության արդյունքներին՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու նպատակով ծանոթանալու հնարավորությունը (*Huseyn-ը և այլք ընդդեմ Ադրբեջանի,* § 175, *OAO Neftyanaya Kompaniya Yukos-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 538):

266. Եթե անձը կալանավորվում է նախքան դատաքննությունը, ապա «հնարավորություններ» հասկացությունը կարող է ներառել կալանավորման այնպիսի պայմաններ, ինչպես օրինակ՝ անձին կարդալու և գրելու հնարավորություն տալը՝ ուշադրությունը ողջամիտ չափով կենտրոնացնելու միջոցով (*Mayzit-ն ընդդեմ Ռուսաստանի,* § 81, *Moiseyev-ն ընդդեմ Ռուսաստանի,* § 221): Որոշիչ է այն հանգամանքը, որ և՛ մեղադրյալը, և՛ իր պաշտպանն առանց չափազանց հոգնածությունից տառապելու հնարավորություն ունենան մասնակցելու վարույթին և փաստարկներ ներկայացնելու (*Makhfi-ն ընդդեմ Ֆրանսիայի,* § 40, *Barberà-ն, Messegué-ը և Jabardo-ն ընդդեմ Իսպանիայի,* § 70):

267. Այն հնարավորությունները, որոնք պետք է շնորհվեն մեղադրյալին, սահմանափակվում են նրանցով, որոնք օգնում են կամ կարող են օգնել նրան նախապատրաստել իր պաշտպանությունը (*Padin Gestoso-ն ընդդեմ Իսպանիայի* (որոշում), *Mayzit-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 79):

268. Պարտադիր չէ, որ մեղադրյալին տրվի գործի նյութերից օգտվելու ուղղակի հնարավորություն, բավարար է, որ նրա ներկայացուցիչն իրեն տեղեկացնի գործում առկա նյութերի մասին (*Kremzow-ն ընդդեմ Ավստրիայի,* § 52): Այնուամենայնիվ, մեղադրյալի համար դատական գործի սահմանափակ մատչելիությունը չպետք է կանխի ապացույցների՝ նախքան դատաքննությունը մեղադրյալի համար հասանելի դարձվելը, և որ մեղադրյալին պետք է տրվի՝ դրանց վերաբերյալ իր դատապաշտպանի կամ բանավոր փաստարկների միջոցով մեկնաբանություններ անելու հնարավորություն (*Öcalan-ն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], § 140):

269. Այն դեպքում, երբ մեղադրյալին թույլատրվում է իրականացնել իր սեփական պաշտպանությունը, գործի նյութերից օգտվելու նրա հնարավորությունը մերժելը հավասարազոր է պաշտպանության կողմի իրավունքների խախտման (*Foucher-ն ընդդեմ Ֆրանսիայի*, §§ 33-36):

270. Պաշտպանության իրականացումը հեշտացնելու նպատակով մեղադրյալին չպետք է խոչընդոտել համապատասխան փաստաթղթերի կրկնօրինակները գործի նյութերից ստանալու և կատարված ցանկացած նշում կազմելու և օգտագործելու հարցում (*Rasmussen-ն ընդդեմ Լեհաստանի*, §§ 48-49, *Moiseyev-ն ընդդեմ Ռուսաստանի,* §§ 213-218, *Matyjek-ն ընդդեմ Լեհաստանի,* § 59, *Seleznev-ն ընդդեմ Ռուսաստանի*, §§ 64-69):

271. Գործի նյութերից օգտվելու իրավունքը բացարձակ չէ: Որոշ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել պաշտպանությունից որոշակի ապացույցներ պահելը այլ անձի հիմնարար իրավունքները պահպանելու կամ կարևոր հանրային շահ երաշխավորելու համար, ինչպիսին է օրինակ՝ ազգային անվտանգությունը և վկաներին պաշտպանելու անհրաժեշտությունը կամ էլ հանցագործության քննության ոստիկանական մեթոդների երաշխավորումը: Այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի 1-ին կետով թույլատրվում են միայն պաշտպանության կողմի իրավունքները սահմանափակող՝ խիստ անհրաժեշտ միջոցներ: Դատարանը պետք է մանրազնին ուսումնասիրի որոշումների ընդունման գործընթացը՝ ապահովելու համար, որ իր կողմից պահպանվել են՝ մրցակցության սկզբունքի վրա հիմնված վարույթ և կողմերի իրավահավասարություն ապահովելու, ինչպես նաև մեղադրյալի շահերի պաշտպանության՝ ներդրված բավարար երաշխիքներն ապահովելու պահանջները (*Natunen-ն ընդդեմ Ֆինլանդիայի,* §§ 40-41, *Dowsett-ն ընդդեմ Միացյալ Թագավորության,* §§ 42-43, *Mirilashvili-ն ընդդեմ Ռուսաստանի,* §§ 203-209):

272. Պաշտպանության կողմին այնպիսի իրեր պարունակող նյութական ապացույցներ չբացահայտելը, որոնք կարող էին հնարավորություն տալ մեղադրյալին ազատել իրեն պատժից կամ կրճատել պատիժը, կարող են համարվել պաշտպանության նախապատրաստման համար անհրաժեշտ հնարավորությունների մերժում և, հետևաբար՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետով երաշխավորված իրավունքի խախտում: Այնուամենայնիվ, մեղադրյալից կարող է ակնկալվել ներկայացնելու իր պահանջի համար որոշակի հիմքեր, իսկ ներպետական դատարաններն իրավասու են ուսումնասիրելու այդ հիմքերի վավերականությունը (*Natunen-ն ընդդեմ Ֆինլանդիայի*, § 43, *C.G.P.-ն ընդդեմ Նիդեռլանդների*, Հանձնաժողովի որոշում):

ii. Դատապաշտպանի հետ խորհրդակցությունը

273. Մեղադրյալին տրամադրվող «հնարավորությունները» ներառում են խորհրդակցություն դատապաշտպանի հետ (*Campbell-ը և Fell-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 99, *Goddi-ն ընդդեմ Իտալիայի*, § 31): Մեղադրյալի՝ իր դատապաշտպանի հետ խորհրդակցելու հնարավորությունը հիմնարար նշանակություն ունի նրա պաշտպանությունը նախապատրաստելու հարցում (*Bonzi-ն ընդդեմ Շվեյցարիայի*, Հանձնաժողովի որոշում, *Can-ն ընդդեմ Ավստրիայի*, Հանձնաժողովի որոշում, § 52):

274. 6-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը համընկնում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետի՝ իրավական աջակցություն ստանալու իրավունքի հետ (*Lanz-ն ընդդեմ Ավստրիայի,* §§ 50-53, *Öcalan-ն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ]*, § 148, *Trepashkin-ն ընդդեմ Ռուսաստանի (թիվ 2),* §§ 159-168):

3. Իրեն անձամբ կամ իրավական աջակցության միջոցով պաշտպանելու իրավունքը (6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետ)

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետը

«3. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական իրավախախտում կատարելու մեջ, ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

...

գ) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած իրավական աջակցության միջոցով, կամ իրավական աջակցության դիմաց վճարելու համար բավարար միջոցներ չունենալու դեպքում՝ ստանալ անվճար իրավական աջակցություն, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,»

275. 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետը ներառում է 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով արդար դատաքննության իրավունքի որոշակի ասպեկտներ (*Correia de Matos-ն ընդդեմ Պորտուգալիայի* (որոշում), *Foucher-ն ընդդեմ Ֆրանսիայի,* § 30): Սույն ենթակետով երաշխավորվում է, որ մեղադրվող անձի դեմ հարուցված վարույթը չանցկացվի առանց գործը պաշտպանության կողմի համար պատշաճ ներկայացնելու (*Pakelli-ն ընդդեմ Գերմանիայի,* Հանձնաժողովի զեկույց, § 84): Այն ներառում է երեք առանձին իրավունքներ՝ իրեն անձամբ պաշտպանելու, իրեն իր ընտրած իրավական պաշտպանության միջոցով պաշտպանելու և որոշակի պայմանների դեպքում՝ անվճար իրավական աջակցություն ստանալու իրավունքը (նույն տեղում, § 31):

ա. Կիրառության ոլորտը

276. Յուրաքանչյուր ոք, որին քրեական մեղադրանք է առաջադրվել, պետք է 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետով պաշտպանված լինի վարույթի բոլոր փուլերում (*Imbrioscia-ն ընդդեմ Շվեյցարիայի,* § 37): Այս պաշտպանությունը, հետևաբար, կարող է վերաբերելի դառնալ նույնիսկ նախքան գործը դատաքննության ուղարկելը և այնքանով, որքանով որ հավանական է, որ դատաքննության արդարացիությունը կոպիտ կխախտվի 6-րդ հոդվածի դրույթներին ի սկզբանե անհամապատասխանությամբ (նույն տեղում, § 36, *Öcalan-ն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], § 131, *Magee-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 41):

277. Քանի որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի և դատաքննության նախապատրաստմանն առնչվող նկատառումների միջև առկա է կապ, 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետով մեղադրյալին տրվում է վարույթի ամբողջ ընթացքում դատապաշտպանի աջակցություն և օժանդակություն ստանալու ավելի ընդհանուր իրավունք (*Can-ն ընդդեմ Ավստրիայի*, Հանձնաժողովի զեկույց, § 54):

278. Մինչդատական փուլում, այսինքն՝ նախաքննության ընթացքում, 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետը կիրառելու եղանակը կախված է տվյալ վարույթի առանձնահատկություններից ու գործի հանգամանքներից (*Brennan-ն ընդդեմ Միացյալ Թագավորության,* § 45, *Berliński-ն ընդդեմ Լեհաստանի,* § 75): Որպես կանոն, 6-րդ հոդվածով պահանջվում է, որ ոստիկանության կողմից հարցաքննության փուլից սկսած մեղադրյալին թույլատրվի օգտվել դատապաշտպանի աջակցությունից (*John Murray-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 63, *Öcalan-ն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], § 131, *Salduz-ն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], § 54, *Averill-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 59, *Brennan-ն*

ընդդեմ Միացյալ Թագավորության, § 45, *Dayanan-ն ընդդեմ Թուրքիայի*, § 31): Այս իրավունքն, այնուամենայնիվ, կարող է հիմնավոր պատճառի առկայության դեպքում ենթարկվել սահմանափակման (*Magee-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 41, *John Murray-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 63): Յուրաքանչյուր դեպքում հարցն այն է, թե արդյոք սահմանափակումն ամբողջ վարույթի լույսի ներքո մեղադրյալին զրկում է արդար դատաքննությունից, թե ոչ (նույն տեղում, *Brennan-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 45): Նույնիսկ եթե համոզիչ պատճառները կարող են բացառապես արդարացնել դատապաշտպանից օգնություն ստանալու հնարավորության մերժումը, ապա այդպիսի սահմանափակումը չպետք է անօրինականորեն խախտի մեղադրյալի՝ 6-րդ հոդվածով սահմանված իրավունքները (*Salduz-ն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], § 55):

279. Համանման ձևով 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետը վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների նկատմամբ կիրառելու եղանակը կախված է տվյալ վարույթի առանձնահատկություններից (*Pakelli-ն ընդդեմ Գերմանիայի*, Հանձնաժողովի զեկույց, § 29, *Meftah-ը և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 41): Պետք է հաշվի առնել ազգային իրավակարգի շրջանակներում իրականացվող վարույթներն ամբողջությամբ վերցրած և դրանցում վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների դերակատարումը (նույն տեղում, *Monnell-ը և Morris-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 56): Անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ բողոքարկման իրավունքի բնույթը և դրա նշանակությունը քրեական վարույթի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, վերաքննիչ դատարանի լիազորությունների շրջանակը և վերաքննիչ դատարանում դիմումատուի շահերը փաստացի ներկայացնելու և պաշտպանելու եղանակը (նույն տեղում):

բ. Իրեն անձամբ պաշտպանելը

280. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առարկան ու նպատակը՝ որպես ամբողջություն վերցրած, ցույց են տալիս, որ քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող անձն իրավունք ունի մասնակցելու լսմանը (*Zana-ն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ]*, § 68, *Monnell-ը և Morris-ն ընդդեմ Միացյալ Թագավորության,* § 58): Սերտորեն կապված լինելով այս իրավունքի հետ՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետով մեղադրյալին առաջարկվում է իրեն անձամբ պաշտպանելու հնարավորություն: Հետևաբար, որպես կանոն, 6-րդ հոդվածի պահանջներին չի հակասի, եթե մեղադրյալն ինքն իրեն ներկայացնի՝ իր սեփական կամքով, եթե արդարադատության շահերն այլ բան չեն պահանջում (*Galstyan-ն ընդդեմ Հայաստանի*, § 91):

281. Այնուամենայնիվ, իրեն անձամբ պաշտպանելու իրավունքը չի երաշխավորվում անվերապահորեն: Մեղադրյալին իրեն անձամբ պաշտպանելու հնարավորություն տալու կամ նրա համար դատապաշտպան նշանակելու հարցը գտնվում է Պայմանավորվող պետությունների հայեցողական լիազորությունների շրջանակներում, որոնք պաշտպանության կողմի իրավունքները երաշխավորելու նպատակով դրանց դատական համակարգի շրջանակներում պատշաճ միջոց ընտրելու համար առավել լավ կողմնորոշիչ են, քան Դատարանը (*Correia de Matos-ն ընդդեմ Պորտուգալիայի* (որոշում)): Այդ իսկ պատճառով ներպետական դատարաններն իրավասու են համարելու, որ արդարադատության շահերը պահանջում են դատապաշտպանի պարտադիր նշանակում (*Croissant-ն ընդդեմ Գերմանիայի*, § 27, *Lagerblom-ն ընդդեմ Շվեդիայի*, § 50): Դա ի շահ մեղադրյալի նախատեսված միջոց է՝ նրա պատշաճ պաշտպանությունն ապահովելու համար (*Correia de Matos-ն ընդդեմ Պորտուգալիայի* (որոշում)):

282. Ավելին, 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետով չի նախատեսվում պաշտպանության ցանկացած փաստարկ օգտագործելու անսահմանափակ իրավունք: Եթե մեղադրյալն ընտրում է ինքն իրեն պաշտպանելու տարբերակը, ապա նա գիտակցաբար հրաժարվում է դատապաշտպանի աջակցություն ստանալու իր իրավունքից և համարվում է, որ ունի իր պաշտպանությունն իրականացնելու եղանակի հարցում ողջամտություն ցուցաբերելու պարտականություն (*Melin-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 25): Քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող անձանց պաշտպանության իրավունքի հասկացությունը կստեղծեր գերլարվածություն, եթե ենթադրվեր, որ նրանք չէին կարող հետապնդվել, երբ այդ իրավունքն իրականացնելիս նրանք վկայի կամ քրեական վարույթում ներգրավված ցանկացած այլ անձի վերաբերյալ դիտավորյալ առաջացնեին պատժելի վարքագծի կեղծ կասկածներ (*Brandstetter-ն ընդդեմ Ավստրիայի*, § 52): Զուտ այն հնարավորությունը, որ մեղադրյալին հետագայում հետապնդում են իր պաշտպանության շրջանակներում ներկայացրած պնդումների համար, չի կարող համարվել 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետի խախտում: Տեսակետը կարող է այլ լինել, եթե, այս առնչությամբ որպես ազգային օրենսդրության կամ պրակտիկայի անտեղի խստության հետևանք, հետագա հետապնդման վտանգն այնպիսին է, որ պաշտպանյալին իրապես արգելվում է ազատորեն իրականացնել իր պաշտպանության իրավունքները (նույն տեղում, § 53):

գ. Իրավական աջակցությունը

283. Քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուրի՝ դատապաշտպանի կողմից արդյունավետորեն պաշտպանվելու իրավունքն արդար դատաքննության հիմնարար հատկանիշներից մեկն է (*Salduz-ն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], § 51): Որպես կանոն, կասկածյալին ոստիկանության կողմից արգելանքի կամ մինչդատական կալանքի տակ վերցնելու պահից պետք է տրվի իրավական աջակցությունից օգտվելու հնարավորություն (*Dayanan-ն ընդդեմ Թուրքիայի*, § 31):

Մեղադրյալի՝ քրեական գործով դատաքննությանն արդյունավետորեն մասնակցելու իրավունքը ներառում է, ընդհանուր առմամբ, ոչ միայն ներկա գտնվելու, այլև անհրաժեշտության դեպքում՝ իրավական աջակցություն ստանալու իրավունքը (*Lagerblom-ն ընդդեմ Շվեդիայի*, § 49, *Galstyan-ն ընդդեմ Հայաստանի*, § 89): Միևնույն սկզբունքով, զուտ դիմումատուի դատապաշտպանի ներկայությունը չի կարող փոխհատուցել մեղադրյալի բացակայությունը (*Zana-ն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], § 72):

284. Իրավաբանական ներկայացուցչությունից օգտվելու իրավունքը կախված չէ մեղադրյալի ներկայությունից (*Van Geyseghem ընդդեմ Բելգիայի* [ՄՊ], § 34, *Campbell-ը և Fell-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 99, *Poitrimol-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 34): Այն փաստը, որ պաշտպանյալը չի ներկայանում՝ չնայած պատշաճ կերպով հրավիրված լինելով համապատասխան մարմին, չի կարող, նույնիսկ պատճառաբանության բացակայության դեպքում, արդարացնել պաշտպանի կողմից պաշտպանվելու իրավունքից պաշտպանյալին զրկելը (*Van Geyseghem-ն ընդդեմ Բելգիայի* [ՄՊ], § 34, *Pelladoah-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 40, *Krombach-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 89, *Galstyan-ն ընդդեմ Հայաստանի*, § 89):

285. Քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի՝ իր ընտրած պաշտպանի կողմից պաշտպանվելու իրավունքը բացարձակ չէ (*Meftah-ը և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 45, *Pakelli-ն ընդդեմ Գերմանիայի*, Հանձնաժողովի զեկույց, § 31): Չնայած նրան, որ, որպես ընդհանուր կանոն, դատապաշտպան ունենալու հարցում

մեղադրյալի ընտրությունը պետք է հարգվի (*Lagerblom-ն ընդդեմ Շվեդիայի*, § 54), ազգային դատարանները կարող են չեղարկել այդ անձի ընտրությունը, եթե առկա են բավարար հիմքեր՝ պնդելու, որ դա անհրաժեշտ է արդարադատության շահերից ելնելով (*Meftah-ը և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 45, *Croissant-ն ընդդեմ Գերմանիայի*, § 29): Օրինակ, որպես մեկ ամբողջություն վերցրած վարույթի հատուկ բնույթը կարող է արդարացնել բանավոր փաստարկներ ներկայացնելու մենաշնորհը մասնագիտացված դատապաշտպաններին վերապահելը (*Meftah-ը և այլք ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ], § 47):

286. Որպեսզի իրավական աջակցություն ստանալու իրավունքը լինի գործնական ու արդյունավետ, այլ ոչ զուտ տեսական, դրա իրականացումը չպետք է պայմանավորել անհարկի ձևական պայմանների կատարմամբ. ինքնին դատարանները պետք է ապահովեն դատաքննության արդար լինելը և, համապատասխանաբար, այն պաշտպանին, որը ներկայանում է դատաքննությանը՝ մեղադրյալին նրա բացակայության պայմաններում պաշտպանելու ակնհայտ նպատակով, պետք է տրվի այդպես գործելու հնարավորություն (*Van Geyseghem-ն ընդդեմ Բելգիայի* [ՄՊ], § 33, *Pelladoah-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 41):

287. Արդար դատաքննության հետ կապված այլ իրավունքների նման մեղադրյալը հնարավորություն ունի հրաժարվելու իրավական աջակցության իր իրավունքից (*Pishchalnikov-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 77): Այնուամենայնիվ, նախքան հնարավոր կլիներ պնդել, որ մեղադրյալն իր վարքագծով անուղղակիորեն հրաժարվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված այդքան կարևոր իրավունքից, պետք է ցույց տրվի, որ նա կարող էր ողջամտորեն կանխատեսել, թե որոնք կլինեին իր վարքագծի հետևանքները: Մեղադրյալի կողմից պաշտպան հայցելու դեպքում անհրաժեշտ են լրացուցիչ երաշխիքներ, քանի որ եթե մեղադրյալը դատապաշտպան չունի, ապա նա ավելի քիչ հնարավորություն ունի տեղեկացված լինելու իր իրավունքների մասին և, որպես հետևանք, ավելի քիչ է դրանք հարգելու հավանականությունը (նույն տեղում, § 78):

դ. Անվճար իրավաբանական օգնությունը

288. 6-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված երրորդ և վերջին իրավունքի՝ անվճար իրավաբանական օգնության իրավունքի իրականացման համար անհրաժեշտ է երկու պայման:

289. Նախ՝ մեղադրյալը պետք է ապացուցի, որ իրավաբանական օգնության դիմաց վճարելու համար միջոցներ չունի: Այնուամենայնիվ, նա պարտավոր չէ ներկայացնել «որևէ կասկածից վեր» ապացույց, այլ բավական է, որ առկա լինեն այդ մասին «որոշ տեղեկություններ» կամ, այլ կերպ ասած, հնարավոր լինի պարզված համարել «հակառակն ապացուցող հստակ տեղեկությունների բացակայությունը» (*Pakelli-ն ընդդեմ Գերմանիայի*, Հանձնաժողովի զեկույց, § 34):

290. Երկրորդ՝ Պայմանավորվող պետությունները պարտավոր են անվճար իրավաբանական օգնություն տրամադրել միայն այն դեպքում, «երբ դա բխում է արդարադատության շահերից»: Դա գնահատվում է՝ ընդհանուր առմամբ հաշվի առնելով գործի հանգամանքները՝ ներառյալ ոչ միայն անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելու պահի դրությամբ առկա իրավիճակը, այլև ազգային դատարանի կողմից գործն ըստ էության լուծելու պահի դրությամբ առկա իրավիճակը (*Granger-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 46):

291. Մեղադրյալի համար անվճար իրավաբանական ներկայացուցչության ապահովման՝ արդարադատության շահերից բխելու հարցը լուծելիս Դատարանը հաշվի է առնում տարբեր չափանիշներ, այդ թվում՝ իրավախախտման ծանրությունը և համապատասխան պատժի խստության աստիճանը: Ըստ էության, այն դեպքում, երբ հնարավոր է ազատազրկում, իրավաբանական ներկայացուցչության ապահովումը բխում է արդարադատության շահերից (*Benham-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 61, *Quaranta-ն ընդդեմ Շվեյցարիայի*, § 33, *Zdravko Stanev-ն ընդդեմ Բուլղարիայի*, § 38):

292. Որպես «եթե դա է պահանջում արդարադատության շահը» ստուգման չափորոշչի լրացուցիչ պայման՝ Դատարանը դիտարկում է գործի բարդությունը (*Quaranta-ն ընդդեմ Շվեյցարիայի*, § 34, *Pham Hoang-ն ընդդեմ Ֆրանսիայի*, § 40, *Twalib-ն ընդդեմ Հունաստանի*, § 53), ինչպես նաև մեղադրյալի անձնական հանգամանքները (*Zdravko Stanev-ն ընդդեմ Բուլղարիայի*, § 38): Վերջին պահանջը դիտարկվում է հատկապես հաշվի առնելով տվյալ մեղադրյալի՝ իր գործը ներկայացնելու կարողությունը, օրինակ՝ դատավարության լեզվին չտիրապետելու և (կամ) տվյալ իրավական համակարգին ծանոթ չլինելու մասով, եթե նրան չտրամադրվեր իրավաբանական օգնություն (*Quaranta-ն ընդդեմ Շվեյցարիայի*, § 35, *Twalib-ն ընդդեմ Հունաստանի*, § 53):

293. «Արդարադատության շահերի» պահանջը կիրառելիս ստուգման չափորոշիչ է համարվում ոչ թե անվճար իրավաբանական օգնության բացակայության հետևանքով պաշտպանության կողմի ներկայացուցչությանը «իրական վնաս» հասցվելու հանգամանքը, այլ փաստաբանի օգնությունը «տվյալ հանգամանքներում արդարացված» լինելու հանգամանքը, որն առավել մեղմ չափորոշիչ է (*Artico-ն ընդդեմ Իտալիայի*, §§ 34-35, *Alimena-ն ընդդեմ Իտալիայի*, § 20):

294. Չնայած փաստաբանի և վստահորդի միջև կոնֆիդենցիալ փոխհարաբերությունների կարևորությանը՝ «իր ընտրած» փաստաբանի կողմից պաշտպանության իրավունքի նկատմամբ պարտադիր կիրառվում են որոշ սահմանափակումներ, եթե հարցը վերաբերում է անվճար իրավաբանական օգնությանը: Օրինակ՝ պաշտպանության կողմի փաստաբան նշանակելիս դատարանները պետք է հաշվի առնեն մեղադրյալի ցանկությունները, սակայն կարող են դրանք հաշվի չառնել, եթե առկա են համապատասխան ծանրակշիռ հիմքեր՝ համարելու, որ դա անհրաժեշտ է արդարադատության շահերից ելնելով (*Croissant-ն ընդդեմ Գերմանիայի*, § 29, *Lagerblom-ն ընդդեմ Շվեդիայի*, § 54): Նույն սկզբունքով, 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետը չի կարող մեկնաբանվել որպես հանրային պաշտպանին փոխարինելու իրավունք ապահովող (նույն տեղում, § 55): Ավելին, արդարադատության շահերը չեն կարող դիտարկվել որպես անվճար իրավաբանական օգնության ավտոմատ տրամադրում պահանջող, եթե մեղավոր ճանաչված անձը, առաջին դատական ատյանում օգտվելով 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննությունից, առանց հաջողության օբյեկտիվ հնարավորության՝ ցանկանում է բողոքարկել վերադաս դատական ատյան (*Monnell-ը և Morris-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 67):

ե. Գործնական և արդյունավետ իրավաբանական օգնությունը

295. 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետով ամրագրված է «գործնական և արդյունավետ» իրավաբանական օգնության իրավունքը: Սակայն պարզապես անճար իրավաբանական օգնության շրջանակներում փաստաբան նշանակելը չի ապահովում արդյունավետ օգնություն, քանի որ նշանակված փաստաբանը կարող է մահանալ, ծանր հիվանդությամբ հիվանդանալ, երկար ժամանակ ունակ չլինել իրականացնելու իր

գործունեությունը կամ խուսափել իր պարտականությունները կատարելուց (*Artico-ն ընդդեմ Իտալիայի*, § 33):

296. Արդյունավետ իրավաբանական օգնության իրավունքը ներառում է, *inter alia*, մեղադրյալի՝ իր փաստաբանի հետ կոնֆիդենցիալ հաղորդակցվելու իրավունքը: Միայն բացառիկ հանգամանքներում պետությունն իրավունք ունի սահմանափակելու անազատության մեջ գտնվող անձի և նրա փաստաբանի միջև կոնֆիդենցիալ շփումը (*Sakhnovskiy-ն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ], § 102):

Եթե փաստաբանը չի կարող հաղորդակցվել իր վստահորդի հետ և նրանից ստանալ կոնֆիդենցիալ ցուցումներ, ապա նրա օգնությունը բավարար չափով օգտակար չէ (*S.-ն ընդդեմ Շվեյցարիայի*, § 48, *Brennan-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 58): Վստահորդների և փաստաբանների միջև հարաբերությունների որևէ՝ ինչպես այդ հարաբերությունների էությունից բխող, այնպես էլ իրավական նորմերով ամրագրված սահմանափակում չպետք է խոչընդոտի արդյունավետ իրավաբանական օգնությունը, որի իրավունքն ունի մեղադրյալը (*Sakhnovskiy-ն ընդդեմ Ռուսաստանի* [ՄՊ], § 102): Մեղադրյալի և իր փաստաբանի միջև հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը (*Zagaria-ն ընդդեմ Իտալիայի*, § 36) և մեղադրյալին փաստաբանի այցելությունների թվի ու տևողության խիստ սահմանափակումը (*Öcalan-ն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], § 135) արդյունավետ օգնություն ապահովելուն ներկայացվող պահանջի լրացուցիչ հնարավոր խախտումներ են:

297. Այնուամենայնիվ, Պայմանավորվող պետությունը պատասխանատվություն չի կրում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով նշանակված կամ մեղադրյալի կողմից ընտրված փաստաբանի թերացումների համար (*Lagerblom-ն ընդդեմ Շվեդիայի*, § 56, *Kamasinski-ն ընդդեմ Ավստրիայի*, § 65): Քանի որ փաստաբանի մասնագիտությունը ենթադրում է անկախություն, պաշտպանության իրականացմանն առնչվող հարցերը լուծվում են մեղադրյալի և նրա ներկայացուցչի միջև. Պայմանավորվող պետությունից պահանջվում է միջամտել միայն այն դեպքում, երբ փաստաբանն ակնհայտ անարդյունավետ է ներկայացնում մեղադրյալի շահերը կամ երբ այդպիսի հանգամանքը բավարար չափով ներկայացվել է իր ուշադրությանը (նույն տեղում, *Imbrioscia-ն ընդդեմ Շվեյցարիայի*, § 41, *Daud-ն ընդդեմ Պորտուգալիայի*, § 38): Պետության պատասխանատվությունը կարող է ծագել այն դեպքում, երբ փաստաբանն ընդհանրապես չի պաշտպանում մեղադրյալի շահերը (*Artico-ն ընդդեմ Իտալիայի*, §§ 33 and 36) կամ երբ փաստաբանը թույլ է տալիս հիմնական ընթացակարգային պահանջի խախտում, որը չի կարող համարվել պարզապես չկշռադատված պաշտպանություն կամ թույլ փաստարկների ներկայացում (*Czekalla-ն ընդդեմ Պորտուգալիայի*, §§ 65 և 71):

4. Վկաների հարցաքննությունը (6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետ)

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետ.

> «3. Քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.
>
> ...
>
> դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու և հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,»

ա. «Վկա» եզրույթի ինքնուրույն նշանակությունը

298. Կոնվենցիայում «վկա» եզրույթն ունի «ինքնուրույն» նշանակություն՝ անկախ ներպետական օրենսդրությամբ նախատեսված դասակարգումից (*Damir Sibgatullin-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 45, *S.N.-ն ընդդեմ Շվեդիայի*, § 45): Եթե վկայի տված ցուցմունքները կարող են էական հիմք հանդիսանալ անձին մեղավոր ճանաչելու համար, ապա դրանք համարվում են մեղադրանքի կողմի ապացույց, որի նկատմամբ կիրառվում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նախատեսված երաշխիքները (*Kaste-ն և Mathisen-ն ընդդեմ Նորվեգիայի*, § 53, *Lucà-ն ընդդեմ Իտալիայի*, § 41):

299. Նշված եզրույթը վերաբերում է նույն գործով մյուս մեղադրյալներին (*Trofimov-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 37), տուժողներին (*Vladimir Romanov-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 97) և փորձագետներին (*Doorson-ն ընդդեմ Նիդեռլանդների*, §§ 81-82):

300. 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետը կարող է կիրառվել նաև փաստաթղթային ապացույցների նկատմամբ (*Mirilashvili-ն ընդդեմ Ռուսաստանի*, §§ 158-159):

բ. Վկաներին հարցաքննելու իրավունքը կամ այն իրավունքը, որ վկաները ենթարկվեն հարցաքննության

i. Ընդհանուր սկզբունքները

301. 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով ամրագրվում է այն սկզբունքը, որ մինչև մեղադրյալին մեղավոր ճանաչելը նրա դեմ առկա բոլոր ապացույցները պետք է հրապարակվեն իր ներկայությամբ, դռնբաց դատական նիստում՝ մրցակցային դատավարության սկզբունքը պահպանելու համար: Այդ սկզբունքից բացառություններ հնարավոր են, սակայն դրանք չպետք է խախտեն պաշտպանության կողմի իրավունքները, որոնցով, որպես կանոն, պահանջվում է, որ մեղադրյալին տրվի համապատասխան և պատշաճ հնարավորություն՝ վիճարկելու վկայի ցուցմունքները և հարցաքննելու նրան ցուցմունքներ տալու պահին կամ գործի քննության հետագա փուլերում (*Hümmer-ն ընդդեմ Գերմանիայի*, § 38, *Lucà-ն ընդդեմ Իտալիայի*, § 39, *Solakov-ն ընդդեմ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության,* § 57):

302. Գոյություն ունի երկու պահանջ, որը բխում է վերոնշյալ ընդհանուր սկզբունքից: Առաջին՝ վկայի չներկայանալու համար պետք է առկա լինի հարգելի պատճառ: Երկրորդ՝ եթե անձին մեղավոր ճանաչելու հիմքում բացառապես կամ հիմնականում դրվել են այն անձի ցուցմունքները, որին մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննելու կամ որը հարցաքննության չի ենթարկվել նախնական քննության կամ դատական քննության ընթացքում, ապա պաշտպանության կողմի իրավունքները կարող են սահմանափակվել այնքան, որ դա անհամատեղելի կլինի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների հետ (այսպես կոչված՝ «միակ կամ վճռորոշ կանոնը») (*Al-Khawaja-ն և Tahery-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 119):

303. Հաշվի առնելով այն տեղը, որը զբաղեցնում է արդար դատաքննության իրավունքը ժողովրդավարական հասարակության մեջ, պաշտպանության իրավունքները սահմանափակող ցանկացած միջոց պետք է լինի խիստ անհրաժեշտ: Եթե առավել քիչ սահմանափակող միջոցը կարող է բավարար լինել, ապա պետք է կիրառվի այդ միջոցը (*Van Mechelen-ը և այլք ընդդեմ Նիդեռլանդների*, § 58):

304. Դատավորի ներկայությամբ մեղադրյալի և գործի համար էական նշանակություն ունեցող ցուցմունք տվող վկայի առերեսման հնարավորությունը արդար դատաքննության կարևոր տարր է (*Taraău-ն ընդդեմ Ռումինիայի*, § 74, *Graviano-ն ընդդեմ Իտալիայի*, § 38):

ii. Վկայի ներկայությունն ապահովելու համար ողջամիտ ջանքեր գործադրելու պարտավորությունը

305. Վկայի չներկայանալու համար հարգելի պատճառի առկայության հարցը պետք է առաջնահերթ կարգով ուսումնասիրվի՝ նախքան որոշելը, թե արդյոք նրա ցուցմունքը միակն էր կամ վճռորոշ: Եթե վկան չի ներկայացել ցուցմունք տալու համար, ապա առկա է պարտավորություն՝ պարզելու, թե արդյոք նրա բացակայությունը հիմնավորված է եղել (*Al-Khawaja-ն և Tahery-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 120, *Gabrielyan-ն ընդդեմ Հայաստանի*, §§ 78, 81-84):

306. 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետով, միմյանց հետ համադրության մեջ, պահանջվում է, որ Պայմանավորվող պետությունները միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ մեղադրյալը հարցաքննի իր դեմ ցուցմունք տված վկաներին կամ որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության (*Trofimov-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 33, *Sadak-ը և այլք ընդդեմ Թուրքիայի (թիվ 1)*, § 67):

307. Եթե վկաներին հարցաքննելը կամ վկաների՝ հարցաքննության ենթարկվելը հնարավոր չէ նրանց բացակայության պատճառով, ապա իշխանությունները պետք է ողջամիտ ջանքեր գործադրեն՝ նրանց ներկայությունն ապահովելու համար (*Karpenko-ն ընդդեմ Ռուսաստանի,* § 62, *Damir Sibgatullin-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 51, *Pello-ն ընդդեմ Էստոնիայի*, § 35, *Bonev-ն ընդդեմ Բուլղարիայի*, § 43):

308. Այնուամենայնիվ, *impossibilium nulla est obligatio* (անհնարինը չի կարող լինել պարտավորություն). եթե իշխանությունները չեն կարող մեղադրվել այն բանում, որ պատշաճ քայլեր չեն ձեռնարկել, որպեսզի մեղադրյալին հնարավորություն ընձեռեն հարցաքննելու համապատասխան վկաներին, ապա վկաների բացակայությունը չի հանգեցնում հետապնդումը դադարեցնելու անհրաժեշտության (*Gossa-ն ընդդեմ Լեհաստանի*, § 55, *Haas-ն ընդդեմ Գերմանիայի* (որոշում), *Calabrò-ն ընդդեմ Իտալիայի և Գերմանիայի* (որոշում), *Ubach Mortes-ն ընդդեմ Անդորրայի* (որոշում)):

iii. Վկային լսելը մերժելու հիմնավորման պարտավորությունը

309. Թեև Դատարանի գործառույթների մեջ չի մտնում կարծիք հայտնելն այն մասին, թե որքանով է ներկայացված ապացույցը առնչվում գործին, սակայն վկային հարցաքննելը կամ անձին որպես վկա կանչելը մերժելու հիմնավորման բացակայությունը կարող է հանգեցնել պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակմանը, ինչն անհամատեղելի է արդար դատաքննության երաշխիքների հետ (*Popov-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 188, *Bocos-Cuesta-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 72, *Wierzbicki-ն ընդդեմ Լեհաստանի*, § 45, *Vidal-ն ընդդեմ Բելգիայի*, § 34):

iv. Վկաների՝ դատարանում բանավոր ձևով չներկայացված ցուցմունքների վրա հիմնվելը

310. Որոշ հանգամանքներում կարող է անհրաժեշտ լինել հղում կատարել նախնական քննության փուլում տրված ցուցմունքներին (*Lucà-ն ընդդեմ Իտալիայի*, § 40), օրինակ՝ այն դեպքում, երբ վկան մահացել է (*Mika-ն ընդդեմ Շվեդիայի* (որոշում), § 37, *Ferrantelli-ն և Santangelo-ն ընդդեմ Իտալիայի*, § 52) կամ օգտվել է լռություն պահպանելու իրավունքից (*Vidgen-ն ընդդեմ Նիդեռլանդների,* § 47, *Sofri-ն և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում), *Craxi-ն ընդդեմ Իտալիայի (թիվ 1)*, § 86) կամ երբ վկայի ներկայությունն ապահովելու համար իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցներն արդյունավետ չեն եղել (*Mirilashvili-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 217):

311. Հաշվի առնելով այն, որ վկայի բացակայությունը բացասաբար է ազդում պաշտպանության կողմի իրավունքների վրա, եթե վկային չեն հարցաքննել գործի քննության նախորդ փուլերից որևէ մեկում, ապա դատարանում անձամբ տրված ցուցմունքների փոխարեն վկաների գրավոր ցուցմունքներն օգտագործելը պետք է լինի ծայրահեղ միջոց (*Al-Khawaja-ն և Tahery-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 125):

312. Առանձնակի ուշադրությամբ պետք է քննվեն այն ցուցմունքները, որոնք ստացվել են այնպիսի պայմաններում, երբ պաշտպանության կողմի իրավունքները Կոնվենցիայով առհասարակ պահանջվող չափով չեն կարող ապահովվել (*S.N.-ն ընդդեմ Շվեդիայի*, § 53, *Doorson-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 76):

313. Եթե երկու կողմերը հարգելի պատճառով հնարավորություն չեն ունեցել հարցաքննելու վկային, ապա ներպետական դատարանը կարող է քննել այդպիսի վկայի կողմից նախնական քննության ընթացքում տրված ցուցմունքները, եթե դրանք հաստատվում են այլ ապացույցներով (*Mirilashvili-ն ընդդեմ Ռուսաստանի*, § 217, *Scheper-ն ընդդեմ Նիդեռլանդների* (որոշում), *Calabrò-ն ընդդեմ Իտալիայի և Գերմանիայի* (որոշում), *Ferrantelli-ն և Santangelo-ն ընդդեմ Իտալիայի*, § 52):

314. 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով միայն պահանջվում է գործը քննող դատարանում ցուցմունք չտված վկաներին խաչաձև հարցաքննել այն դեպքում, երբ այդպիսի ցուցմունքները հիմնական կամ վճռորոշ դեր են ունեցել մեղավորությունը հաստատելու մեջ (*Kok-ն ընդդեմ Նիդեռլանդների* (որոշում), *Krasniki-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության*, § 79):

315. Նույնիսկ եթե ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույցն է մեղադրյալի դեմ, ապա այն որպես ապացույց ճանաչելն ինքնըստինքյան չի հանգեցնի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտմանը: Այնուամենայնիվ, այն փաստը, որ անձին մեղավոր ճանաչելը բացառապես կամ զգալիորեն հիմնված է բացակայող վկայի ցուցմունքների վրա, շատ կարևոր գործոն է, որի կշիռը պետք է որոշվի, և որի համար անհրաժեշտ կլինեն հակակշռող բավարար գործոններ, այդ թվում՝ հուսալի ընթացակարգային երաշխիքների առկայություն: Ցանկացած դեպքում հարցն այն է, թե արդյոք առկա են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ կտան արդարացի և պատշաճ գնահատել այդ ցուցմունքների հավաստիությունը՝ դրանք որպես ապացույց ճանաչելու համար: Սա թույլ կտա, որ անձին դատապարտելու մասին որոշումը հիմնված լինի այդ ցուցմունքների վրա միայն այն դեպքում, երբ դրանք բավականաչափ հավաստի լինեն՝ հաշվի առնելով գործի համար դրանց կարևորությունը (*Al-Khawaja-ն և Tahery-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 147):

v. Անանուն վկաները

316. Թեև վկաների ինքնությունը գաղտնի պահելու և նրանց բացակայության հետ կապված խնդիրները նույնը չեն, սակայն դրանց միջև տարբերությունը սկզբունքային չէ, քանի որ երկուսն էլ հնարավոր անբարենպաստ հետևանքներ են առաջացնում մեղադրյալի համար: Հիմնական սկզբունքն այն է, որ քրեական դատավարության ժամանակ մեղադրյալը պետք է հնարավորություն ունենա արդյունավետ կերպով վիճարկելու իր դեմ տրված ցուցմունքները (*Al-Khawaja-ն և Tahery-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], § 127):

317. Անանուն վկաների ցուցմունքներն անձին մեղավոր ճանաչելը հիմնավորելու համար օգտագործելը ոչ բոլոր դեպքերում է հակասում Կոնվենցիային (*Doorson-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 69, *Van Mechelen-ը և այլք ընդդեմ Նիդեռլանդների*, § 52, *Krasniki-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության*, § 76):

318. Թեև 6-րդ հոդվածով ուղղակիորեն չի պահանջվում հաշվի առնել վկաների շահերը, այնուամենայնիվ, կարող են վտանգվել նրանց կյանքը, ազատությունը կամ անձեռնմխելիությունը, ինչպես նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված՝ նրանց շահերը: Պայմանավորվող պետությունները պետք է իրենց քրեական դատավարությունը կազմակերպեն այնպես, որ վկաների շահերը անհիմն վտանգի չենթարկվեն: Հետևաբար, արդար դատաքննության սկզբունքներով պահանջվում է, որ համապատասխան դեպքերում հավասարակշռություն պահպանվի պաշտպանության կողմի և ցուցմունք տալու համար հրավիրված վկաների կամ տուժողների շահերի միջև (*Doorson-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 70, *Van Mechelen-ը և այլք ընդդեմ Նիդեռլանդների*, § 53):

319. Ազգային իշխանությունները պետք է ներկայացնեն համապատասխան և բավարար հիմնավորումներ՝ որոշ վկաների ինքնությունը գաղտնի պահելու համար (*Doorson-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 71, *Visser-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 47, *Sapunarescu-ն ընդդեմ Գերմանիայի* (որոշում), *Dzelili-ն ընդդեմ Գերմանիայի* (որոշում)):

320. Այն դեպքում, երբ գաղտնի է պահվում մեղադրանքի կողմի վկաների ինքնությունը, պաշտպանության կողմը կարող է բախվել դժվարությունների, որոնք, որպես կանոն, չպետք է առաջանան քրեական դատավարությունում: Նման դեպքերում դատական մարմինների կողմից պահպանվող ընթացակարգերը պետք է բավարար կերպով հակակշռեն այն դժվարություններին, որոնց բախվում է պաշտպանության կողմը (*Doorson-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 72, *Van Mechelen-ը և այլք ընդդեմ Նիդեռլանդների*, § 54, *Haas-ն ընդդեմ Գերմանիայի* (որոշում)):

321. Մասնավորապես, դիմումատուն պետք է հնարավորություն ունենա ստուգելու անանուն վկաների հուսալիությունը (*Birutis-ը և այլք ընդդեմ Լիտվայի*, § 29, *Van Mechelen-ը և այլք ընդդեմ Նիդեռլանդների*, §§ 59 և 62, *Kostovski-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 42):

322. Բացի այդ, երբ գնահատվում է, թե արդյոք անանուն վկաների հարցաքննության ժամանակ պահպանված ընթացակարգերը բավարար կերպով հակակշռում են այն դժվարություններին, որոնց հետ բախվում է պաշտպանության կողմը, անհրաժեշտ է պատշաճ կերպով հաշվի առնել, թե որքանով են անանուն վկայի կողմից տրված ցուցմունքները վճռորոշ եղել դիմումատուին մեղավոր ճանաչելու համար: Եթե այդպիսի ցուցմունքներն որևէ առումով վճռորոշ չեն եղել, ապա պաշտպանության կողմը բախվել է ավելի քիչ դժվարությունների (*Kok-ն ընդդեմ Նիդեռլանդների* (որոշում), *Krasniki-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության*, § 79):

vi. Սեռական ոտնձգությունների վերաբերյալ գործերով վկաները

323. Սեռական բնույթի իրավախախտումների հետ կապված քրեական գործերը հաճախ ծանր փորձություն են համարվում տուժողի համար, մասնավորապես այն դեպքում, երբ վերջինս ստիպված է առերես հարցաքննվել մեղադրյալի հետ: Այդպիսի առանձնահատկություններն ավելի ակնառու են, երբ գործում ներգրավված է անչափահաս: Երբ գնահատվում է, թե արդյոք այդպիսի գործի քննության ժամանակ ապահովվել է մեղադրյալի արդար դատաքննության իրավունքը, հարկավոր է հաշվի առնել ենթադրյալ տուժողի անձնական կյանքը հարգելու իրավունքը: Ուստի, սեռական ոտնձգությունների հետ կապված քրեական գործերի շրջանակներում որոշակի միջոցներ կարող են ձեռնարկվել տուժողին պաշտպանելու նպատակով՝ պայմանով, որ այդպիսի միջոցները համատեղելի լինեն պաշտպանության կողմի իրավունքների համարժեք և արդյունավետ իրականացման հետ: Պաշտպանության կողմի իրավունքներն ապահովելիս դատական մարմիններից կարող է պահանջվել ձեռնարկել միջոցներ, որոնք հակակշռում են այն դժվարություններին, որոնց բախվում է պաշտպանության կողմը (*Aigner-ն ընդդեմ Ավստրիայի*, § 37, *D.-ն ընդդեմ Ֆինլանդիայի,* § 43, *F-ն և M-ն ընդդեմ Ֆինլանդիայի*, § 58, *Accardi-ն և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում), *S.N.-ն ընդդեմ Շվեդիայի*, § 47, *Vronchenko-ն ընդդեմ Էստոնիայի*, § 56):

324. Հաշվի առնելով սեռական ոտնձգությունների հետ կապված քրեական գործերի առանձնահատկությունները՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի մեկնաբանությունից չի կարող հետևել, որ բոլոր դեպքերում մեղադրյալը կամ նրա պաշտպանը պետք է հնարավորություն ունենան հարցեր տալու խաչաձև հարցաքննության միջոցով կամ այլ կերպ (*S.N.-ն ընդդեմ Շվեդիայի*, § 52, *W.S.-ն ընդդեմ Լեհաստանի*, § 55):

325. Մեղադրյալը պետք է հնարավորություն ունենա հետևելու վկաների վարքագծին հարցաքննության ընթացքում և վիճարկելու նրանց ցուցմունքներն ու արժանահավատությունը (*Bocos-Cuesta-ն ընդդեմ Նիդեռլանդների*, § 71, *P.S.-ն ընդդեմ Գերմանիայի*, § 26, *Accardi-ն և այլք ընդդեմ Իտալիայի* (որոշում), *S.N.-ն ընդդեմ Շվեդիայի*, § 52):

326. Վկաների ցուցմունքների տեսագրությունը դիտելը չի կարող ինքնին համարվել պաշտպանության կողմի իրավունքների բավարար պաշտպանություն, եթե իշխանությունները հնարավորություն չեն ընձեռել հարցեր ուղղել ցուցմունք տվող անձին (*D.-ն ընդդեմ Ֆինլանդիայի*, § 50, *A.L.-ն ընդդեմ Ֆինլանդիայի*, § 41):

vii. Վկաներին իրենց ցուցմունքների դիմաց առաջարկվող առավելությունները

327. Անձեռնմխելիության կամ այլ առավելությունների դիմաց վկաների ցուցմունքներն օգտագործելը ծանր հանցագործությունների դեմ ներպետական իշխանությունների պայքարի կարևոր գործիք է: Այնուամենայնիվ, այդպիսի ցուցմունքների օգտագործումը կարող է վտանգել մեղադրյալի նկատմամբ քրեական գործի արդարությունը և առաջացնել նուրբ հարցեր, քանի որ այդպիսի ցուցմունքները, իրենց բնույթով, ենթակա են մանիպուլյացիայի և կարող են տրվել դրանց դիմաց առաջարկվող առավելություններն ստանալու համար կամ վրեժխնդրությունից ելնելով: Հետևաբար, հարկավոր է հաշվի առնել նաև այդպիսի ցուցմունքների հնարավոր երկակի բնույթը և այն ռիսկը, որ անձը կարող է մեղադրվել և մեղավոր ճանաչվել չստուգված այնպիսի պնդումների հիման վրա, որոնք կարող են անկողմնակալ չլինել: Այնուամենայնիվ, այդպիսի ցուցմունքների

օգտագործումը ինքնին բավարար չէ՝ գործի քննությունը ոչ արդար համարելու համար (*Cornelis-ն ընդդեմ Նիդեռլանդների* (որոշում), հաջորդող հղումների հետ միասին):

viii. Ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքները

328. 6-րդ հոդվածի 1-ին կետը և 3-րդ կետի «դ» ենթակետը պարունակում են մեղադրյալի նկատմամբ քրեական գործի քննության ընթացքում ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքները չօգտագործելու կանխավարկած: Ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքների օգտագործումը բացառելն արդարացված է նաև այն դեպքում, երբ ցուցմունքը կարող է համարվել պաշտպանության կողմի շահերից բխող (*Thomas-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* (որոշում)):

ix. Պաշտպանության համար անձանց որպես վկա կանչելու իրավունքը

